

ՀԱՄԱԿՐԹԱԿԱՆ ԿՈՄՍՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՒՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ
Դ. ՏԱՐԻ 1965 8
ՕԳՈՍՏՈՍ

پاكين
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية
 مدير المسؤول
 السيد اوتين كارنيك قزائجيان

PAKINE
 REVUE MENSUELLE
 LITTÉRAIRE & ARTISTIQUE
 Propriétaire
 Dr. A. KAZANDJIAN

բ Ա Գ Ի Ն
 ԱՄՍԱԳԻՐ
 ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
 ԵՒ ԱՐԹԻՆՍՅԵ

ՎԱՐՈՑ ԽՐԱԳԻՐ
 Կ. ՍԱՍՈՒՆԻ
 ԽՐԱԳԻՐՆԵՐ
 ԵԳ. ՊՅՍԱՃԵԱՆ, Պ. ՍՆԱՊԵԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ
 ԱՆԳԱՄՆԵՐ
 Ե. ԳԵՂԱՐԳ
 Տ. ՈՍԿՈՆԻ
 Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
 Վ. ՕՇԱԿԱՆ

ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 ED. BOYADJIAN
 B.P. 1153, BEYROUTH-LIBAN
 Հեռագրային քիւ. 252786/14

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ

- Յ. ՇԻՐԱԶ
- Յ. ԶՈՐԵՑԻ
- Հ. ՅՈՎՍԵՓԵԱՆ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ
- Ա. ԳԱԽՕՆԷ
- ՇԱՀՊԱՆ
- Ա. ԵՐԿԱԹ
- Ղ. ԺԻՐԱՅԻՐ
- Բ. ՆԱԻԱՍԱՐԻԵԱՆ
- Վ. ԳԼՈՐԳԵԱՆ
- Բ. ՓԱՓԱՋԵԱՆ
- Հ. ԹԱՄՐԱՋԵԱՆ
- Ե. ՊՕՑԱՃԵԱՆ
- Պ. ՍՆԱՊԵԱՆ
-
- ՆՇՄԱՐՆԵՐ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Էլ ո՞ւր էք փախչում, խելագար ջրեր,
Մեր մի բուն հողն էլ ծով ծարաւ թողած, -
Դարձէք, հս վազէք, որ դարձնէք ամեն
Թէկուզ հայրենի մի խեղճ ջրազաց:

Այս, անմիտ ջրեր, ո՞ւր էք շտապում,
Մի՞թէ կարօտ եմ ովկիաճները ձեզ, -
Դարձէք... Սեւանը ձեզ է պապական,
Կանչում Մահարա անապատի պէս...:

Էլ ո՞վ մեր Հայոց լեզուով մոնչայ,
Դարձէք, որ Արաբան հայերէն հասի,
Տուն դարձէք, Հայեր, որ հողն էլ սուն գայ՝
Մասիսն էլ նորէն հայերէն խօսի:


Ծով չէ, շղարշուած տնդունդն է հեռուն,
Ձեզ կը կլամի, հայրենի ջրեր,
Դարձէք, ծովանայ թող Հայոց առուն,
Կամ ջնջուէք, ով չար անկատագրեր...:

Յ.

Ով Հայոց լեզուի տարբ սերմացաններ,
Ե՞րբ պիտի Արագն հայերէն հասի,
Ե՞րբ պիտի ելնենք Արարատն ի վեր,
Ե՞րբ պիտի Մասիսն հայերէն խօսի:

Յ. ՇԻՐԱԶ

(Անտիպ)



Յ. ՁՈՐԵՑԻ

Ս Ի Ր Ո Յ Հ Ի Թ Ի Ռ Ը

- Պիտի բարձրանա՛ս... ըտե՛, պիտի յաղթե՛ս... կը արամարանեմ, կը հաւատամ թէ՛ այո՛...:

Բարեկամի մը ինքնաշարժով՝ կէս-գիշերէն քիչ ետք եկած էր ու գետեղման աշխատանքով այնքա՛ն կլանուած՝ որ սիկաբէթի գոյութիւնն իսկ մտցած էր երկար ժամանակ:

Նոր աւարտած գործը վերջ կու տայ մոռացումին: Կը վառէ ամերիկեան սիկաբէթ մը, ծուխը կարծես ուտելով ներս կը քաշէ, եւ, ոռնդերէն դուրս հանելով, կ'աւելցնէ:

- Բայց դարձեալ դո՛ւն գիտեա... նայի՛ր, վերջի վայրկեանին յամառութիւնը չըտնէ՛... չթոփլ չընե՛ս... կը հասկնա՛ս, չթոփլ չընե՛ս... կէշմի՛շոյ կը թաղեմ... Յաւաութ կ'ընեմ քեզ...:

Քաղաքէն բաւական հեռու, ծառերով եզերուած դաշտի մը մէջտեղ, այսպէս, մտերիմ լրջութեամբ խօսողը Մուրէնն է:

Կարծես մտիկ ընողն ալ՝ «Աստղիկ»ը:

Ազուոր է, գեղեցիկ հասակ ունի Աստղիկը ու կեցուածք: Հիմա, վաղ առաւօտուն, խաղաղութեան եւ լուսնալուսնով մութին մէջ, խորհրդաւոր գրաւչութիւն մըն ալ աւելցած է իր սլացիկ ձեւին վրայ:

- Կը բարձրանա՛ս, Աստղիկ... այո՛, կը բարձրանա՛ս... - վստահութիւն ներշնչող մեղմ շարժումներով կը խօսի դարձեալ Մուրէն, ու քաջալիքող շոյանքներ կու տայ՝ Աստղիկի կողին:

Յետոյ, կը հեռանայ քիչ մը, կը կռթնի շորքած ծառի մը բունին, ազահորէն ծխելով կը դիտէ զայն այնպէս,

ինչպէս մարդ աչքերը տալու աստիճան կը նայի զինք հասկցող սրտակիցի մը, որ պիտի մեկնի քիչ վերջ:

Արդէն, Մուրէնին կը թուի թէ Աստղիկ շատ լաւ կը հասկնայ զինք, օրտակից է իրեն:

Նոյնի՛նկ՝ Մուրէն յաճախ կը սիրէ հաւատալ թէ Աստղիկ կը ճաննայ իր տառապանքը, թէ հարազատ է իրեն, գիտէ՛ պատմութիւնը...:

Այո՛, գիտէ՛: Աստղիկը դիտութիւն է արդէն:

Եւ յետոյ՝ դիւերնե՛ր լուսցուցած են միտքին:

Միտքին լաւ ու զէշ օրեր անցուցած: Մուրէն՝ միայն միտք ու քրտինք չէ թափած Աստղիկին վրայ:

Թափած է նաեւ հողի՛ն: Հաւատացէք: Երբեմն հողի՛ով մտածած է: Մտածումին ալ՝ հաւատք ու սիրտ խառնած:

Ուրեմն, Բնական է որ՝ այլեւս գետեղուած եւ մեկնելու, բարձրանալու պատրաստ Աստղիկ-հրթիռը այնպէս թուի Մուրէնին՝ թէ մաս մը ունի իր հոգիէն, էութենէն:

Այնպէս կը թուի թէ ժիւյ վեռնի երեսակայած զընկեր մեքենայինն պէս մտերիմ է ու գիտէ ամէն բան:

Երիտասարդ ուսանողը՝ իր յարատեւ աշխատանքով, անպայման յաջողելու ճիգով, անքուն անցուցած գիշերներով, ինչե՛ր ըսած կամ ըսել ուզած է Աստղիկ-հրթիռին, որուն թռչելու կարողութիւնը՝ միայն քիմիական բաղադրութիւններով չէ որ գոյացուցած է Մուրէն:

Մէրն ալ մեծ բաժին ունի աշխատանքին մէջ:

Գիտական ձախող փորձերէ յուսահատած, այլեւս չաշխատող միտքը սէրէն խթանուած է միշտ, նոր հոանդով, նոր արամարանութեամբ գործի լծուած, նոր բաղադրութիւններ յայցած, ճակտի եւ ուղեղի ջրախնէ թագած՝ գոյութիւն ու թռչելու կարողութիւն տալու Աստղիկ-Հրթիռին:

Ահա, երկաթեայ պատուանդանին վրայ, անուան սկզբնատառ սեւ ՎԱ մը ճակտին, գեղաձեւ ու արծաթագոյն գոյութիւն մըն է Հիմա ան: Գիտականով եւ հոգեկանով բաղադրուած կարողութիւն մըն է թռչիչը, որ ելեկարական կոճակի մը ճնշումին կը սպասէ՝ պարզ-րիէն կայծ աննելու, պայթելու, բարձրութիւն մը նուաճելու:

Մտքէ, հոգիէ եւ սէրէ ստեղծուած՝ մետաղեայ զերթուած մըն է Աստղիկ-Հրթիռը: Իսկական թռչիչ ունեցող բանաստեղծութիւն մը, որուն հեղինակը, Սուրէն, ԽԽԲԻԻ շշիկ մը ճնկած, պաղուկ հոլին դէմ ճակատ տաքուցած, ռովանթիք բանաստեղծի մը պէս նստած է Հիմա, Հրթիռէն զիջ հետու, ժայռի մը վրայ:

Ձեռքը՝ ծնոտին, ալքերը՝ ճամբուն, կը սպասէ...

Ուսուցիչներ, դասընկերներ, դասընկերուհիներ պիտի գան, բարեկամներ, թղթակիցներ պիտի գան՝ Աստղիկին թռչիչը գիտելու:

Ձով խաղաղութիւնը աւելի կը քաղցրանայ եւ արտայտնորու ազուր կը դառնա՝ կը դաշնակորուի:

Սուրէն կը սպասէ...

Կը սպասէ...

Այսպէս, երբ Մայիս է, երբ Տէրիանական մթնշաղ է ամէն կողմ, որքա՞ն լու է ճակատը հոլին տալ եւ սպասե՛լ...

Որքա՞ն լու է սպասելու գեղեցկութիւնը սիրելի,

Մանուանդ՝

Սպասողներուն մէջ սիրելի մը ունեցած ըլլալու երջանիկ թախի՛ծը սպրիւ...

- Գիտի դա՞յ արդեօք...

Արեւուն առաջին շողերը արդէն ճամբայ ելած են...

Ի՞նչ ետք շատե՛ր պիտի գան՝ Աստղիկին յաղթական թռչիչը կամ... Եստուր ըլլալը գիտելու:

Իր հոգիին դիտելիքը, Շուշանը, պիտի դա՞յ արդեօք...

Բոլորին ներկայութիւնը խտորէն պարտադրուած է փոքրիկութիւն կողմէ: Պէտք է դա՞յ:

- Բայց ինչո՞րք յաճախ մարիքուհիի պէս բան մը կը կարծէ յօրինող Շուշան փափկասունը... կրնայ արժէք չըտալ պարտադրանքին ու չգալ... ուր մնաց որ ըլլալիքը Վարդանանց՝ պատերազմ չէ արդէն... - Ինչո՞րքն՝ կը՞ գըւարճանայ Սուրէն:

Չէ՛, շիտակը՝ գուարճանալ կը փորձէ:

Բայց կը ձախողի:

- Կրնայ չգալ... Շուշան կ'ստէ՞ զիս, գիտե՛մ... չի՞ դար... գիտե՛մ...

Ճակտին կրակը սրածին կը թափի:

Երիտասարդը կը զգայ, կ'այրի, ու լայն կը բանայ կուրծքը՝ առաջին ճառագայթներուն առջեւէն փախչող մեղմ հովին դէմ:

Կրակը չի մալեր: Կը տարածուի: Մերոյ, յուզումի քաղցրորէն այրող բոցերով կը համակէ Սուրէնին էութիւնը եւ կը վերացնէ զայն...

Սուրէն՝ հեռացող մութին պէս, ինչն էրմէ կը բացակայի Հիմա, կ'երթայ եւրագի գլորաներուն ու կը յիշէ իր առաջին հանդիպումը Շուշանին...

Յ՞

Կը յիշէ...

Ձմեռը, Կիրակի օր մըն էր:

Լիսնէի զարդարուած սրահին մէջ ուսանողական հուաքոյթ կար: Յարգելի Հիւրեր ալ եկած էին:

Այդ օր աքե՛ւն ալ Կիրակի էր, ցուրտ օդին մէջէն քաջուկ ու պայծառ կը մաղուէր՝ աւելի քաղցրացնելով գուրդը մընապոյ հաղաւազէ պահած թէր:

Սրանք չէցուն էր երկուսն ուսանողներով:

Գեղարուեստական յանպարաստից էա միջազգային յայտագիր մը՝ առաւել կամ նուազ գեղեցկութեամբ կը ճոխանար:

Մտիերն ու խանդավառ բացազանչութիւնները ոչինչով կրնային հետաքրքրել եւ ներս քաշել Սուրէնը:

Ան, բակին մէջ, ինքզինք արեւուն տուած, ծառի մը բունին ներքեւ, դադարեալ սիկարէթ մը կը խնդրէր ու կը մըտածէր... շմտածելու մասին: Բայց ինչն էր կը մտածէր, ինքն ալ չէր ուզեր գիտնալ: Արեւուն տակ, մանուկի նման, պարզապէս կը զուարճանար ուղեղին հետ:

Ուրախ էր: Իր խօսքով՝ նիլամ տեղը:

Օրը կիրակի, արեւը կիրակի, ահա կիրակի աղջիկ մըն ալ, որ իրենց դասարանի բարեկերտ բայց շատախօս Գոհարիկին հետ ներս կը մտնէ բակի դռնէն:

Պիտի անցնին առջեւէն: Կը նայի...

Անծանօթ աղջիկը ի՞նչ գեղեցիկ է...

Իրաւ, ի՞նչ գեղեցիկ է... երփնեւորեղ ու փայլուն սաւլընիր-քարքի մը փախած ըլլայ կարծես...

Մտեցան:

- Բարե՛ւ, Սուրէն... - զուարթօրէն ըսաւ Գոհարիկ:

Օ՛, ո՛չ, այս անծանօթուհին մարդ չէ... գեղեցիկ է...

Արեւուն տակ կեցած ուսանողը կարծես մոռցաւ լսել ըսրեւը:

Գեղեցիկին հանդէպ սքանչացումը կ'աւելնար տակաւ եւ ի՛ր անձն իսկ մոռցընել կու տար իրեն...

Բոլորը գիտեն: Սուրէնին սիրտը յարգելի կոպտութիւն մը ունի: Աղջիկներուն դէմ փխրուն չէ երբեք:

Բայց այս անծանօթուհին վիպային գեղեցկութիւնը փրօքց դայն...

Նայուածքին հանդիպած նայուածք մը՝ աղուորին ցուե ծովն աչքերէն՝ ահա, առաջին սիրոյ առաջին խարխիւր իջաւ, մխուեցաւ՝ այլեւս փխրուն սրբ-

տին խորը: Եւ այս ամէնը՝ քսաներորդ դարու արագութեամբ... սքանչացում մը, նայուածքի հանդիպում մը, խաբի՛սի մը...

- Բարե՛ւ ըսի, Սուրէն...

- Հը՛... հա՛... այո՛... բարե՛ւ, Գոհարիկ, - ուշքի եկաւ Սուրէն - բարե՛ւ, բարե՛ւ...

- Սուրէ՛ն, գիտես, - շատախօսութեան դարկ տալ սկսաւ Գոհարիկ, - ընկերուհիս, անցեալ տարի հիւանդութեան պատճառով, չորս-հինգ ամիս դպրոցէն հեռու մնաց: Բժշկական լուրջ ինամք ներու ենթարկուեցաւ, ու հիմա, վերջնականապէս առողջ է՝ ինձմէ-քեզմէ աւելի: Անչուտ, ուսումը կէս չի ձգուիր: Բայց պաքալարեայի դասարանը եօյն դպրոցին մէջ կրկնելը մարդուս սրտին կը մեծնայ: Այդպէս չէ՞, Սուրէ՛ն, ես ալ իրաւունք տուի իրեն: Երէկ եկաւ պարոն Պետրոսեանին ըով եւ արձանագրուեցաւ: Վաղուրնէ սկսեալ մեր դասընկերուհին պիտի ըլլայ...

Յետոյ, դառնալով նորեկին՝

- Սուրէ՛նն է, - աւելցուց ուրախ արամադրութեամբ, - մեր դասարանի սիրուած... խնթերէն...

Նոր դասընկերուհին ժպտեցաւ՝ շատ լուրջ քաղաքավարութենէ զատ ուրիշ ոչինչ զնելով ժպիտին մէջ:

«Սիրուած խնթեր»՝ այլեւս սիրով «չիմարացած», փոխադարձեց ժպիտը՝ ...ժպտիլ չկարենալով...

Գոհարիկ տակաւին պիտի շարունակէր շատախօսութիւնը (եւ Սուրէն կ'ուզէր որ շարունակէր...) բայց սրահէն լսուող խանդավառ աղմուկը հետաքրքրութիւն արթնցուց իր մէջ: Աղջիկները սկսան քաշել դէպի սրահ:

Գեղեցիկ ուսանողուհին, շատ անտեսանելի ու նայլօն թելով կապած էր կարծես Սուրէնը:

Ինք չէր երթար անոնց ետեւէն: Ան կը քաշէր գինը:

Թեւը կը պրկուէր, բայց չէր փրթեր: Ան քեզի բան...

Պարխիւր չէր բաւեր կարծես, այս թեւն ալ աւելցաւ: Գոնէ նայլօն չըլլար...

Սուրէն, ինքզինք զսպող գինովի մը պէս, արդէն սկսած էր քալել անոնց ետեւէն...

- Այսքան ալ գեղեցկութիւն կ'ըլլայ եղբր... - մտքէն ըսաւ, եւ, ինքն ալ չգիտցաւ թէ ինչպէ՞ս, քայլերը արագացուց, մօտեցաւ ուսանողուհիներուն:

Ձըրա՛ծ բանն էր: Ըրա՛ւ: Անկասկած՝ Նայլօն թելին ծայրը ուղեղին հասած էր...

Ու կողորդը շատ չորցած ըլլալուն, շատ տգեղ ձայնով հարցուց.

- Ձըսիր, Գոհարիկ, ընկերուհիիդ անունը ի՞նչ է...

Կեցան: Գոհարիկ՝ մտերմօրէն, երգիծող ժըպիտ մը գծեց այտերուն վրայ եւ դուրսը շարժեց՝ «Նո՛ւ» կը հասկնամ...» ըսելու ձեռով:

Իսկ ընկերուհին իբր թէ չլսեց. իբր թէ ուսանողներու աղմուկով հետաքրքրուած էր ու կը շարունակէր ներս նայիլ:

- Շուշան, անունդ կը հարցնէ, ըսէ իրեն թէ Շուշան է անունդ... - խօսեցաւ վերջապէս Գոհարիկ ու աչքերը թարթեց շարճնի արագութեամբ:

Նորեկ ուսանողուհին հոգեպէս վերաւորուեցաւ կարծես այս գաւեշտէն, շատ լրջացաւ.

- Ձե՛մ ըսեր... - ըսաւ զսպուած բարկութեամբ ու քալեց:

Սուրէն նո՛ր լսեց անոր ձայնը: Պէթհովէնի երաժշտութենէն աւելի քաղցր կը հնչէր ականջին...

Բայց խօսքը որքա՛ն կծու էր եւ սո՛ւր:

- Ձե՛մ ըսեր: Հոգ չէ: Սուրէն շուտով վշտանալ:

Այնքան կը սիրէր, որ որոշեց չվճշտանալ իբրեք:

Սրահի մուտքին, եբք դարձեալ մօտեցաւ անոր, պարզապէս վշտացած ըլլալը յայտնելու համար, «քերթեց» այսպէս.

- Շուշան... շատ աղուոր անուն է... Շուշան... ո՞վ որուն գեղեցկու-

թիւնը գողցած է... զո՛ւն՝ իր, թէ ինք՞ չու...

Աղջիկը երբեք կարեւորութիւն չտուաւ խօսքին եւ սկսաւ դիտել բնժը, ուր Մաքրուհի մը հնդկերէն կ'երգէր՝ հասուն համարձակութեամբ: Սխալը ո՞վ պիտի հասկնար...

Սուրէն այլեւս կ'ուզէր խօսքի բռնել Շուշանը: Բայց ի՞նչ խօսէր ի վերջոյ... պատասխանել չուզողին ի՞նչ ըսել...

Աւելի մօտեցաւ աղջկան:

Ի՞նչ ըսել... ի՞նչ հարցնել... ի՞նչ հարցնել... Հա՛... այո՛.

- Պիտի ըսէիր թէ ո՞վ է գողը... Եբք հարցուց, ձայնին մէջ՝ խստութեան նմանող բան մըն ալ կը դողար կարծես:

- Ձե՛մ գիտեր, պարո՛ն ոտիկան... - շտապեց պատասխանել Շուշան՝ լրջութիւն հրամայող փոստ նայուածք մը նետելով ուսանողին:

Յետոյ, հետացաւ քիչ մը:

Տղան կը շարունակէր չվշտանալ: Եւ արդէն ինչու վշտանար: Զարտուութիւնը իրմէ էր: Ներսէն, կը զայրանար ի՛ր անձին՝ այս ապիկար մօտեցումին համար:

- Սուրէ՛ն, անփորձ, անխելք Սուրէն, - մտքէն կը յանդիմանէր ինքզինք, - այն ի՞նչ հովուերգակ խօսքեր արտասանեցիր եւ ուրկէ՞ որ գող փրնտուելու ելար...

Շուշան՝ Գոհարիկի ականջին փրսփրոսաց: Միտսին սկսան յառաջանալ սըրուհին խորը:

Նայլօն թելը պրկուեցաւ դարձեալ...

Սուրէն, ընկերներէն մէկուն հետ խօսելու պատրուակով, գնաց կեցաւ իրենց ետեւ:

Սկսաւ՝ յայտագիրէն աւելի, Շուշանի շարժումներուն հետեւիլ եւ դիտել աղջկան վիղը երկար ու գեղեցիկ՝ գարնջուրի գաւաթին պէս:

Հաւաքոյթէն վերջն ալ, բազը, Սուրէն հեռու չմնաց ուսանողուհիէն, որ բորովին անտարբեր կրեւոյթ մը առած՝ դրան նայելով կը սպասէր: Գոհարիկ պէտք է կշտանար շուրջը դիտելէ. իբր

Թէ դո՛րժ ունէր... ուսուցչուհիներէն մէկուն ըսելի՛ք ունէր...

- Յայտագիրը լա՞ւ էր... - Հարցուց Սուրէն՝ ձայնը քաղցրացնել ջանալով:

- Է՛, թիչ լաւ չէր, - եղաւ Շուշանին անտարբեր պատասխանը:

- Գալիք հաւաքոյթին քեզ ալ բեմ կը հանենք:

- Օ՛ր...
- Ի՞նչ լիզուով կ'երգես, Շուշան:

- Ես չեմ երգեր, կը պարեմ՝, կը հասկնա՞ս, կը պարեմ՝...

«Գազանուհին քիչ մը ընտելացաւ», մտածեց Սուրէն եւ ուրախութեամբ հարցուց.

- Կը պարեմ՝, աւելի՛ լաւ... Ի՞նչ կը պարես...

- «Եօկա՛ն»:
Կարճ ու կտրուկ պատասխանեց ուսանողուհին, ու շեշտակի նայուածքով ըսել ուզեց - ա՛ն քեզի պար...

Տղուն ուրախութիւնը անհետացաւ: Նոր զուարթացած արամադրութեան վրայ՝ կարծես Գանդէսի շուրջ թափեցաւ մոխրոտ:

Բայց շուրջը որ ընդհատուի խօսակցութիւնը.

- «Եօկա՛ն» կարծեմ հնդկական է, կարծեմ այսպէս է - գեղեցիկ ֆիւլիւր մը, յետոյ՝ հնդիկ խորհողներու պէս ծայրպատիկ նստիլ, ափերը ծունկերուն վրայ բանալ, այդպէս անշարժանալ, եւ, խոր լուսութեան մէջ, Եօկա փիլիսոփային պէս, երեւակայութեամբ՝ հնդիկ կրօնական պարեր պարելով, Եօկայական իմաստասիրութեան աշխարհահայեացքներէն եղրակացութիւններ հանել... - արագ-արագ խօսեցաւ Սուրէն:

- Ընչդ այդպէս, - հաստատեց աղջիկը՝ առանց իրեն նայելու:

- Բայց այս երկարատեւ պարը բեմական չէ, Շուշան:

- Կը սխալուի, բեմական չըլլալու ոչ մէկ պատճառ ունի:

- Բայց երեւակայութեամբ պարուող պարերը ինչպէ՞ս կարելի է դիտել:

- Երեւակայելով, - անհամակրութեամբ պատասխանեց ան, յետոյ՝ ուրի-

շի մը հետ խօսակցող Գոհարիկին մօտեցաւ, ու մեկնեցան:

Այդ դիւիւր, Սուրէն մի քանի շիշ գարեջուր խմեց, դաւաթը ափերուն մէջ ունենալու վայելքով գինովցաւ, եւ, մինչեւ ուշ ատեն «Եօկա» պարեց՝ հօկայական իմաստասիրութեան մասին առանց մտածելու սակայն:

Իր մտածումներուն ռակի շղթան Շուշանի վրին շուրջ կը դառնար...

Ի՞նչ

Յաջորդ օրերուն ալ, նորեկ ուսանողուհին համար, անհանդուրժելի շղթայ մը եղաւ Սուրէն:

Միշտ աղջկան շուրջ կը դառնար, խօսակցելու միշտ նոր նիւթ կը ստեղծէր, բայց ան՝ բառով մը, կը ծրարէր նիւթը եւ անշարունակելի կը դարձնէր զայն:

Սուրէնին սէրը կ'աւելնար տակաւ, սրտի սրտի, հողի իմաստ կ'ըլլար:

Բայց Շուշանին անտարբերութիւնը կը շարունակէր չզակսիլ ու տառապեցընել սիրազատ ուսանողը:

Կան աղջիկներ, որոնք կը սիրեն, բայց իրենց կնոջական հոգեբանութեան հնազանդ՝ կեղծ անտարբերութիւն մը... կը կեղծեն եւ ըսած կ'ըլլան արդէն - կը սիրեմ քեզ, Կարապետ, կամ Կիրակո՛ս... մի՛ քաշուիք, մօտեցիր, զիրար հասկընանք, ես պատրաստ եմ...

Շուշան այդ աղջիկներէն չէր սահային:

Ան իսկապէ՛ս չէր սիրեր: Ասելու-թիւն մը անշուշտ շունչը այս աղուն նըկատմամբ: Այլ, պարզապէս, չէր սիրեր...

Զսիրուող Սուրէն, խեղճ Սուրէն, ապիկա՛ր Սուրէն, դո՛ւն ինչո՞ւ կը սիրես...

Մի՛ հարցնէք: Պատասխան չկայ: Ի՛նչն ալ չի գիտեր թէ ինչո՞ւ կը սիրէ...

Գիտցածը սա է միայն՝ թէ կը սիրէ՛, առանց սիրոյ չի կրնար ապրիլ այլ եւս: Իր սիրոյն իմաստը կեանք է, կեանքին իմաստը՝ սէր...

Դասընկերներն ու պատընկերուհիները, բոլորն ալ, գիտէին այլեւս թէ ինչ պիտի սիրով մը կը սիրէ Սուրէն:

Գիտէին նաեւ թէ՛ այս հոյակապ սիրոյն հանդէսը, քացի չոր, լեղի անտարբերաբնէն, ուրիշ ոչինչ ունի Շուշան: Համակրելի տղայ է Սուրէն. եղբայրօրէն սիրելի բոլոր դասընկեր-դասընկերուհիներուն, որոնք յաճախ կը մեղադրէին նորեկ դեղուհին՝ վշտացնող անտարբերութեան համար:

— Սա ազուր սպտանան ուրկէ՞ պէլա կիսա Սուրէնին, ու կ'ըսէր դասարանի գայիւններէն Հրայրը:

«Տարօրինակարան» Միքայէլը կ'սուսէր:

Ս. — Անպիտանուհին վիլաքիմէ շինուած է կարծես... ճաթելիք բան է, այսօրոն անտարբերութիւն ո՞ր... Իրական աւետարանին մէջ գրուած է...

Ֆարեսիտա կտաընկերուհի մը, էլիզ, կը մտածէր:

Ս. — Անսիրտ աղջիկ, այսօրն ալ չ'ըլլար... զոնէ անմեղ համակրութիւն մը ցուցադրէր ու քիչ մը մեղմացնէր տղուն տառապանքը...

Իսկ փոքրամարմին Նուպարը կ'եղբայրացնէր՝ փանր աչքերը Շուշանին ետեւէն պնդացնելով:

— Այո աղջիկը Շուշիկ չէ, փուշիկ է...

Իրա՛ւ, Շուշիկը փոշիկ էր:

Արհամարհանքի՛ շափ սուր իր անտարբերութիւնը, օրէ օր, աւելի՛ կը տառապեցնէր հէփ տղան, որ եթէ երկու հարիւր յիստոն տարի առաջ ապրէր ու եթէ ախպէտ աքանջիւթօրէն սիրէր, անկասկած՝ «կու հաքնէր մագդէմ, կու հաքնէր ջալմ, կ'էրթար աւ ման գու քար վանքիդն մէկէլ»:

Սուրէն դարձաւ դաւան է սակայն: Իր տառապանքը մեղմացնելու համար, յաճախ Շանրոյին այլեւայլ գրօսարաններ ման կու դարձ պրօպէն բացակայ կայնելով:

Այս ընթացքը եթէ շարունակուէր՝ պատկարէան կրնար վշտանալ, քէնոտիլ, ու, Շուշանին պէս, հետա մնալ...

Սնդամ մը, կէսօրուան դաղարին, երբ ընթերցարահին քովէն կ'անցնէր, պատուհանէն լսեց Շուշանին ձայնը:

Յետոյ՝ Գահարիկինն ալ:

Ընթերցարահին մէջ միայն իրենք կային, չ'ըջօրէն կը խօսէին:

— Այո՛, գիտե՛մ, Սուրէն կը տառապի... քայց թո՛նջ կրնամ ընել, անկեղծ կը խօսիմ քեզ քրքրքր գինք, Գահարիկ, ինչպէ՞ս կ'ուզեց որ մեղմացնեմ իր տառապանքը... սիրողի դե՞ր խաղամ, այս մէկը անկարելի է...

Շուշան իր մասին կը խօսէր...

Ս. — Աէքը ներեց իրեն՝ պատուհանին տակ դաղտաղողի մտիկ ընելու սխալ արարքը:

— Դերտատնութիւն ընելու մասին չէ որ կը խօսիմ, Շուշան, պարզապէս կը հարցնեմ թէ ինչո՞րչեւ սիրէր Սուրէնը, չ'սիրուելիք տղայ չէ՞, կը տառապի մեղք է...

— Դո՛ւն սիրէ:

— Եթէ դիս սիրէր՝ ինչո՞ւ չէ... — Ժողովարարը Գահարիկ:

— Հասկա իր սեւորակ տղեղութիւնը...

Ս. — Ի՞նչ, եղբր է իր տգեղութեան, արմարիկի ինքնակեցը, ո՛րչա գիտած ես, Սուրէնին տգեղութիւնը առնական վաշտութիւն մը ունի: Գեղեցիկ գեղեցկութիւնը կ'ունենայ է, Շուշան, Այր ըստօրոք գեղեցիկ տգեղութիւն մը պէտք է ունենայ գիտե՞ս...

Ս. — Ի՞նչ պիտցած սա է որ շատ հասարակ երեստարդ մըն է Սուրէն, նոյնիսկ՝ անմիտ ըլլալ կը թուի: Նայուածքը՝ փոքրացային, — հոգեկանը՝ անհրապօր: Երեստարդ մը գնահատելի՛ չլա նորք վե՛ր պէտք է ունենայ: Բաղդատէ Սուրէնը միևս աղոց-հետ: Օրինակ՝ վշտահին ու գրգռան, փնջ աղուր շնորհ ունի ան: Յետոյ՝ Գեղան մը, ապագային մեծ երաժշտագետ մը կրնայ ըլլալ: Դո՛ւն ինձ մէ՛ լաւ նշխարն է: Անորանը կը քանդակէ, նստակէր կը նկարէ: Տիպարներ կ'ուտում նստակէր: Ժողովարարը կ'ըսէ: Գահարիկ:

բիկ, Սուրբէնը, որպէս երիտասարդ, ի՞նչ շնորհ ունի, ի՞նչ կ'ընէ: Ես բռնմ-
քախաղը լաւ կը պարէ, Փիլիբո խածնե-
րով կը ծխէ, ինքնաշարժ վարձել կը սի-
րէ, պլօքին հոգի կու տայ...

Սուրբն այլեւս մտիկ ընել չուզեց:
Աւելին՝ աւելորդ մանրամասնութիւն ճը
պիտի ըլլար: Պէտք չունէր գիտնալու:

Սկսաւ քաշել:
Ներաշխարհին մէջ՝ հոգեկան երկ-
բարջութի մը նախափոթորիկը կը սաստ-
կանար կարծե՛հ. եւ աստանում կու տար
քայլերուն:

Ո՛րք կ'երթար, .. ինչո՞ւ կ'երթար...

Քնքն ալ չէր գիտեր:

Կը քաշէր միայն:

Քիչ ետք անդրադարձաւ, որ դուրս
երթ՝ էր լիւտի չըջարակէն ու բաւական
հեռացած անկէ:

Պի հեցապ, ..
Նայեցաւ ետեւ, լիւտի պատկանելի
չէնքին, որոնք լրջախոհ երեսոյթը կա՛մք,
չնո՛րհ, արուեստ կը ներշնչէր, եւ, ար-
ժանիքներու հին հռոմէական տաճարին
սպաւորակութիւնը կը ձգէր զինք գիտողին
վրայ:

Սկսաւ քաշել դարձեալ:

Ինք վառէ չէ, չի՛ քերթեր: Գեղամ
չէ, չի՛ նուազեր: Վարդան չէ, չի՛ քան-
դակեր: Ընկերները շնորհ ունին, ար-
ուեստ ունին, կը նկարեն, կ'ուսումնա-
սիրեն, կ'երգեն: Արժանիքներու տաճա-
րը երկնց տեղն է...

Պի նոք շնորհ չունի՛, արժանիք չունի՛:

Կը սիրէ, չի՛ սիրուիր...

Պի որք գաւկի յատուկ՝ հեռու մնալու
զգացում մը որոշում գտնաւ կ'ուզէր
մտքին, մէջ...

Սի շնորհակէր քաշել՝ Փիլիբո խած-
նեղով ու Շուշանին խօսքը յիշելով:

Սի Սուրբն հասարակ է, անմիտ է...

Ի՞նչ շնորհ ունի, ի՞նչ կ'ընէ...

Սի ներխառնութի իր բուն գատողու-
թիւնը սալի մը վերածուկացաւ կարծես:
Մանր մուրճի մը հարուածներն են, որ
հարցում վերջան ու կը ձայնակցին Շու-
շանին.

Սի Սուրբն շնորհ ունի...

Սի ի՞նչ կրնա ընել...

Սի ի՞նչ կ'ընես...

Սուրբն հարուածները կ'իջնէին ու
կ'իջնէին, աւելի՛ արագ, աւելի՛ թափով:
Տրա՛ւ: Ինք շնորհ չունէ՞ր: Գնահա-
տելի բան մը չէ՞ր կրնար ընել:

Ինքզինք կը պրպտէր՝ շնորհալի բան
զտնելու յամառ ճիգով:

Սուրբը կ'իջնէր, Սուրբն կը շարու-
նակէր պրպտել՝ ասանց յուսահատելու:
Ձէ՛, թնդիկը զատ լաւ կը նանչնայ ան-
չուշտ: Ձի՛ հաւատար թէ շնորհ չունի:
Փիլիբո կը խօսէր, պլօք կը խօսէր, ա-
յոկ բայց եթէ քեզ կրնո՛յ բան մը ընել:
Գնահատելի, հոյակա՛պ բան մը: Կրնա՛յ
ընել:

Ու պիտի ընէ՛:

Ի՞նչ:

Ուսանողը կը քաշէր, կը քաշէր...
կարծես ճամփուած էր: Թէ պիտի հասնի
տեղ մը, ուր կը արուի զի՞նչին պատաս-
խանը:

Կը հուստար թէ պիտի հանգիպի
բանի մը՝ առուսր, հրաշալի՛ բանի մը,
ուրկէ կարելի պիտի ըլլար գիտակցիլ իր
ընելիքին:

Ձէր թափաւեր արեմն: Այլ, կ'եր-
թար...

Ժամերը վ'անցնէին...

Բայց Սուրբն կ'երթար ..

Գիշերը սկսած էր:

Գիտացը՝ սիրուն աստղ մը իրե՛ն
համար այսպէս շատ կը փայլէր...

Սուրբն նայեցաւ աստղին...

Մանուկ օրերուն, ամբան գիշերնե-
րը, անկողինն մէջ, կուսակի վրայ պառ-
կած, որքա՛ն դիտած էր աստղերը, եւ,
անոնց՝ շողուն դեղեցկութենէն աւելի,
բարձրութիւնը տիրած...

Պի Պարիկ երեւցող այս նոյն աստղերը,
մանուկ օրերու իր երջանիկ տգիտու-
թեամբ՝ պրպտիկ էին անչուշտ... որքա՛ն
փոփոցած էր անոնցմէ դոնէ հատ մը
ուսմանը կարճ տարասին պղտիկ գրպա-
նին՝ մէջ: Եւ, յաճախ, երկու մատիտով,
դրամ հանելու պէս՝ հանել աստղիկը ու
ցոյց տալ տակնկից՝ ընկերուհիներուն...

Մանկական այս սէրն ու փափաքը չէի՞ն, որ հետագային աւելի՛ սաստկացան, զարգացան եւ փոխուեցան՝ դառնալով տիեզերագիտական, հրթիռագիտական ընդունակութիւն մը իր դաստիարակեան մէջ: Ի՞նք գիտէ, թէ ինչի՛ր կարգացած է, ինչի՛ր ուսումնասիրած տիեզերքի եւ հրթիռներու առնչութեամբ:

Իր հրթիռագէտ ըլլալուն չափ դրա՜դէտ չէ՛ Վահէն:

Տիեզերքի մասին իր դիտցածին չափ երա՜շտութիւն չի գիտեր Գեղամ:

Վարդան՝ մարմարին, կաւին կրնա՛յ մարդկային հասակ, գէ՛մք ու ձեւ տալ: Ունի՛:

Սուրէն, գիտցածին վստահելով, կը հաւատայ, թէ իր մարդին մէջ, աւելի՛ն ունի ինք: Կրնայ թռչելու կարողութիւն տալ... երկաթի՛ն:

Իրա՛ւ կ'ըսէ Շուշան.— Անմիտ Սուրէն...

Այո՛, անմիտ Սուրէն, հասարակ, անարժան Սուրէն: Ինչպէ՞՞ս մինչեւ հի՛մա չէր անդրադարձած իր արժանիքին...

Այլեւս պէտք չունէր քալելու: Մօտեցող քաֆսին կեցուց, վերագարձաւ տուն, եւ նոյն գիշերն իսկ սկսաւ դորձի:

Հրթիռին նախագիծն ու նկարը գը՜ծեց, անունը գրաւ «Աստղիկ»

և

Այլեւս բոլորովին փոխուած էր Սուրէն:

Լիւտին մէջ, գաղաբի պահերուն, ընկերներէն հետու կը մնար, ուսանողներուն հետ խօսքի չէր բռնուեր, Շուշանին երբէ՛ք չէր մօտենար:

Անկիւն մը կ'անյայտանար, քէնտա՜ծ սքաւալորէլային հետ կը հաշտուէր սերտելով: Կամ՝ պլոսխը ձեռքերուն մէջ առած, Աստղիկի մասին կը մտածէր երկա՛ր, երկա՛ր...

Արձակուելէ վերջ՝ լիւտի բակին մէջ անտնա՛լ, յետոյ՝ ինքնաշա՞րժ վարձել, կամ պլօ՞ք խաղալ, շերտալ ու ման գալ կազինօնիրը՞ն մէ մէկ...

Այս բոլորը առաջ էին:

Հիմա, լիւտէն շիտակ առնու:

Ու, զոց գրան ետեւ՝ մտածո՛ւմ, աշխատա՛նք, փո՛րձ, ձախողութի՛ւն, զարբո՛յթ, յարատեւելու ճի՛գ եւ յաղողելու վճռականութի՛ւն...

Այս բոլորը՝ Աստղիկ հրթիռին հա՜մար, մինչեւ ուշ գիշեր, երբեմն՝ մինչեւ առաւօտ:

Գիւրին չէ: Մետաղին թռչելու կարողութիւն տալը՝ մարմարին ձեւ տալ չէ... Ի՞նք գիտէ միայն թէ ի՞նչ է, ի՞նչ անել դժուարութիւններ ունի...

Եթէ քնացած ըլլար, աստու շատ կանուխ կ'արթննար, աչք մը կը նետէր դիշերուն ձախողած կամ յուսադրիչ աշխատանքին վրայ, ընկի՛քէ մասին նոր որոշումներ կ'արձանագրէր մտքին մէջ, յետոյ՝ օրուն դասերը կը սերտէր ու կը շտապէր լիւտ:

Ձէ, այլեւս բոլորովին փոխուած էր Սուրէն:

Դասընկեր-դասընկերուհիները կը գիտակցէին ասոր: Նախկին մարդասօս Սուրէնը չէր այլեւս: Լիւտին մէջ միշտ խոհուն ու խիստ լուրջ երեւոյթ մը ունէր՝ պատմութեան դասախօս մեթը Այվազեանին պէս:

Շուշանը միշտ խօսքի բռնող սիրա՜վառ տղան չէր ուզեր խօսքի բռնուիլ որեւէ՛ մէկուն հետ:

Ձէր կատակեր, չէր... տառապիք: Ինքն իր մէջ ամփոփուած՝ խոկումներուն անձնատուր կ'ըլլար:

Կը դարձանային թէ Շուշանով երբեք չի հետաքրքրուիր ան:

Սղջի՛վը, իրա՛ւ, չէր սիրեր զինք: Գոհ էր այս ընթացքէն:

Բայց ինչո՞վ կլանուած է այս աը՜ղան, կարեւոր բան մը ըլլալ կը թուի: Կարծիքներ կ'առնէ փրօփէն, արգիւնքներ կը հաղորդէ, թեւադրութիւններ կ'ընդունի, յաճախ տարակարծիք կը գտնուի, կը վիճի, կը փաստէ, չէ՛, լուրջ զործի մը լծուած է...

Ի՞նչ կը չինէ սակայն...

Հարցնողը՝ «յետոյ կ'իմանաս» պատասխանը կը ստանար:

Շարաթներ, ամիսներ անցան: Ոչ ոք

դիտցաւ, ոչ ոք կրցաւ բան մը հասկնալ մինչեւ այն օրը՝ երբ տնօրէնութեան կողմէ հանդիսաւորապէս յայտարարուեցաւ թէ վաղը, Կիրակի, առաւօտեան ժամը հինգին, բարձրագոյն եւ վերջնիւնք դասարաններու ուսանող-ուսանողուհիները պէտք է լիսէ դան՝ ուսուցիչներուն հետ մեկնելու քաղաքէն դուրս տեսարժան վայր մը, ուր բարձրագոյն կարգի ուսանող Սուրէն Վահանեան պիտի թոցնէ իր շինած «Ա» No. 1 հրթիռը...

- Ա! ա՛ա՛... - զարմանքի եւ հիացումի սրտաբուխ բացադանչութիւն մը՝ շատերու կողմէ:

Յետոյ, բոլորը՝ շատ աննախընթաց խանդավառութեամբ... Բոնքալիուեցան կարծես ու ծափերու աղմուկ մը սկսաւ բազմապատկուել:

- Օ՛...
- Սուրէնը հրթի՛ռ չի՛նէ...
- Սուրէ՛ն՝ հէ՛յ, Սուրէ՛ն... Սուրէ՛ն...

Փոքրամարմին Նուպարն է փնտաղը... այնքա՛ն ուրախացած է, որ կ'ուզէ Սուրէնի ուսերուն ցատքել...

- Սուրէ՛ն... ո՛ւր ես, Սուրէ՛ն...
Ուրիշներ ալ կ'ուզեն զինք տեսնել... Գոհարիկը, Էլիզը, Ինչո՛ւ չէ՛ նաեւ Շուշանը...

Սուրէն հոն չէր սակայն: Իր տէրվիչ համեստութեան հնազանդ՝ սովորականէն աւար վայրկեան առաջ արձակուած էր լիսէէն:

Ն

Առաւօտեան արեւը «Աստղիկ»ին շուք տալ կը սկսի:

Սուրէն՝ երազին յուշերէն քիչ առաջ վերադարձած էր արդէն:

Ինքն իր մէջ ներկայ է հիմա:

Կը դիտէ ճամբան, ուրկէ լիսէին ինքնաշարժը կու գայ ահա: Անոր ետեւ ուրիշ քափսիներ ալ կան:

Սուրէն ստիկ կ'ելլէ, կը մօտենայ հրթիռին:

Դիտողները զալէ առաջ՝ կ'ուզէ բան մը ըսել Աստղիկին, թելադրութիւն մը տալ...

Ճակատագրական վայրկեանը կը մօտենայ: Յուզուած է քիչ մը: Ըսելիք չի գտներ:

- Պիտի բարձրանա՛ս... - կը մըրմընջէ միայն:

Դիտողները կը հասնին ու զուարթ աղմուկով կ'իջնեն ինքնաշարժէն:

Բնութեան այս ամայի ծոցը երբեք-ցէ այսպէս ետուզեո չէ տեսած թերեւս: Դեռ եկողներ ալ կան...

- Բարի լո՛յս...
- Սուրէ՛ն, բարի լո՛յս...
- Հէ՛յ, Սուրէ՛ն...
- Ապրիս Սուրէ՛ն...
- Յաջողութի՛ւն...

Այսպէս, ուրախ բացադանչութիւններ արձակելով՝ ինքնաշարժէն իջնողները հեռագնետ կը մօտենան Սուրէնին ու Աստղիկին:

- Ձիս հրթիռիդ մէջ դէր, Սուրէ՛ն... կը կատակէ փոքրամարմին Նուպարը՝... ցատքելու պատրաստ: Բայց փրօփին ներկայութիւնը ծանրութիւն կը պարտազրէ:

Մտադրաղ է հրթիռին տէրը: Ձի լըսեր խօսքերը: Աչքերը տենդէ բռնուած են կարծես: Արագ-արագ, աջ ու ձախ կը թարթեն, տեսնել կ'ուզեն զայն...

- Եկա՞ծ է արդեօք... եկա՞ծ է... ո՛ւր է...

Հոն, Գոհարիկին քով կեցողը ինքն է... այո՛, Շուշանը...

Տեսաւ զայն: Կը բաւէ:

Պէտք է միւս եկողներուն ուշադիր ըլլալու քաղաքավարութիւնը ունենալ: Փրօփը եկած է, ուսուցիչներ, բարեկամներ եկած են: Պետական մի քանի պաշտօնեաներ ալ կան...

Բոլորն ալ կը ժպտին իրեն եւ Աստղիկը կը դիտեն:

Փոքր ու սիրուն հրթիռը, արեւուն դիմաց, իր արծաթագոյն պերճութիւնը կ'աւելցնէ փայլելով:

Ուսանող գլխահանակները կը մօտենայ փրօփին եւ զայն Աստղիկին քով հըրաւիրելով, գիտական պղտիկ զրոյց մը կ'ունենայ անոր հետ:

Փրօփը, որ օր մը առաջ տեսած էր

արդէն՝ զրթինը, քննական վերջին ակնարկը՝ ձը նետուէլէ վերջ՝ ձեռքը Սուրէնի ուտին կը զնէ ու թեթեւ հարուած մը սաւրով՝

— Յարողած ետ արդէն, « կ'ըսէ սըպ-նիկով, — կանխիկ կը շնորհաւորեմ, Սուրէն, պայթեցա՛ք եւ թոցո՛ւր հրթրեղ... սիւս վրափը կը հեռանայ:

Ներկաները ետ-ետ կը քաշուին, լայն շրջանակ մը կը կազմուի Սուրէնին եւ Աստղիկին շուրջ:

Մեծ դիտնակահի մը զբասնեակաւ աշխատանոցին խիստ լռութիւնը հոս կը փոխադրուի հիմա:

Ակնթարթ բռնած կը դիտեն: Հետաքրքրութիւնը լարուած է ու ճնշող:

Միտքէ միտք հարցում մը կը հետաձայնուի՝ անտեսանելի շրջանակ գծելով.

— Պիտի յաղոցի՞ արդեօք...

Վարժիչ, արանց խօսելու, քարթի թռի՛չքն կը մտղթէ իր քարեկամին, մի քանի քայլ ետեւ կ'երթայ, ու, քարթի մը ներքեւ գետեղուած կոնակին վրայ — ofէլ ներսն! — կ'իջնցնէ բթամատը...

Ձա՛ք քարեօք... Աստղիկը պատուանդանին վրայ կը մնայ սակաւահին...

Ներկաներոս սրտե՛րն իսկ, արքայե-րու կենսական աշխատանքը մի քանի երկ-վայրկեան կեցուցած, կը դիտեն...

« Վրթիւր չի քարձրանար սակայն...

Օ՛օօօ... Ա՛սսէ՛պը... ինչո՞ւ հա-մար այսպէս... »

« Ամէն բան կուտարեալ է. հաշիւով ու... արամարանութեմ՝ մը — ուրեմն ինչո՞ւ աչաւ աստղութիւնը... ինչո՞ւ... »

— ... Ինտոյններուն չարուած ուշադրու-թիւնը պիտի սկսի թռչնալ:

— Թորթն-ստամները կը կճճէ դայրոյ-թէն:

« Աստղի՛կ, Աստղի՛կ... քիչ վերջ նախադէպ լլայլ կայ... »

Բայց Աստղիկը ի՞նչ ընէ: Երբ պայ-թիւնը կ'նշանայ՝ ինչո՞վ յանցաւոր է ինք:

Ի՛, յետո՛յ...

Բարկութիւնը կրա՛կ կը վառէ Սու-րէնին աչքերուն մէջ:

Վիճակնք Փիմիկ վրայ կարծելով՝ կը սկսի մօտենալ՝ հրթրուին... Սակայն...

Ան-պի՛տան մողէզ...

Սուրէն քիչ մնաց Աստուծոյ հայհո-յէր՝ այսպէս քարազիտ անպէտք արա-րած մը ցտեղածառ լլայլուին:

Իրա՛ւ, Աստղիկը յանցանք չունի եր-բէք:

Ուրկի՛ց ուր: Բերուլան մողէզ մը, կարծես դիտակցաբա՛ր, եկած, մօտեցած Աստղիկի պատուանդանին, եւ, իր անի-մատոց դոյուրեմամբ, կրցած է արդէլ ըլ-լայլ ելեկտրական հոսանքին...

Միջանկեալ քացատրութիւն մը — Հրթիռէն քիչ անդին գետեղուած է ելեկ-տրական սարքաւորում մը, ուրկէ ներկու-թիւնը կ'երկարին մինչեւ հրթիւրի պատ-ուանդանին մօտ եւ կը վերջանան պղինձէ մատիկներով:

Պատուանդանին ալ, նոյնպէս, պը-դինձէ մատիկներով վերջացող երկու թեղ-իցր վերակարին բա՛կը դիմաւորեն դիմա-ցին Ֆիլդը կլեկտրական հոսանքը:

Երկու կողմերոս պղինձէ մատիկները միայն դպած են իրարու: Ձեն կապուած, որպէսզի պատուանդանին պայթիւնէն ա-ռաջանա՞րք փնտուտփելի ցնցումը կա-րենայ զիրենք անմիջապէս հետացնել ի-րարմէ՛՝ անկարելի դարձնելով հաւանա-կան Գօլիֆանկ մը, որ կրնայ վնասել ելեկ-տրական սարքաւորումին եւ հրթիւրին բարձրանալը չափող ոստիո-գործիքին:

Ուրեմն, մեր... մողէզ շնչինը (կար-ծես՝ ձախողութեան շատածոյ մը կողմէ զրկուած)՝ մտած էր պղինձէ մատիկնե-րէն մէկուն տակ, զայն բարձրացնելով բաժնած էր դիմացինէն եւ այդպէս ան-շարժացած...

Բնական է որ ելեկտրական հոսանքը կանգ առնէր՝ անկարելի դարձնելով պայ-թիւնը եւ սպա հրթիւրին թռիչքը...

Վա՛յ, մողէզ, վա՛յ...

Անթոյն, ստիվիշ սողուն մը: Սուրէն ի՞նչ ընէ անոր: Զայրոյթը կը հանդարտի ու տեղի կու տայ մեծ բնութեան այս պղտիկ կոտակէն ծնած լուս ծիծաղին... Սուրէն, սպտելով, կը մօտենայ մի

ընտի ջաշլ եւս, կը ծոթի ու կը բռնէ մո-
ղէղի պոչէն եւ կը քաշէ վայն...

Քաշած իսկ, քաշած իսկ երկվայր-
կեանին՝ պղինձէ մատիկները կը միանան
իրարու, ելեկտրական հոսանքը, որ չէր
կտրուած կեղրոնէն, կը հասնի պատ-
ուանդանին, անհրաժեշտ կայծը կը պո-
յանայ եւ ահապէ՛ն պայթիւն մը... ար-
դէն, Աստղիկը նայուածքներէ առաջ կը
բարձրանայ վե՛ր... վե՛ր...

Աւելի՛ վեր...

Կը բարձրանայ՝ ձեռնառումբի՛ մը
չափ պղտիկ երեւելու աստիճան, եւ, շա-
հած յաղթանակը իմացնելու համար
կարծես՝ կը պայթի ու կը չքանայ...)

Քիչ ետք, վար կ'իջնեն նայուածք-
ները, որոնք հրթիռի պատուանդանին
պիտի ուղղուէին՝ բայց անմիջապէս
կ'ուղղուին Սոսրէնին:

Ան, պայթիւնէն տնտջացած տարա-
ծուն ծուխիֆոսֆորի ջրաջրափայտած պատ-
ուանդանէն զիչ Վեռու ինկած էր ու կը
փորձէր ելլել... Վերմակ շապիկին վրայ
տեղ-տեղ կարմիր կարև:

Արտերը դող ելած կը խուժեն իր վը-
րայ...

- Սուրէն, Սուրէն...

Փոքրամարմին նուպարը ամէնէն ա-
ռաջ կը հասնի անոթ ջրով...

Ոչի՛նչ, ոչի՛նչ...

Սուրէն րոքի է արդէն... դեղնած
է, բայց կը գոգտի ժրտոտ այտերով...

Կը բռնեն բազուկներէն որ չի յնայ:
Միայն ի՛նք չէր տեսած Աստղիկին
թոփչը: Մողէղին (պատճառով՝ պատ-
ուանդանին մօտեցած ըլլալուն, պայթիւ-
նը... Յաճախ ըրած էր դիւք...)

Կը նայի վե՛ր՝ Աստղիկը տեսնելու
զուր յոյսով... Դո

Աստղիկը, ձեռքերը, ամպաբազիծ
երկի՛նքը ամբողջ իր աչքերուն մէջ է ու-
կայն՝ յաղթանակի ցնծութեան փոխա-
կերպուած...)

Պետական պաշտօնանհերէն մին, ի
պատիւ Սուրէնին՝ աջ ձեռքը ցարճացը-
նելով, կը գոչէ:

- Պարա՛ւ...)

Փրփր, մտայլ՝ կը քննէ պարալը:
Սակայն յետոյ կը ժպտի: Բան մը չէ:
Այլ բազուկին միակը զիչ մը պատուած
են, ալ կուրծքին վրայ ալ զիչ մը արիւն
կայ, ուրիշ ոչի՛նչ, ուրիշ ոչի՛նչ: Բայց
անմիջապէս վայն հիւանդանոց հասցնե-
լը շատ անհրաժեշտ է անշուշտ:

- Ե՛րևո, շո՛ւտ, անմիջապէս... տի-
րական ձայնով մը կը հրամայէ լիւեր
իննամակայներէն պարոն Ալթունեան ու
կը թանայ իր ֆրայդլէրին դուռը:

Հրամայը՝ անմիջապէս:

...Հիմա, առանց ձեռլոյս պարելու,
ձեր մտքէն՝ խաղաղ ու հաճելի պոթ-
կումներ աննցող երաժշտութիւն մը տե-
կընդրելով, երեւակայեցէ՛ք, քեզիֆայրը
պատկերացուցէ՛ք... Մայիսեան գեղեցիկ
առաւօտ մը: Ծառերով եզերուած կանաչ
վայր մը, առֆայթուղիին զիչ մը առչ
հասնիլ ուղող՝ նազելանձեմ սրտներով
հողէ համբայ փր, ուրիշ սիրուն ու դոց
կապոյտ ֆրայդլէր մը դէպի հիւանդանոց
կը շտապէ...

Յաղթական լիբրանոյլ լմը փոխադրո-
ղի արդար հպարտութիւնը: Երեւոյն
տակ, երկաթի տու բարակ սուրի կէտ կը
փայլի անոր առջեւ լամպէն մինչեւ ե-
տեւի կաթմիլը պոյթիւր... [ա թ
Անդին, ուրիշ համբա՞ն կը սկսի, ներս
կաները խճապով՝ թե՛ սրտի, թե՛ ար-
խուր, կը դիտեն հեռացող ֆրայդլէրը:
Բոլորը կը դիտեն...

Բազիւր: Ե՛րևոնէն, որ իրենց ադ-
դական պարոն Ալթունեանէն կը խնդրէ
աւելի՛ արագցնել ինքնաշարժին ընթաց-
քը...

Թ. ՋՈՐՆՅԻ

Հալեալ
ո ա դ
ցնդլ սն ճալա՛մտ ւ
որ ի որ ո ւ

ՀԱՅԿ ՅՈՎԱԿԻԱՆ

Հ Ա Ր Ս Ի Կ Ո Ն Գ Ը

(Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Պ ՈՒ Մ)

Գ Լ ՈՒ Խ Ե Ր Բ ՈՐ Գ

1

Գիւղին մտիկ, բարձր դիրքով,
Կայ հողաշէն մի ամրոց.
Ատամնաւոր պարիսպներով –
Ձորս բերդերով, յազթ ամրոց:
հանի զալէն շա՛տ է տեսի,
Արշաւանգներ ու կռիւ.
Քանի՛, քանի խանէ տեսի,
Բիրիխանում(1) անհաշիւ:

Ամրոցն ունի երեք բաժին,
Երեք մուտք ու պահապան-
Իսկ գլխաւոր մեծ դարպասին
Այսքուն հսկող դռնապան.
Մեծ դարպասի առջև բացուող
Ընդունարան մի շքեղ,
Որտեղ կ'իջնեն խանին եկող
Ղօնադները բազմացեղ:

Երկրորդ բաժնում, աչքից հեռու,
Կանանցն է մեծ խանի,
Նածիշտներով՝ պարզ ու հլու,
Խանումներով գեղանի:
Բերդի խորքում մի քանի սիւղ(2)
Սալայատակ ախոռով,
Ուր պահում են խանի ազիզ
Նժոյզները խնամքով:

Այս ամրոցի տէրն է տեսի
Ալիխանը Բասաֆի,
Մեծ ու փոքր իր գիւղերով –
Հարուստ խանը շրջանի:
Հագարներով ոչխար ունի,
Ձիու ջուկեր՝ հրեղէն,
Որ ամրանը հուզիստանի
Ղշլաղներում կ'արածեն:

Նրա հօտին ու գիւղերին,
Թէ ծուռ մայի բշմամին,
Կը պատճուի Բասաֆ խանի
Ձրիքներով(3) անուանի:
հանի զալէն շա՛տ է տեսի
Արշաւանգներ ու կռիւ,
Քանի՛ Ելխան(4), խան է տեսի –
Բիրիխանում անհաշիւ:

Ե՞րբ է զօրեղ բռնակալը,
Մայ ու մուլիից կշտացել,
Ո՞ր բնչաբազ հազատերը
Իր ռանչաբքին չի քամել:
Աւատական սև կարգերում
Քանի՛, քանի Ալիխան,
Քանի՛ բռնի ու անկշտում
Տգրուկ հաջէ ու Հասան:

(1) Խանի օրինական մեծ կիճը:
(2) Խան ազիւսով կտուցուած գամ:

(3) Անկանոն զօրք:
(4) Մեծ խան, աւագերէց:

Բայց երանի ամէն տեսակ
 Սոսկ հարկ ու տուրքը լինէր,
 Դառը դատած, մաքուր վաստակ -
 Տիրոջ բաժինը լինէր:
 Սովի՛ց, մահի՛ց ծանր ու դժնի,
 Հոգին լիկող քաթը կար.
 Յարկը պղծող, խեղճ խանի
 Զար ու գուլում այժը կար...

Լօռը չկայ,
 Զորը չկայ.
 Այիխանի
 Զար այժը կայ...

Սրտմտում է գիւղացին,
 Արթուն հսկում իր հօտին:

2

Գարունն եկաւ... ճնծազիկը
 Նար է ծաղկել, բողբոջել:
 Ձեան արցունքից առուն լիքը
 Կարկայտում է անարգել:
 Գարնան ամպից շանթն է շայտում
 Սարպանքում՝ մթամած.
 Փխրուն հողի կուրծքն է պատռում,
 Սունկը՝ հիւթեղ, կաթնացած:
 Մերթ մթնում է հարկզունը,
 Մերթ ժպտում է յաղթական.
 Կապում է պերն ծիածանը՝
 Աստույ գօտին ոռոգակամ:
 Սար ու ձորից ակունք առել -
 Անգուսպ կիրճով ու թափով՝
 Զրերն իրար գիրկ են ընկել,
 Ու յարդում են քրքիջով:

Գարնամաքեր ծիծառն եկաւ,
 Սարէկն եկաւ աղմուկով
 Ծուտով կը գայ Լօռն անբաւ
 Իր հօտերով ու քոչով:
 Դաշտ ու արօտ պիտի լցուեն
 Տեղախմբերը մարէն.
 Հայ գիւղացուն մտեհագեմ՝
 Լօռի գողերը մարէն:

Հայրենական բնաշխարհից,
 Ահա քշուած մի բեկոր:

Որ անցել է ուրազանից՝
 Գերեզմարից ահաւոր:
 Մի հասուածըն եղաւ բռնի
 Ուղեկորոյս... ու հատուց.
 Միւս կէտըն էլ՝ Լօռ ու խանի
 Կրունկի տակ տրորուց:

հարիմաստ է ամէն մի ծէս,
 Ամէն աւանդ՝ սրբացած,
 Փողովորդեան ամէն հանդէս,
 Հին դարերից մնացած:
 Պահած գո՛յնը, բո՛յրը ցեղի.
 Պահած ոգին արժեքի -
 Փարմիշանում տօն է հիմի,
 Մի հին աղաթ հայրենի:

Թե՛ հեթանոս ո՞ր պապը մեր,
 Խամահանուկ սկսեց...
 Գուցէ դիւցազն Հայկիցը մեր
 Այս աւանդը հասաւ մեզ:

Խամահանուկ -
 Գարնամաւուտ...

3

Զիւնը ծանծաղ փէշն հաւաքած,
 Սարի պօրտին կը հասնի.
 Խոնար հողի բոյրն առած,
 Հովը սանից-տուն կ'ունցնի:
 Հօտն արդէն դաշտ է իջել,
 Գունում թողած գառներին.
 Հարսի Կոնդը՝ դօշը բացել
 Ու ժպտում է արեւիմ...}

Փարմիշանում տօն է հիմի,
 Մի հին աղաթ հայրենի.
 Նեղ երդիկից շողն արեւի
 Եզան գոմից կը կանչի:

Գարնամաւուտ,
 Խամահանուկ:

- Ամբողջ ճմեռ կերդ կանաչ,
 Ազած մաշակ է եղել.
 Կապդ հանդի ճիւղից կանաչ,
 Գունդ տափուկ է եղել:

Գա՛րս արի, դուրս,
Սիրուն Շէկօ.
Գա՛րս արի, դուրս
Գիժուկ Կոնդուկ

Լուծող շիտակ բարդի ծառից,
Սամկո սարի արջինից,
Սամեթ-հյդ վառ գոյներից՝
Կանաչ-կարմիր, նարինջից:

Գա՛րս արի, դուրս
Մարալ իմ եզ.
Գա՛րս արի, դուրս լ
Ես մատաղ էեզ:

Վզիդ շարոք գանգ եմ կախել,
Մի գոյգ կասեյտ ուրումեով.
Սուրբ «Այստարից» Կաթաթաղի՝
Գրած տէրտերի ձեռեով:

Գա՛րս արի, դուրս,
Մարալ իմ եզ,
Գա՛րս արի, դուրս՝
Ես մատաղ էեզ:

Դէ՛, երեխե՛ք, հուս մու բերե՛ք,
Խիենե՛ք Շէկոյի նակտին.
Հէ՛յ ջան, մէկ էլ, մէկ էլ բերե՛ք,
Խիենե՛ք Կոնդուկի նակտին...»:

Ողջ տանեցոց աչքի թառաչ,
Հանդիսութեամբ սրբագան,
Եզներն առա՛ջ փակուած գոմից
Տրտիկ գառնով դուրս կը գան:

Հասա՛նուել են դուռ դրկից –
Խամախանուկ տեսնելու.
Հարսի բերած լի սեղանից,
Միբզ ու փոխինդ իստելու:

Նեղ երդիկից շողմ տարուի
Սգամ գոմից կը կանչի.
Փարսիշամուս փոճ է հիմի –
Մի հին աղաթ հայրենի:

ժ թ

Երեկոյեան սեպ ժայռերի
Ստուերները ձգուեցին.
Հօտերն այնտեղ՝ Թամանդարի
Սէգ լանջերին գերուեցին:
Հովը շրջկայս քայս զազնի
Բոյրը առած գիւզ մտաւ:
Մուրը շրջկայս վա՛յ, հարաջի: Դ
Գա՛րս արազ գիւզ արտաւճառ բերով

– Է՛յ, ե՛յ... Կտարա՞ն՝ օգնութիւն՝
Է՛յ, վա՛յ... Կտարա՞ն, օգնութիւն՝
Հեռու մարից «վա՛յ» են տալիս,
Եւ օգնութիւն աղերսում.
Խուլ ձոյնքն են կտրծես լալիս –
Աղբիւրները հառաչում:
Ու ջրուարը կանաչ արտում,
Ուրբը թողած կիսազոց,
Արագ դէպի կոնդ է վազում –
Սարի ճամբէն ստուգում:

– Ի՛նչը տարան.
Ո՛վ է կանչում...»
Միտքերում
Հարցում սնում,
Ու կանչում են
Մէկ-մէկու...»

Հրանօ՞թ էր յանկարծ պայթեց,
Թէ՛ մի շանթ էր երանան,
Որ հիմն ի վեր փոքրակեց,
Խաղաղ կանգնէր գեղջկական:

– Է՛յ, վա՛յ, տարա՞ն... օգնութիւն.
Տղերք հասե՛ք... օգնութեան».
Ու գիւղ հասաւ մի գառնորած՝
Շունչը կտրած՝ կարկամած:
– Հօտը տարան, Էտեր էին
Չորաններին բռնեցին՝
Նրանք՝ զինուած, շատուր էին –
Թալան արած – բռնեցին...
Է՛յ, վա՛յ, ափսոս մեր գառնորին,
Պահած, շահած ոչխարին...»:

Գուժն՝ այնքան ժանր էր, դժմի,
Որ ամէն ինչ մտազան,
Ջէնքերն առած, Փարսիշամի
Կորիները դուրս թռան:
«– Խանի դալէն շուտ լուր տուէ՛ք.
Թողէ՛ք որ նա իմանայ.
Ի՛նչ էլ լինի – լաւ իմացէ՛ք,
Գողի հայտից նա կը գայ...»:

– Էս միամիտ խալիթին մայի լ
Ասաց մի յողթ քերանի.
«Շունը – շրնից,
Գողը տանից...»
Ո՛վ է տեսել, Լօղը-թռից
Հայի մալը յետ առնի.
Են էլ Բասա՛կ Արիթանի՞ց: Գ. ա զգլա
Էդպէս մի բան կը լինի՞...»

- Ճիշդ է ասում Պետրոս Ափին -
Յարեց ուրիշ մի անհի.
Ջեռեղ միայն դիր թո՛ ծնկին,
Մեր պապերը լաւ են ասել -
«Շունը - շան միս
Զի ուտի...»:

Մարում կոուող Լօսերն ասես
Սեւ շուք դարձան, չփացան.
Ու խաւարում կորան անոնս -
Ձորում թագած ջառուարին:

❖

Փարսիշանի «հարայ-հուրան»
Արագ հասաւ մեծ խանին.
Նրա կամեով ձիանք հեծան,
Ջառուարները խան խանի:
Որոտում են անկազոտ,
Վարանտէյն ու Մաքեանցին:
Կրակում են՝ գող ու ջառուար -
Կրակ կտրած, մայեցին:

Նարից արեւն հրավառաց,
Գարեան ցաներն արմատի,
Նարից վեցկին խորունկ պատուց
Յուսթի կուրծքը սեւ հաղի:
Սիրատարփիկ արտաւտները
Ուրախ երգով նախորեցին.
Փարսիշանի հավիւները,
Առանց հօտի մնացին:

Մինչ բնդում է թամանդարը՝
Կուռի թափով հրաշոյ.
Մինչ իջնում է գօրշ խաւարը,
Ինչպէս ծանր ցուի դող.

«- Գէլի բերան բնկած գառը,
Յետ չի գայ.
Լօտի տարած մեր ոչխարը
Յետ չի գայ...»:

Մի խումբ Լօսեր՝ արագընթաց -
Շեղ նամբէֆով սարերի,
Կուռից հեռու - հօտերն առած,
Քշում են դէպ Ջալազի:

Սրտմտում է գիւղացին,
Արթուն հսկում իր շեմին:

Գ Լ Ո Ւ Ն Ձ Ո Ր Ո Ր Գ

1

Խնդուք-ին է, երգ ու պար,
Երկինքը ջինջ, արեւը վառ.
Գետն է ցայտում, լայն շնչում -
Համբարձման տօն քան գիւլում:
Հագար թռչր ու ծաղկի բռչր.
Հագար երանց ու համբռչր՝
Ծաւալում են, յամենում,
Լուսալառուած այն հովտում:
համձուն կարօտ՝ ծովացած,
Եւ հիացում մի անանց.
Թոթով խօսքեր ու շիկնում -
Երջանիկ ժամ, հանդիպում:
Աշխոյժ թափ է ու բերկրանք.
Ուրախ ճիչ ու արձագանգ.
Գետն է գնգում, փրփրում -
Համբարձման տօն, քան գիւլում:

Մաղկաճաղից նոր են եկել,
Աղջիկները ծաղկաբոյր.

Գիւլեյմանի փնջեր կազմել,
Ծօթն աղբիւրից բերել ջուր:
Նրանց բոյլին են խառնուել
Ջահել տղերք ու կարսներ.
Ողջ գիւղն ահա կօնք է եկել -
Ջան գիւլումին մասնակցել:

❖

- Խլել են վարդը սրտիս,
Անուշ թունը աչքերիս,
Վառ մարդու սիրտը սեւնայ -
Ջահել դարդալու եղայ:
Գեմեղ շողինքն ես գցել,
Վալու դագեհանին նստել.
Երեսիդ շողինքն տեսնեմ -
Նաշխուն դալի ես գործել:
Սէրս վաճառքի դրիր,
Հարուստ փեսայ ընտրեցիր.
Օղակդ բանտ թաղ դառնայ,
Նարտուք կարսիք շղթայ:



Էսօր կալ ես գնացել,
Ռսկի ցարեն ես մազել.
Շեկ ծամերիդ - սիրուն ջան,
Շարմաղ մզեղ է ճասել:

Լուսնակը բոլոր կ'երթայ,
Հովը անուշ կը շընկայ.
Խօսք ես տուել, տո՛ւն արի -
Ջգո՛յշ մէրդ չիմանայ:

Թիկնել ես կալի դէզին,
Աչքդ ազրիւրի ճամբին.
Կուժս առնեմ, ազրիւր գամ -
Պապակ քրտիդ պտղ ջուր տամ:

Մանկալ ես սիրուն տղայ,
Ձէնդ հանդերից կը գայ.
Մեռնեմ ման ու մայրութիդ -
Ձէնդ մօտիկից կը գայ:
Մանուկ օրից, դուռ-դրամ.
Խաղ ու տաղով մնացինք.
Խաղի օրերն էրր անցան,
Սիրոյ կրակն ընկանք:

Ձեռքին սիրուն բանջրխի,
Մինն ու սիրելի կը քաղի.
Սիրտս՝ կալած ու կապած,
Բանջարի հետ կը տամի:

Ջա՛ն լուսինը մտել տ,
Սարի ռսին կայսել տ.
Դո՛ւրս արի՛, դուրս-սիրուն ջան -
Սիրոյ ժամը հասել տ:

Շաղի, շողի Շուշանս,
Բաղից խաղող կը տանի.
Բաղի անո՛յշ բլրույս՝
Սիրտս առած կը տամի:

Հովը ճագով կը շընկայ,
Դագձի անուշ հոտ կը գայ.
Սարուտը տղայ տո՛ւն արի -
Մոցես վարդի բոյր կը գայ:
Արսը հերկած տո՛ւն կը գայ,
Ցոգնած եզներով կը գայ.
Երբ արեւը մայր մտնի -
Կանաչ-կարմիրս կը գայ:

Ձ

Ահել, ջահել կոնդ են եկել,
Փռել քաղիք ու դալիմ.
Առատ ու լի սեղան քացել -
Քէֆի մսակ մխտին:

Մի տեղ բառն է ու քամնչէն՝
Սրտեր բովում, ծոր-ծորում.
Մի ուրիշ տեղ դեռ-գուռնէն
Շուրջպարի կոչ է անում:

Թունդ են առել մատաղ սրտեր,
Փիր կարկաչող առուի պէս.
Եւ ամօթխած ջանել հարսներ
Ու ալջիկներ լուսերես -
Օրօր-շորոր շարք են բռնել,
Կոնդը պարամէջ արել:

Դեռ-գուռնին են միանում,
Երգ ու ծափը միատեղ.
Պարօղների շարքն են անցնում,
Նորահարսներ՝ աչագեղ:
Քամի՛ գնում երգ ու պարի
Չսփը ներսւծ է դառնում.
Քամի՛ գնում՝ շղթամ պարի
Ընդլայնում է, երկարում:

Մինչ ցնծում է ինքնամոռաց,
Փարմիշանը երջանիկ.
Մինչ արեւը զեմիթ հառած
Հուր է մաղում փլփստիկ,
Հեռում ահա, մի խումբ ճիւղար,
Ոնց փոթարիկ խօլապար,
Արշաւում են հանդակոտոր
Դեպի Կոնդը տոնավառ:

Ինչպէս յանկարծ թռչումների
Երգն է լուռւմ պուրակում,
Երբ գարկում է չար աւրուրի
Սուր սլացքը երկնում,
Այնպէս, մէկէն կանգ է առնում
Երգ ու պարը բլուրում:

Մուք կասկածի ծածուկ մի առ
Համակում է ամէնքին.
Կարծես աղէս մի աներկբայ,
Պիտի սարսի բոլարին:
- Տղերք, տեսէք ո՛վ է գալիս...
Կարծես խանն է կիւր գալիս...»:
- Տօ՛, տընաշէն - ի՛նչ խան, ի՛նչ ման -
Հօտեր կլնեն անպայման...»:

- Ե՛յ ժողովուրդ, զգայ լացե՛ք -
Երգ ու ճուտը չլինի.

Հարս ու աղջիկ մի կողմ ֆաշուէֆ -
 Ձէն ու ծպուտ չլինի...»:
 - Ալիխանն է եւ իր մարդիկ,
 Ուղիղ ղէպի կանգ կը գան...»:
 Ու մտայնօտ աւագանիք
 Տանուտերի մօտ եկան:

Լուրճն արագ՝ բերնէ-բերան,
 Շրջան առաւ ամէն տեղ.
 Եւ ակամայ կանգից իջան
 Աւագները միասեղ:
 Ու հասակի, դիրքի կարգով,
 Խոնարհուելու գնացին.
 Խանին վայել մեծարանճով,
 Ողջունեցին հիւրերին:

- Է՛, Քեաղխուղա(1)
 Էստեղ ի՞նչ կայ...
 Մենակ-մենակ
 Քէֆ ես անում
 Էս կանդում...:

- Խանը ոչք մնայ, -
 Խոնարհուեց Եզօն,
 Քեզ պէս բարիսիրտ
 Արքաք որ ունենք,
 Ինչո՞ւ քէֆ չանենք:
 Աստուած մեր խանի
 Ումբը շատ անի.
 Քո շուաքի տակ -
 Գեղով անվտանգ,
 Բախտաւոր ենք մենք:
 Ու քանի՛ կ'ապրենք,
 Քանի՛ կ'եանք ունենք -
 Քո անգին կ'եանքի
 Արեւատու թեան
 Համար կ'ազօրենք...»:

- Ափարին Եսեհա՛,
 Յարեց մեծ խանը,
 Է՛յ, մարիաւայ,
 Մարիաւայ...
 Մի՛շտ էսպէս ուրախ,
 Ու քէֆով մնայ:
 Մեզ համար, Էնդի,

Վերելում կանդի,
 Ղալիներ փռէֆ -
 Նստե՛նք ու հայենք,
 Ձեզ հետ միասին
 Մասնակցենք քէֆին...
 Ու թո՛ղ նուագեն.
 Բուրբն էլ մէկ տեղ՝
 Երգեն ու պարեն...»:

Խանի համար գառ մորթեցին
 Հաւ ու նուտեր շամփրեցին.
 Տիրոջ համար սեղան բացին -
 Գինին, օղին լի արին:
 - Խմի՛ր փիչքար(2) Հօտյնդուլի.
 Խմի՛ր Միրզա Փանջալի.
 Էս պատուական կարմիր գինին
 Մարդու ջէննաք կը տանի:

- Խմի՛ր՝ ճաքի,
 Խմի՛ր նաւի.
 Թո՛ղ ջանդուլին
 Շատ անի -
 Մի լուր դայլամ
 Չազ անի...»:

Յարդում է Ալիխանը,
 Գոռոզ խանը Բասաֆի.
 Նայրզում է լի սեղանը,
 Գաւաթները՝ Բագուսի:

Թառ-Քամանչէն՝ ծոր-ծորում են
 Թախծոտ «Բայեաք Շիրազին»,
 Ղայլանները՝ կըլ-կըլում են,
 Բաց երկնի տակ Մայիլին:
 Կերած, խմած տեր ու ծառայ -
 Ողջ աշխարհը մտաացան.
 Այսպէս անտես ժամեր անցան,

8

Խմած, խմած փիչքար ու խան,
 Փսփսում են ու դաւում.
 Հեռում սագի «տարայնի-նան»,

(1) Տանուտեր

(2) Գործակալ:

Մէկ զնգում է, մէկ լռում:
Խան ու Միրզա, բաց-աչքարայ,
Փըչփչում են ու դաւում...

Ո՛չ հակասել
Կը լինի.
Ո՛չ էլ մերժել,
Անտեսել:

- Օ՛ր, քնադիտարայ, շա՛տ ենք կերել
Ու խմել.
Հիմա կանչի՛ր, թող խալիք գամ,
Մխանամ,
Թօշմուկներին(1) ասէ՛ք որ գամ,
Սագին տամ.
Ինչքա՛ն ազդի՛կ, հարսներ որ կան
Ասէ՛ք գամ -
Կանգի շուրջը շղթայ կազմեն
Ու պարեն...
Ինչքա՛ն ազդիկ, հարսներ որ կան
Ասէ՛ք գամ:
Ասաց խանը
Յոփած խանը
Քառափի:

Ու գեղջկական հագիններում,
Տիրեց կասկած ու շփոթ.
Կարծես աշխարհ մթնեց լուսում -
Հեռուից բերին մահուան բոթ:
- Էս մի բանից ես իմ հոգին,
Իսկի լաւ հոտ չի գալի.
Թող որ Աստուած մեր մամուսին,
Ու մեր կեանքին խնայի. -
Ասաց խոճոռ մի ծերունի,
Յենած իր կեռ ճօկանին:

Իսկ տառամսկուս նզոն՝ անկար,
Յառնեց գիւղի մեծերին.
[Ե՛ւր հայեացքով, իստով անբառ
Գուրը հայցեց երկնքի:
Բայց երկինքը անտարբեր էր -
Զգաց անօգ իր համայնքի
Կշտամբանքը կարեկիր.
Կարծես երկինք պիտի փլէր
Ու ամէն բան հեղեղէր:

Խանի խօսքը՝
Հիր երկաթ,
Խանի խօսքը՝
Զուլ տոզպտա.

(1) Նուագողներ:

Զուռնան փչեց՝ «ճարայ, ճարայ,
Նարայ ջան»:
Շարք բռնեցին հար ու խումար
Զահել հարսներ գեղամի:
Շարք բռնեցին բոյով չինար,
Ազդիկները Նայիրի:

«- Ես ազդիկ եմ, ալ կ'ուզեմ.
Նարայ, ճարայ, ճարայ ջան.
Բողջէս ծալէ-ծալ կ'ուզեմ,
Նարայ, ճարայ, ճարայ ջան:
Գնա՛ սարը, մամ արի,
Նարայ, ճարայ, ճարայ ջան.
Ծաղիկ քաղի՛, տո՛ւն արի,
Նարայ, ճարայ, ճարայ ջան...»:

Ու ձգում է՝ օրօր-չորոր
Պարի շղթան գալարում.
Օղակում է Կանդը բալար
Եւ նորից-նոր վեռ-վեռում:
Հավը շուշան իր մատներով
Հասկերի քիսում է շոյում.
Հասունացող բերքի տեղում
Ցորենի արտն է ծրփում...

Պագշտո խանը՝ կամաց-կամաց
Ցած է իջնում բլուրից.
Զար հայեացքը շարքին յառած,
Գալարում է մուլցփից:
Փիշխարը դէտ՝ հետնում է
Տիրոջ ամէն մի քայլին.
Եզով՝ անգոր տազմապում է
Ու անիծում իր բախտին:

Շուշան հարսներ լուսերեսիկ՝
Թելիկ-մելիկ կ'օրորուն.
Ազդիկները՝ շարմազ-շողիկ,
Կանքը նագով կ'օղակեն:
Պարի երթին հետնում է,
Խէնէջ խանը Քառափի.

Մեզի հայեացքով բորբոքում է -
Ջալում խանը Բոսաֆի:

Երբ փչում է իրիկնային,
Հարեանդ գեփիւռը սարի-
Երբ իջնում է Թաւանդարի
Հսկայ շուքը վիթխարի,
Խանը մէկէն նշան տուաւ
Իր սապազէն փիշխարին -
Թափով պարի շարքը մտաւ -
Հասա՛ւ, գրկեց Սոնային...
.
.

Փիշխարն օգնեց որ ձի նստի
Ու փախցնի իր որսին:

- Վա՛յ, տարա՛ն...
Ա՛յ, տարա՛ն...
Մի՛ն հար, ախա՛ն.
Ա՛խ, մեր Սոնան...»:
- Ա՛խ, դո՛ւ գագան,
Ջալում խան -
Մոխիր ցանեց
Մեր գլխին...»:

- Վա՛յ մեր օրին ու արեւին,
Վա՛յ մեր պատուի՛ն, նամուսին...»:
Ու հազար ձէն, հազար բերան -
Արագ փոխուեց ամէն բան:

Ոնց սիգանեւ անպը զարման -
Շանքից գարկուած, բրատուած,
Խուճապահար՝ գիւղ-գիւղական
Իրար սնցան վագրացած...
Մէկ էլ լուսեց հուժկու մի ձայն -
Մերումնի էր այնպարդ -
Խաճ աչքերում բոց կար հայկեան,
Տասում կարած Արամազդ:

- Ե՛յ, հէ՛յ... լսէ՛ք, ձե՛զ եմ ասում.
Լաւ է մեռնենք էս կոնգում,
Քան թէ թոյլ տանք էս Լօտրին
Դիպչեն մեր սուրբ նամուսին:

(Շար. 2)

Ջարկէ՛ք քարով ու երկաթով.
Ջարկէ՛ք փայտով ու բահերով.
Ձեր գայրոյթի թէժ կրակով -
Ջարկէ՛ք՝ ցաւի դանակով...»:

Մօտիկ մարդիկ ելան անգէն,
Գրոհ տուին որ կայեն.
Բոսաֆանրի ճաւթէն փակեն՝
Վարդ Սոնային ազատեն:
Բայց սապազէն խանի մարդիկ,
Հուր ու սրով ղէմ ելան:
Ու կռիւր եղաւ սաստիկ -
Շատերն ընկան դիտապաստ...

Չմնաց հարսին յետ խեցին -
Գիւղը մնաց իր պատուով.
Բայց քաջասիրտ էն ծերունին
Ընկաւ սրի հարուածով...
Գլխից սաստիկ վերք տոացած՝
Խանը փախաւ ձեռնուճայն.
Սրտում ռխի թոյնը պահած -
Կոնգում թռչած թռչիս չուխան:

»

Լո՛ւս մարմարուղ իրիկնային,
Լոյսերի հետ տժգունում.
Սպասում է Պետրոս Ափին
Ու նուազած շնջում.
«- Հարսն ո՛ւր է... նա ազատուե՞ց...»:
- Իստեղ է նա, Ափի ջան -
Ասաց Եղօն.- նա ազատուեց...
Հանգիստ մնայ, Ափի ջան...»:

Երբ մեռնողի ճիգով բեկուած,
Շուրջը դիտեց ծերունին.
Նրա առաջ ծունկի եկած -
Սոնան հեծում էր լսին:
Երկնի խորքից մի աստղ ցայաց,
Շափաղ տուեց ու հանգաւ.
Պետրոս Ափին՝ շունչը հատած,
Անմահութեան գիրկն հասաւ:

Հ. 8

Կ. ՍԱՍՈՒՆԻ

ՍԱՐԵՐՈՒ ԱՍԼԱՆԸ

Գ.

Ա Ջ Ա Տ Ա Մ Ա Ր Տ Ը

Զինապատ Սասունը կը խոկար անցեալ տարուան դէպքերուն վրայ: Ամբողջ բարձրաւանդակը կտրուած էր աշխարհքէն ու ամփոփուած՝ օճախներու մէջ ճարճատող կրակին շուրջ: Եթէ ամառները լեռներու զապաթներէն Աստուծոյ Հետ կը խօսէր այս ժողովուրդը, Հիմա, կրակին շուրջ, Հին օրերու կրակապաշար կը դառնար:

Թշնամիին շուրջ Սասնոյ սահմաններուն չէր կրնար մօտենալ: Զինապատ ու միապալազ բերդ մը դարձած էր Սասուն, անմատչելի՝ բոլոր թշնամիներու դիմաց: Խոկումի եւ հանգիստի այդ վեց ամիսներուն, սահայն, տուներէն ու գոմերէն ներս, ետուն կետնք մը կ'ապրէր յուզումնաւար ժողովուրդը: Վասօք կը ծեծէին ու նախնական ձեւերով պաշար կը պատրաստէին: Տարբերիկ հնօցները երկաթ կը հալեցնէին, սուր ու դաշոյն տալու համար երիտասարդներուն ձեռքը: Որսի կ'ելլէին ու այծեամի խորովածները կը բաղդատէին Շէկոյի սան ոչխարի միսերուն: Մօտակայ դիւղէրը իրարու Հետ կը հաղորդակցէին լաւամ անցընելով իրենց օտքերը ու ձիւնի վրայէն կը քայլէին առանց խրելու:

Իշխանները երբեմն իրարու Հետ կը խորհրդակցէին, գարնան հաւանական վտանգները դիմադրուելու համար:

Սասուն պահած էր իր ազատութիւնը ու հպարտ էր իր յաղթանակներով, բայց մտահոգ էր աւելի մեծ եւ հաւանական վտանգներու առջեւ: Ուսումնականներով հարուստ չէր Սասուն, բայց ունէր բնատուր խելքով օժտուած իշխաններ եւ վարիչ մարդիկ, դարերու փորձառութեան զպրօցէն ելած:

Գերլինի ժողովէն յետոյ Սասուկցին զգաց ու գնահատեց այն փոքրիկ ազատութիւնը, որ ունէր այս բարձր լեռնազապաթներուն վրայ եւ անհաշիւ խորխորաններուն մէջ: Խրիմեան Հայրիկի աղատատենչ գաղափարները տարածուած էին Սասնոյ շրջաններէն ներս, բազմաթիւ վանահայրերու միջոցաւ: Այս վանահայրերը բոլորն ալ Սասուկցի էին, որ չես գիտեր ի՞նչ ճիգով վանական կրթութիւն մը ստացած, դարձած էին Ս. Կարապետի, Ս. Յովհաննու, Առաքելոց վանքի, Ս. Այրերիկի եւ Մատնափանքի վանահայրեր, որոնք աղօթքին Հետ՝ զարթօնքի ազատութեան տենչեր կը տարածէին կրասնկախ այս շրջաններուն մէջ:

Իշխանները, Սասնոյ ձիւնապատ այս բերդին մէջ, երբեմն խորհրդ-

դաժուժիւններու եւ վերադնահատութեան ժողովներ կը գումարէին, ճարճատուն օճախներուն շուրջ: Կաղնիէ կոճղերը կը ճարճատէին ու կաղնիէ կոճղի նմանող այս մարդիկը Հայ ժողովուրդի եւ աշխարհի շար ու բարիքի մասին կը խօսէին:

- Բողոքներն ու Հանրապրութիւնները օգուտ մը չտուին, Խրիմեան Հայրիկն ալ մեր բողոքները տարաւ քրիստոնեայ աշխարհին, բայց Հարիսայէն բաժին մը չտասացաւ. մենք ինչպէ՞ս Հարիսան պիտի ուտենք, չեմ գիտեր...

Իշխան Պետօն էր խօսողը, ծանրօրէն նստած իրենց լայն տան օճախին Ֆուճիւր (անկիւնը), հաստատուն կամքով՝ հոտաբարձ մարդ մը, որ այդ լեռնաշխարհի բնասուր բժիշկն էր, շրջանի ազդեցիկ իշխանը, մարտական ուժերու վարիչը:

- Մեր վանահայրերը Հայրիկի եւ Սրուանձտեանցի բողոքները կը շարունակէն, Հակառակ անոր, որ բողոքէն օգուտ մը չտասացանք: Շիտակ ճամբան բռնեցին Պերմը, Ահարոնքը ու զէնքի ուժով իրենց գլուխը ազատեցին ամէնօրեայ փորձանքներէն, առիկ ուժը տարի առաջ: Իշխան Պետօ՛, կակուղ խօսքի ժամանակը անցած կը տեսնեմ, - ըսաւ Շէնիկի իշխան Գրբգօն, թր Կէլիակուզան եկած էր, Հեաը ունենալով Սէմալի, Ալիանքի եւ Տաւրթիկի իշխանները: - Այս տարին որ անցաւ, արիւնտ տարի մը եղաւ, թեթեւ պրծանք փորձանքներէն, բայց մեր նոր մտած այս նոր տարին բարի տարի չ'երեւիր, ինչ որ պիտի ընենք, Հիմա մտածենք, քանի ձիւները չեն հալած մեր լեռներու փէշերէն:

- Ճիշդ կը խօսիս, իշխան Գրբգօ, - ըսաւ Պետօն, մտածկոտ ու խորհրդաւոր, - բողոք ու խնդրանք օգուտ չունին, մեր թշնամիները շատ են: Եթէ մեզ չըջապատողը Քիւրտեր ըլլային, անոնց Հեա մեր ունեցած զէնքերով գլուխ կ'ելլէինք, բայց այս անիրաւ պետութիւնը, Օսմանցին, այժմ այդ Քիւրտերուն կոնակ կեցած է: Գլուխնիս պահենք ժամանակ մը, մինչեւ որ Մուշը, Մշոյ Դաշտը, Վանն ու Կրքրումը, պոնէ մեզի չափ զէնք ունենան եւ այս անիրաւներուն դէմ ոտքի կենան:

- Երբ մենք այս Քիւրտերուն ձեռքը կարենք, որ մեզի կ'երկարի, կառավարութեան մէկ բազուկը կտրած կ'ըլլանք, - ըսաւ իշխան Գրբգօն, - դոնէ երկու ուժի դէմ միմակ չենք մնար:

- Ճիշդ է ըսածդ, - խօսքի մէջ մտաւ Տաւրթիկի իշխան Գասպարը, - այս անիրաւ Քիւրտերն ալ շատ են, ու Հիմա, Տիգրանակերտէն մինչեւ Պինկէօլ ոտքի ելած են Սասնոյ դէմ, կարծես իրենց աչքի փուշը ըլլար:

- Աչքի փուշ ենք, Հապա ի՞նչ գիտցաք, - ըսաւ Պետօն, - այս լեռնազաղաթները, դարերէ ի վեր, ոտքի կոխան եղած չէին, ու մենք աշխարհէ կտրուած, մարդկութենէ հեռու, մնացած ենք հովիւ ու իշխան, ու կերած ենք կորեկի Հաց ու խմած ենք պաղ թանը, բայց պահած ենք մեր ազատութիւնը: Հիմա Հայոց աշխարհին մէջ, ինչպէս իմ խելքս կը կտրէ, մեր Անտքի գազաթէն պիտելով, կարծես թէ մեր լեռները պլլալացող ըլլա մը դարձած են, բռնակալութեան կրունկներուն տակ ճգմուած Հայութեան: Հայութեան յոյսն ալ մեր վրայ է, ինչպէս կը կոահեմ եկող-գացող վանահայրերու եւ Մուշի վարժապետներու խօսքերէն: Իսկ մենք, բուա մը ժողովուրդ ենք, ապաւէն ունենալով այս անանցանելի լեռները: Հաշուով պիտի գործենք, մինչեւ միւս շրջաններն ալ պատրաստուին:

- Մինչեւ աղբիւրի ջուրը գայ, գորտին աչքը դուրս կու գայ, - ան-

դի անկիւնէն խորի մէջ մտաւ Սարգստ, որ իր խումբին հետ ընկերացած էր իշխան Գրգոյին:

Սարգստ արդէն ծանօթ զէմք մըն էր իշխաններու այս շրջանակին մէջ. անոր շարժական խումբը ամէն տեղ էր, նոր ոգի մը ներշնչելով իր տարեկից զինեայ երիտասարդներուն:

— Ատուած ձեզի կարողութիւն տայ, մեր յոյն ալ երիտասարդներու քաջութեան վրայ է: Մենք երբեմն երբեմն չուանը ամուր պիտի քաշենք, որ կալի մէջէն դուրս չգաք, բայց ատեն ատեն ալ դուք չուանը կլտրեցէք, ու ձեր ձեռքէն եկածը ըրէք, — խորհրդաւոր զէմքով եզրակացուց իշխան Պետօն:

Մինչեւ այդ պահը լուռ կը մնար Սէմայի իշխան Գուրգէնը, որ մընայլ տրամադրութեամբ գլուխը բարձրացուց եւ խօսքը ուղղեց իշխաններուն.

— Իշխան Պետօ՛, իշխան Գրգօ՛, իշխաննե՛ր, մենք այսօր շատ մտահոգ ենք, թշնամու վտանգին դէմ, բայց ահա այսօր Կէլիէկուզան եւ Սպաղանք կուտի բռնուած են իրարու հետ կնոջ մը՝ Շամէի պատճառաւ. կարծես մենք ալ զրտական ցեղերու պէս, ցեղային կոիւնները շարունակելու կիրքը ունինք, ևրբ անդին, ա՛յս դարնսն, մեր բոլորիս կեանքը վտանգի մէջ է:

— Մեր պապենական կարգն ու կանոնը պիտի պահենք, — ըսաւ իշխան Պետօն, ահայայտնի վրդովմունքով: — Սպաղանքի իշխան Մակարի եղբայրը որ գայ մեր գիւղէն աղջիկ փախցնէ, վաղը Գիւրտերն ալ նոյնը պիտի ընեն: Այս տեսակ դործերը անպատիժ պէտք չէ մնան:

Լաութիւն մը տիրեց:

Հող հաւաքուած իշխանները, այդ խնդրի մասին երկուքի բաժնուած էին: Տալուորիկի իշխանները Սպաղանքը կը պաշտպանէին, իսկ Շատախի իշխանները Կէլիէկուզանի կանակը կեցած էին: Թշնամու դէմ միացած, ներքին կեանքի մէջ պառակտում կար ու միայն Սարգստի խումբն էր, որ դուրս կը մնար այս տեղական քինախնդրութենէն:

— Իշխան Պետօ՛, իշխաննե՛ր, — ըսաւ Ալամ, որ մինչ այդ լուռ կը մնար, — ձեզի չ'իյնար, որ ձեր ժողովին մէջ խօսինք եւ խորհուրդ տանք, բայց եթէ թոյլ տաք, ձեզմէ պիտի խնդրեմ, որ վանահայրերու միջոցաւ խնդրը կարգադրէք, այդ բանով մեր ժողովուրդը չ'ըլլատուի, մնացածը ձեր հրամանի տակն է: Երբ հրամայէք, մենք ձեր գինուորն ենք:

— Վանքի հացը կերած է ու քանի մը այր բեն կայ փորին մէջ, մեզի վանահայրերը ցոյց կու տայ, — մեղմ ժպտով ըսաւ իշխան Պետօ, — հարկաւ բան մը կը մտածենք: Սպաղանքն ալ խելք պիտի ունենայ ներողութիւն խնդրելու մեր շրջանէն:

Պետոյի ժպտախառն խօսքը մթնոլորտը մեղմացուց եւ բոլորն ալ շարունակեցին խորհրդակցիլ զիրենք մասհոգող խնդիրներու շուրջ:

Սարգստ եւ իր ընկերները հագիւ երկու խօսքով ժողովի մէջ արտայայտուեցան, բայց անոնց միջամտութիւնը թէ՛ մտածումի մղեց իշխանները, եւ թէ՛ մեղմացուց անոնց տարակարծութիւնները:

Սարգստի խումբին միացած էր Սպաղանքէն զմայլելի երիտասարդ մը, իրենց տարեկից, երկաթեայ կաղձով, սակաւախօս Գալէն, որ Հայոց հին իշխաններու գեղեցկութիւնը ու պարթեւ հասակը ունէր: Խումբին մասնակից էին Տալուորիկէն երկու երիտասարդներ, նաեւ Իշխանաձորի պատանի Կարապետը: Բոլորն ալ տուն ու տեղ թողած, դարձած էին շարժական

փողերիկ բանակ մը, ու կը հասնէին հոն, ուր կուէ մը կար, ուր վտանգ մը կը սպառնար, ուր թշնամին կը մտնէր:

Այս անձնուէրները դարձած էին ամէնուն սիրելին, բոլոր կիներուն եւ աղջիկներուն եղբայր, եւ սրտերուն խօսող սարերու ասլանը:

Ուշ գիշերին, երբ իշխանները զանազան տուներու վրայ բաժնուած՝ կը հանգստանային, Սարհատն ու Աղամը բաժին կ'իշխային Տէր Քաջի տան: Իրենց առանձնասենեակի լոյսերը մարած, լուսթեան մէջ, երկու երիտասարդները կը խոխոյին, ու քունը փախած էր իրենց աչքերէն:

- Ագա՛մ:
- Ի՞նչ կայ, Սարհա՛տ:
- Քունս չի՛ տանիք:
- Ի՞մս ալ աչքերէս փախած է:
- Ի՞նչ պիտի ընենք այս գարնան, երբ լեռներն ու ձորերը բացուին մեր առջեւ: Ի՞նչպէս կը տեսնեմ, բռնկած է հայ ժողովուրդը ու մենք նեաուած ենք մեծ հրդեհի մը մէջ, որուն վերջը չեմ տեսներ: Մենք ա՛ր վերադարձ չունինք մեր տուները:

Սարհատ հողեկան սպրումներու, պատանեկան սիրոյ քաղցր երազածքի, ազատութեան բոցավառ գինովութեան, յաղթական կոխներու եւ զգլխիչ ու հպարտ զգացումներու ծովու մը վրայ կը տարուբերէր: Տալարիկէն Եէնիկ, Եէնիկէն Առաքելոց վանքը, անկէ՝ Ալիանքի կոխի մասնակցութիւնը, զինք տոգորած էին հայ ժողովուրդի ազատութեան գաղափարներով, որոնք այլեւս չէին սահմանափակուեր միայն Սասնոյ լեռնախարհին մէջ: Կը զգար, որ բռնկած հրդեհը կը ծաւալէ եւ կ'ընդգրկէ ամբողջ Հայաստան աշխարհի սիրան ու հոգին: Կը զգար խորապէս, որ աւխտեալները ազատութեան պատարագին զոհ պէտք է բերեն իրենց կեանքը, աչք պիտի չլթարթին թշնամու զնգապին դիմաց, հպարտօրէն ազատութեան դրօշը պիտի պարզեն այս մեծղի լեռներուն վրայ, ու մահը պիտի արհամարհեն, անմահութիւնը հռչակելու արի արանց մանուկներուն, այնպէս ինչպէս հին օրերու Դաւիթ Սասունցին ու Վարդան Մամիկոնեան քաջութեան ու ազատութեան գերազոյն պատիւը քանդակեցին Հայոց ժայռերուն վրայ: Կը զգար, որ ա՛լ տուն չունի, կը զգար, որ սիրոյ պասիլը կը հեռանար իր պլուխէն, որ մատաղապրուած էր սրբազան ուխտին: Արիւծի կորովով թօցուն այս երիտասարդը, իր գեղեցիկ կեանքը բուռին մէջ առած՝ կը նեւէր յանդգնօրէն, սիրով, անձնուբացութեամբ, ազատութեան խարոյկին մէջ, անվերադարձ կերպով: Սուսամը իր դեղձան ծամերով, երբեմն, զիշերուայ ուշ ժամերուն անուրջի պէս իրեն կ'երեւէր, անշուտփելի սփոփանքի մը պէս:



Օրերն անցան այսպէս մտածումներով ծանրաբեռն ու փետրուարեան փոթորիկները ոռնացին սարերու եւ ձորերու մէջ, ուր, երբեմն, ճամբորդները մնացին ձեան հիւսերու տակ: Մտաւայ պիւղերը ձիւնի տակ թաղուածները հանելու աշխատեցան, ամէն տարուայ բնութեան աղէտին հետ հաշտուած:

Փետրուարեան փոթորիկները գարնան դալուստի առաջին ազգանշաններն էին ու դիւղերու եւ գոմերու մէջ ամփոփուած ժողովուրդը, առանց աւաղաբութիւն դարձնելու գուրաք ոռնացող զամիւն, հազուադէպ ճամբորդ-

ներէն տեղեկութիւններ կ'առնէր թշնամիի դաւերուն եւ սպառնալիքներուն մասին :

Մտահոգիչ էին լուրերը, որոնք Պիթիսէն, Մուշէն ու Տիարպէզերէն կը հասնէին Մասուն :

Մարտի վերջերուն, երբ ձիւնհալքը սկսած էր Մշոյ Դաշտի եւ Մասնոյ լեռներու փէշերէն, թրքական կառավարութեան ժանտարմաներն ու ոստիկանները քայլ առ քայլ կը տեղաւորուէին դարնան երեսը տեսնող դիւղերու մէջ :

Այսպէս, աստիճանական կերպով Ապրիլի վերջերուն, Թահսին փաշայի աստիկաններն ու զօրքերը կ'երեւային Սէմալ, որ առաջին կայանն էր Մուշէն դէպի Մասուն ճանապարհին վրայ :

Այդ օրերուն, Մասուն հասած էր գաղափարական գործիչ մը, որ հեռուոր Պուշէն ինքզինք կը նետէր Հայոց ազատագրական շարժման մէջ, ու Հալպի վրայով քանի մը Տարօնցի առաջնորդներու հետ, կ'երեւար այս լեռնաշխարհին վրայ :

Մուրատ, խոհեմ ու քաջ մտաւորական մըն էր եւ այդ հեռուոր հորիզոններէն ազատութեան դրօշին ծածանումը կարելի կը գտնէր Մասնոյ ազատ լեռներու գաղաթիին : Բռնկած Հայութեան աչքերը Պուշէն ու Թիթիսէն ուղղուած էին դէպի Մասուն, որ Ջէյթունի հետ միասին կըրցած էին պահել իրենց լեռնական ազատութիւնը :

Իշխանները լեցին Մուրատի եւ Տամատեանի տեղեկութիւնները աշխարհի բոլոր անկիւններէն : Անորոշ լոյսեր արծարծուեցան այս ազատատենչ ժողովուրդին հոգիէն ներս, որ իր շրջապատի վտանգին դիմագրելու ստան, Հայոց ազատութեան դրօշակիրը հանդիսանալու փառքը սնուցեց իր հոգիին մէջ, հին դարերու հեքիաթային հերոսութիւնները տունէ տուն, դիւղէ դիւղ տարածելով :

Մասուն իր երկու հազար չախմախիւր Հրացաններով անշուշտ ուժ մըն էր, լեռնաշխարհը պայտօպանելու, բայց ազատութեան յաղթանակը ապահովող բանակ մը չէր :

Մուրատ որքան գաղափարական, նոյնքան մարտական հասկացողութիւն ունէր, ու քանի մը շրջաններ այցելեց, անձամբ կ'ուճու այն ուժը, որ պիտի նետուէր ազատութեան ճակատամարտին մէջ : Ոստիկանական Մասունցիներու վճռական կորովէն, մարտական նկարագրէն, եւ նոյնիսկ անոնց նախնական դէնքերէն :

Երբ Տալուրիկ հասաւ, հոն գտաւ Սարհատի խումբը : Ուսմբին վրձնականութիւնը զինք աւելի քան յուսադրեց : Արդէն անձնուրացներու կորիք մը կազմուած էր այդ բարձունքներուն վրայ, ու Տալուրիկցի քայքայ բռնումը խորապէս տպաւորեց զինք եւ Տամատեանը :

Թրքական զօրքերու եւ ոստիկաններու շարժումները դէպի Մասուն ակնյայտի վտանգը մօտեցուցած էին Մասնոյ ազատ կեդրոններուն, իսկ քրտական մոլեռանդ ամբոխ մը կը պատրաստուէր արշաւի ելլել Մասնոյ լեռնաշխարհին դէմ :

Կովկասէն Թուրքիա մտած էր Կուկունեանի խումբը, եւ, հակառակ ձախող վերջաւորութեան, յուզում եւ խանդավառութիւն ստեղծած էր հայրկան բարձրաւանդակին մէջ :

Կովկասահայ Հորիզոնին վրայ, Հայաստանի ազատագրութեան ջանքի փառուած էին, ու անձնուրացներ ճամբայ ելած դէպի Վան, Էրզրում, Բասէն ու Բազրեանդ : Բռնկած, բայց անշէջ Հայութիւնը ամբողջութեամբ

կը նետուէր ազատութեան հրդեհին մէջ ու այդ խանդավառութեամբ, անձնազոհները առանց տատանումի իրենց կեանքը կը նուիրարբերէին սրբազան ուխտին:

Երբ Տալուրիկի մէջ, դուրսի աշխարհէն եկած երկու առաքեալներ, Մուրատ եւ Տամատեան, կը խօսէին իշխաններու եւ Սարհատի խումբին հետ, իշխան Գասպարը հարցուց.

- Պարոններ, դուրսի աշխարհէն մեզի ի՞նչ օգնութիւն պիտի կըրնաք բերիլ: Մենք մեծցած ենք այս քարերուն մէջ ու վարժ ենք մեր կեանքը դո՛հելու, մեր ազատութեան եւ մեր պատուին համար, բայց անօրէնները շատ են, մենք զիչ:

- Քրիստոնէայ պետութիւնները մեր դատը իրենց ձեռքը առած են եւ չեն կրնար անտարբեր մնալ մեր ժողովուրդի տառապանքին առջեւ, - ըսաւ Տամատեան, - անշուշտ մեր յոյսը նախ եւ առաջ մեր ուժին վրայ պիտի դնենք, ապա օտարի օգնութեան:

- Օտարէն յոյս չկայ, պարոն Տամատեան, - ըսաւ Սարհատ, - ինչ որ պիտի ընենք, մէր ձեռքով պիտի ընենք: Եթէ կրնաք ուժ տուէք հարուածող բազուկին:

Մուրատ մտածումներու մէջ թաղուեցաւ, այս խօսակցութիւններուն տպաւորութեան տակ:

- Քրիստոնէայ աշխարհէն եթէ օգնութիւն մը դայ, որուն մասամբ կը հաւատամ, օգուտ մըն է, բայց մեր կամքէն կախուած չէ, - ըսաւ Մուրատ, - Հայկական կեդրոնները բռնկած են ազատութեան դազափարներով, անոնք մեր հարազատներն են եւ անոնց օգնութիւնը իրական արժէք մը կը ներկայացնէ: Ես միտք ունիմ անցնիլ Կովկաս, այդտեղէն օգնութիւն հասցընելու Սասունին:

- Մենք ալ Արարոյին կը սպասենք, - ըսաւ Սարհատ, - ես ու Ազատ ահա երկու տարի կ'ընէ կը թափառինք ու մեր աչքը ճամբան միաց: Արարուն մեր երկրի իսկական ռազմիկն էր եւ սարսփ կը տարածէր թուրք ու սելջուր անօրէններուն մէջ:

- Անշուշտ, մարտական ուժեր պիտի գան ամէն կողմէ. դուք ամուր պահեցէք Սասունը, որ ազատութեան միջնարբոյ մըն է եւ ապաստան մը՝ մարտական ուժերու:

Այս խօսակցութիւններէն ընդհանուր տպաւորութիւն մը կը ստեղծուէր Մասնոյ Հայութեան մէջ, որ իր ուժին ապահոված, այսուհանդերձ կը յուսադրուէր քրիստոնէայ աշխարհին օգնութեամբ:

Սարհատի խումբէն մէկ քանի զինուորներ ընկերացան Մուրատին մինչեւ Առաքելաց Վանքը, ուրկէ Մուրատ ծանօթ ուղեկիցներ գաաւ եւ անցաւ Կովկաս: Իսկ Սարհատն ու Տամատեանը վերադարձան իշխան Պետոյի ջով:

Մասնոյ սահմաններուն վրայ վտանգաւոր ուժեր արդէն սկսած էին երեւնալ: Իշխան Գրգօն իր ուժերը դասաւորած էր անոնց դէմ, կազմ ու պատրաստ: Եէնիկը ամէնէն ստաջաւոր պատուարն էր Մուշէն կամ Տարկոշէն եկած Հարուածներուն դէմ: Սարհատ իր խումբով արագօրէն կ'անցնէր այն կիրճերէն, որոնցմէ կրնային անցնիլ թշնամի խուզարկուները: Խումբը պարտականութիւն ունէր ոչ միայն անմիջական Հարուածը տալու երեւցող թշնամիին, այլեւ լուր տալու այն շրջանին, որ վտանգի ենթակայ էր:

Իշխանները Համախմբուեցան Կէլիէկուզան: Հրայրը Թնուսէն նամակ

գրած էր եւ շեշտած համերաշխութեան եւ միակամութեան անհրաժեշտութիւնը: Տաճատեան ծանր կացութիւնը պարզեց իշխաններուն, կարգաց Հրապարի արտառուչ կողմը եւ կրցաւ համոզել ամէնքը, որ վերջ դնեն Սպաղարտներ դէմ շղթայազերծուած կռիւին: Անոնք ալ ու հացի վրայ երգում ըրին, հաշտուեցան եւ իրենց բոլոր ուժերը ինքնապաշտպանութեան կռիւին շտակացնելու երգումը ըրին:

Վասնզաւոր այդ դարնան առաջին սփոփանքը եղաւ այս հաշտութիւնը, որ ինքնին ազգային ուխտ մը կը դառնար բոլորին համար:



Սարհատի թուրքիկ խումբը Եկնիկէն մեկնեցաւ ուշադիր խուզարկութեան մը ենթարկելու Տարկոշի ձորերը, որոնցմէ կը բարձրանար գլխաւոր ճամբան հարաւէն շարժող քրտական ցեղերու: Տարկոշի փէշերուն վրայ, ձմրան եղանակին կը մնային փոքրաթիւ քրտական դիւղեր, որոնք Մայրոսէն սկսեալ կ'ընդունէին հարաւէն եկող զանգուածները: Խումբը արագօրէն կը մտնէր այդ շրջաններուն եւ երբ քրտական խմբակներու դեպքումները կը նշմարէին, շեշտակի հարուածը կու տային եւ կը շեղէին իրենց ճանապարհը դէպի միւս կիւրճերը, որոնք բաց դռներ էին քրտական քոչուորներու առջեւ:

- Սարհատ, ինչպէս կը տեսնես, Քիւրտերը ամէն կողմէ մտնեցան են Տարկոշի բոլոր ձորերուն, - ըսաւ Աղամ, - ու այս դեպքերոյ խումբերը խուզարկու յառաջապահներն են:

- Պատահական ճամբորդներ չեն մեր տեսած խմբակները, - ըսաւ Սարհատ, - բոլորն ալ զինուած են եւ ամէն կողմ կը խուզարկեն: ու եթէ անոնք մեր հարուածներուն չհանգիպէին, պիտի մտնէնային Եկնիկին եւ Ալիանքին, կացութիւնը կշռելու համար: Անոնք նախադրեալ պիտի ըլլային, եթէ հանդիպէին մեր հովիւներուն, կամ հայ անցորդներուն:

- Պատերազմական գրութիւնը ընդհանուր է, - ըսաւ Աղամ, - կառավարութիւնը բռնած է Կուրտիկի բոլոր բարձունքները: Քիւրտերը կու դան հարաւէն եւ անոնց հետ քոչուորները քիչ են, ինչ որ կը նշանակէ թէ կուրի համար ելած են ճամբայ:

- Աղամ, անցնինք Մովսասարի փէշերը, անկէ իջնինք Առաքելոց վանք, կառավարութեան շարժումները աւելի լաւ ըմբռնելու համար, - ըսաւ Սարհատ:

Անոնք զարտուղի ճամբաներով անցան Մովսասար: Ձարմանակի երեսոյթ մը կը պարզուէր Սարհատի եւ իր ընկերներու ուշադրութեան: Մովսասարի այս փէշերուն վրայ ձիւնի շերտեր դեռ կը մընային: Այդ եղանակին, հին օրերուն, Քիւրտերը այդ կողմերը չէին գտնուէր: Հազուադիւրս ճամբորդներ միայն երբեմն կ'երեւէին այդ անցքներուն մէջ, Մուշ երթալու համար: Մինչդեռ երեք ժամուայ ճամբորդութեան ընթացքին իրենք քանի մը խումբեր նշմարեցին, որոնք ճամբան չեղելով կ'անհետանային: Միայն մէկ խումբի հետ ընդհարում տեղի աւնեցաւ, որու ընթացքին Քիւրտերը իրենց վերաւորներն առնելով՝ անապատ քանդով հեռացան:

Խումբը Միրինկատարէն իջաւ Առաքելոց վանք: Սարհատ եւ Աղամ հին օրերու յուշումով պուրակներէն անցան եւ վանքի ծառայողներէն կըրցան ստուգել, թէ վանքի մէջ կասկածելի ժարդիկ չկային: Անոնք ուղղակի դաջին վանհօր սրահը եւ աշակերտական օրերու ջերմութեամբ համրու-

բեցին վանահօր աջը, որ յանկարծակիի եկած էր այդ դիմեալ երիտասարդներու ներխուժումէն:

« Ատուած օրհնէ՛ ձեզ, զաւակներս, ո՞ր կողմէն կը ժամանէք:

— Հայր սուրբ, Սասնոյ իշխոններուն բարեւները բերած ենք ձեզի, իսկ ես ու Աղամբը այս սուրբ տաճարի զաւակներն ենք, — ըսաւ Սարհատ, — եկած ենք կրկին ձեր օրհնութիւնը առնելու:

— Ա՛յ, տղա՛յ, ուրեմն այս կտրիճը ժեր Աղամբն է ու անկէ անբաժան՝ Սարհատի աչքերը կը տեսնեմ գէժքիդ վրայ: օրհնեալ ըլլաք, բարով ըլլալ ձեր դալը:

Վանահայրը զանոնք նստեցուց մօտը եւ առանց ժամանակ կորսնցնելու, լսեց անոնց տեղեկութիւնները:

— Զաւակներս, այս անիծած կառավարութեան շունքը հիմա շատ կ'այցելեն վանքը եւ կը հոտոտեն շորս կողմը: Կ'ուզեմ շուտ լսել ձեր տեղեկութիւնները, որոյնքով ձեզ տեղաւորենք վանքի այն անկիւնները, որ դուրսէն եկողներու աչքին չերեւիք:

Վանահայրը ուշադրութեամբ լսեց բարձրաւանդակէն բերուած լուրերը եւ մտահոգութիւններով ծանրաբեռն՝ Սարհատին դարձաւ.

— Տղա՛ս, ժեր աչքն ալ Արարտի ճամբուն յառած մնաց, ու ահա երկու տարին սոցաւ, բայց լուր ժը չեկաւ անկէ: Հրայրը Մուշէն հոս եկաւ, եւ անցաւ Դաշտը, անկէ ուղղակի պիտի բարձրանար Սասուն: Կառավարութիւնը Պիթիսէն, Կէնճէն, Հազոյէն եւ Մուշէն շարժման մէջ դրած է իր զինուորներն ու ստիկանները եւ խորամանկութեամբ՝ կարեւոր կէտերը դրաւելու վրայ է: Այս կողմէն աւելի մեծ վտանգ կը սպառնայ Սասունին:

— Հայր սուրբ, Հարաւէն եւ արեւմուտքէն Քիւրտերը, Զիլանի եւ Տուալէրի չէյիներու առաջնորդութեամբ շարժման մէջ են եւ կը մօտենան Սասունի բարձունքներուն: Եթէ կառավարութիւնն ալ իր ուժերը կը շարժէ դէպի ձեր կողմերը, կը նշանակէ թէ Սասունը պատերազմի բեժ պիտի դառնայ: Մեր ժողովուրդը կը կռուի մինչեւ վերջին մարդը, բայց զէնքը վար չի դնիր:

— Հայր սուրբ, ճիշդ կ'ըսէ Սարհատ, Սասունի ժողովուրդը կը նախընտրէ մեռնիլ, քան ստրուկ դառնալ Քիւրտին ու Քուրքին, — ըսաւ Աղամբ, որ մինչեւ այդ վայրկեանը խօսքի մէջ չէր մտած:

— Զաւակներս, դրութիւնը աւելի ծանր է, քան մենք կը տեսնենք, Հրայրը ստուգապէս տեղեակ էր, որ Կէնճի Մէճիտ փաշան ստիկանական վաշտեր պիտի տեղաւորէ Մերկեմոզան, որ Շէնիկի դուռն է: Մուշէն հաճի Քաւիսի, հաճի Գաւիսի եւ Բաշիս էֆէնտիի առաջնորդութեամբ, ստիկանական եւ ժանտարմական վաշտերը պիտի բռնեն Կորանիք լիւսը եւ տեղաւորուին Մէմալ գիւղը: Հազոյի գայժազամը Հարաւէն պիտի շարժէ դէպի Մովսատի արեւելքը եւ միանալով Շէկոյի տան աշիրէթին՝ պիտի ուղղուի դէպի Սասանայի կամուրջը, Տալուրիկի դէմ: Արդէն Մուշի հայ երեւելիներէն եւ մտաւորականներէն սմանք ձերբակալուեցան եւ աքսորուեցան դէպի Էրզրում: Մուշի ժողովուրդը մեծ բազմութեամբ աքսորականները ճամբու դրաւ, ցոյցի կերպարանք ժը տալով իր համակրանքին: Կառավարութիւնը բնաւ կարեւորութիւն չառաւ այդ ցոյցերուն, բայց առիթէն օգտուելով՝ ծայրայեղ արտայայտութիւններ ունեցողներն ալ աքսորականներուն միացուց եւ քննեց երկրէն: Դրութիւնը շատ վատ է: Ատուած հասնի հայ ժողովուրդին: Մեր յոյսը ազատ Սասունի վրայ է:

Խումբը պահ մը եւս մնաց վանքին սրահը ու ապա վանահօր խընդ-
բանքով, անոնք վանքի գործակատարի խուցին մէջ տեղաւորուեցան, կե-
րակրուելու համար: Մեկնելէ առաջ, անոնք կրկին օրհնութիւնը առին ծե-
րունի վանահօր եւ յայանեցին, թէ իրիկուան դէմ ճամբայ պիտի ելլեն,
գիշերանց վերադառնալու համար Սասուն:

Վանահայրը ճամբու դրաւ գինեալ խումբը: Վանքն ալ հպարտ էր,
որ անձնուրացններու այս խումբին գլուխը կանգնած էին Սարհատը եւ Ա-
ղամը:

Խումբը առատօրէն հիւրասիրուեցաւ վանքի մտանէն, հանգստացաւ
մինչեւ երեկոյ ու երբ հովիւները վանքի ոչխարները ետ կը բերէին սարե-
րէն, անոնք մաղչեցան դէպի Ասազնկաբերդ ու անցան Միւրիկատարը, ա-
րեւը ժամը մտած պահուէն: Անոնք զարտուղի ճանապարհներով Կուրտիկի
վանքի բլուրները հասան, եւ վերէն կրցան գիտել Մերկեմոզան տեղաւոր-
ուած ոստիկանական վաշտը, որ վառուած կրակներու շուրջ համախմբե-
ուած էր: Գիշերանց անցան Շէնիկ եւ ժանդարման տեղեկութիւններ տուին
իշխան Գրգոյին:

- Ուրեմն պատերազմը սկսած է Սասունի դէմ, - ըսաւ իշխան Գրգ-
ոն, - եթէ իշխանները ինծի համամիտ ըլլային, մենք պէտք է յարձա-
կէինք մեր սահմաններուն վրայ դանուած թրքական ուժերու վրայ եւ զա-
նոնք զլէկնք մինչեւ Մուշ: Քիւրտերը այդ պարագային պիտի չհամարձա-
կէին զէնք բարձրացնել ազատ Սասունի դէմ: Կառավարութիւնը խորամանկ
կը շարժի, մեր իշխաններն ալ ժամանակ կ'ուզեն շահել, երբ վտանգը այս-
քան բացայայտ է:

- Հաճի Ծահիմ անուշանուշ կը խօսի Սէմալի իշխաններուն, որեւէ
բան չի պահանջեր: Իր ոստիկանները եւ ժանդարմաները ոչ մէկ նեղու-
թիւն կու տան Սէմալի ժողովուրդին, միայն կը պնդեն որ Տամատեանը
կառավարութեան յանձնուի որպէս խառնակիչ, - ըսաւ Սարհատ ու աւել-
ցուց, - մեր իշխաններն ալ այդ կակուղ խօսքերէն կը խարտին:

Իշխան Գրգոն պահ մը մտածելէ ետք, կարծես իր վճիռը կայացու-
ցած էր ու դարձաւ խումբին եւ հոն հաւաքուած Շէնիկցիներուն.

- Մեր գինուած ուժերը, ամէն օր, ամառուայ այս ամիսներուն, պի-
տի ըլլան Անտոքի փէշերուն վրայ, Մերկեմոզանին շուրջ: Պիտի անցնին
Տալուրիկ, ոմանք տեւապէս պիտի ըլլան Մովսաթի կիրճերուն մէջ եւ պի-
տի հարուածեն Քիւրտերը ո՛ր որ տեսնեն: Հարուածը պիտի ըլլայ չեչտա-
կի եւ ազդու: Եթէ անոնք որեւէ տեղ թոյլ կէս մը գտնեն, կրնան ներխու-
ժել եւ յուսահատութիւն առաջացնել հայկական գիւղերուն մէջ: Սարհա-
տի խումբը շարժքը տեղ մը պիտի ըլլայ: Գիւղերը այնքան արթուն հսկո-
ղութիւն չեն կրնար ընել, որքան թռուցիկ խումբը:

Այս խօսքերը եղան իշխան Գրգոյի վերջին հրահանգները: Ինքը ան-
ձամբ շարժման գլուխը կեցաւ եւ ամէն տեղ շեշտակի հարուածներ տուաւ,
երբ Քիւրտերը մօտեցան Սասունի ազատ շրջանի սահմաններուն:

Պատերազմը սկսած էր իրապէս ու այդ գործողութիւնները տեղի
կ'ունենային ընդհատ-ընդհատ, եւ սակայն արեւնայի:

Սարհատի խումբը երբեմն Մերկեմոզանի կողմերը, երբեմն Ալիանք
եւ երբեմն ալ Տալուրիկ կրեցաւ: Այդ շրջաններէն կորովի երիտասարդ-
ներ խումբին միացած՝ աւելի խորերը կը խուզարկէին եւ երբ քրտա-
կան համախմբում մը նշմարէին, արագ ու մահացու հարուածներ կու տա-
յին այդ վրճակներուն, խուճապի եւ վախուտի մատնելով զանոնք:

Քիւրտերը այս սարբերական կռիւները շարունակելով հանդերձ, այդ տարի չհամարձակեցան ընդհանուր յարձակողականի սկսելու Սասունի դէմ : Անոնք կը սպասէին, որ կառավարական ուժերը տան առաջին հարուածը Սասունին ու իրենք նոր շարժին հայկական դիւղերու վրայ, կողրպուտի մեծ ախորժակներով : Մինչդեռ կառավարութիւնն ալ կը սպասէր, որ գրգռուած Քիւրտերը խուժեն Սասուն, ընկճեն դայն ու ապա իրենք անցնին դաժանութիւններուն :

Կառավարութեան աչքին Սասունը ապստամբ չըջան մըն էր եւ աւելի վտանգաւոր : Թրքական բանակաւորութիւնը Սասունցիին մէջ կը նշմարէր ազգային ազատութեան բոցավառում մը :

Այդ տարի թէ՛ կառավարութեան եւ թէ՛ Քիւրտերու բոլոր փորձերը պարտութեան մասնուեցան : Անոնք իրենց յանդուրժութիւնը կորսնցուցին եւ զրացին թէ՛ անպէ՛ն Հայեր չեն որ իրենց դէմ կը ճակատէին :

Սասնոյ վճռականութիւնը ազդեց նաեւ կառավարութեան վրայ, որ ձեռնարկեց աւելի մեծ պատրաստութեան, խորտակելու համար այս ապրտամբ օճախը :

Սասուն յաղթական էր, երբ ձիւնը կը ծածկէր սարերն ու ձորերը : Սասունցիները աւելի ինքնավստահ կ'ամփոփուէին իրենց օճախներուն շուրջ, ձիւնապառ լեռներուն ապաւինած :

Ու ձմեռը խորհրդակցելու եւ խոկումի չըջան մը կը դառնար Սասունի համար, կացութիւնը չափելու հանդարտ չըջան մը :

Իշխանները շատ յաճախ իրարու քով եկան կացութիւնը քննելու համար :

Այդ խորհրդակցութիւններուն ընթացքին, իշխան Պետօն, որ ամէնէն պահպանողականն էր, համոզուած կ'արտայայտուէր .

- Իշխաննե՛ր, դարկէ-դարկը սկսած է եւ թշնամին մեզի պիտի չիւնայ : Ենող գարնան շատ աւելի մեծ ուժերով մեր վրայ պիտի դայն ու մենք, աւղենք թէ շուղենք, այս լեռները զինքով պիտի պաշտպանենք : Մեր ճակատադէրն է :

- Աղէ՛կ ըսիր, իշխան Պետօ՛, - ձայն առաւ իշխան Գրգօն, - անց-նոյ տարին արիւնտ տարի մը եղաւ, ոստիկանները մեծ դիւղերուն չկըրցան դպնալ, բայց Կէլիէմուր փոքր դիւղէն ձերբակալեցին Մերթօն եւ Ազօն եւ ծեծի տակ կիսամեռ դարձուցին, որպէսզի անոնք մասնեն Սասունի գաղտնիքները : Մերթօն եւ Ազօն բերին Սէմալ, եւ տեսնելով, որ Ազօն մահած է, անմիջապէս փոխադրեցին Մշոյ բանար : Այդ խնդիրը մեզ բոլորս յուզեց : Ձեր դիւղէն գինուորներ եկան միացան Շէնիկի գինուորներուն եւ մենք յարձակման գացինք Սէմալի վրայ, որպէսզի Ազօն ազատենք եւ հաճի Յաւիթի ուժերն ալ քնաջնջենք : Բայց Սէմալի իշխանները դիւղի բոլոր կիները մեր դէմ դրկեցին եւ ինդրեցին, որ դիւղը չաւերենք : Ու մենք ալ թուլութիւնը ունեցանք մեր քոյրերու եւ մայրերու խնդրանքին ատջեւ ու ետ դարձանք : Բնական է կառավարութիւնը երես պիտի աւանդէ :

Սէմալի իշխաններէն մէկը, որ Մուշ գացած ու դարձած էր, յայտնեց թէ Ազօն Մշոյ բանտին մէջ աւելի անգթօրէն կը շարշարեն, որ դիտացածը խոտտոյանի : Ծեծի տակ մահամերձ Ազօն կ'ըսէ .

- Ինչ կ'ուզէք ըրէք, մինչեւ իմ մահը բան մը պիտի չըսեմ : Ծն Սասնոյ Վասակը չեմ եղնիր... :

Ազօն բանտին մէջ մեռաւ յաջորդ օրը : Հաճի Յաւիթն ալ իր ոստիկանները առած հեռացաւ Սէմալէն, առանց մեծ վնաս մը կրելու :

Իշխաններու մեծամասնութիւնը խոհեմ քայլերէն դժգոհ էր, եւ շըբ-
շանի փրկութիւնը վճռական հարուածներէն կը սպասէր:

և

Յաջորդ դարունը բացուեցաւ պատերազմական շեփորով: Պիթլիսի
նահանգապետ Թահոնի փաշան խիստ հրահանգով ոտքի հանած էր Մուշի
եւ Գէնճի կառավարիչները:

Հրամանը խիստ էր ու անդուժ:

— Փացէք Սասուն, քար քաղեցէք, աւազ մաղեցէք, հիմնադատակ ը-
րէք ըմբոստութեան այդ բերդը, որ ոտքի կանգնած է դահը տապալելու
մեր Սուլթանին:

Ու հրաման մը վերէն ու հրաման մը վարէն, Սասնոյ սահմաններուն
վրայ թափած էին զորք ու ուստիկան, շիւրա ցեղապետներ իրենց խուժա-
նով ու մոլեռանդ շէյխերը սրբազան պատերազմի ոռնոցներով:

Իսլամը վտանգի մէջ էր: Սասնոյ բարձունքներուն վրայ Հայեր կա-
յին դիմուած ու ազատ, թէեւ այդ գէներին հետ ունէին միայն կորեկ հաց
ու ոչխարներ անտառներուն մէջ եւ մարդագետիներուն վրայ: Բայց այդ
Հայութիւնը ունէր բարձրաբերձ լեռներ եւ առատ զուլալ ջուր:

Թուրք կառավարութիւնը անցած տարուայ քրտական յարձակումնե-
րը տկար ու տատամտու կը դռնէր: Կաշառք, քաջալերանք եւ խլամական
զրդուութիւնը աւելի վճռական դարձուցած էին ցեղապետները, որոնք շէյ-
խերու մոլեռանդ հրահրումով՝ իրենց բոլոր ուժերը ճամբայ հանեցին դէ-
պի Սասուն, ստորջ խոստում ստանալով կառավարութենէն, թէ պետական
ուժերը միեւնոյն ժամանակ դրոհի պիտի անցնին Հայերու դէմ:

Սասուն պաշարուած էր ու միայն դադտնի ու դարտուլի ճանապարհ-
ներով իր հաղորդակցութիւն կը պահէր Մուշի եւ Գաշտի հետ:

Սարհատի խուժըր նոր վերադարձած էր Տալուրիկէն Ծէնիկ: Հարաւի
քրտական շարժումներուն տեղեակ էին Տալուրիկցիները եւ իրենց հաւա-
քած տեղեկութիւններէն կը նշմարուէր, թէ առաջին յարձակումը տեղի պի-
տի ունենար Տալուրիկի վրայ:

— Իշխան Գրգօ, հարաւի բոլոր ցեղապետները արդէն իրենց ուժերը
փոխադրած են Խիանքի եւ Խուլքի հաբաւային յեռները: Զիւանի, Տուտէ-
րիի շէյխերը անձնապէս կը վարեն քրտական դիմեալ խուժանը: Անոնց թի-
ւը անհաշիւ է ու նշանակէտ ունին Տալուրիկը, որ բերդ մըն է անոնց ճամ-
բան փակող դէպի Անտոք եւ Շատախ: Տալուրիկի դիմուածներու մէկ մասը
Սպիտակ Լեռան գիմաց, գետեղերի բարձունքները կը պահեն, գիւեր թէ
ցերեկ:

— Թրքական ուժերն ալ, — ըստ իշխան Գրգօն, — արդէն բռնած են
Պուրտիկը, եւ Հանի Տահիմը իր ուժերով տեղաւորուած է Սէմալ: Ըստ ե-
րեսյթին երկու ճակատի վրայ պիտի կուրինք, բայց մեր ուժերէն մէկ
մասը Տալուրիկին պիտի տրամադրենք, որպէսզի մեր կոնակը ապահով մը-
նայ: Պատերազմը անցած տարի սկսաւ եւ այս տարի կուրծք-կուրծքի ճա-
կատամարտ պիտի ունենանք, ու եթէ տեղէ մը օգնութիւն չհասնի մեզի,
մենք ստիպուած պիտի ըլլանք ճակատազրական կռիւ մղել, կեանքի ու
ժահուան կռիւ մը...

— Իշխան Գրգօ, Մուրատը զնաց կովկաս ու անկէ լուր մը չունինք:
Առաքելոց վանք հասած լուրերէն յայտնի եղաւ, որ Արարուն, գինուած լու
խումբով մը, ճամբայ ելած է Սասուն դալու համար եւ հասած է մինչեւ

Մշոյ Գաշտը եզերող Քոստը լեռները, ու Հոն, զժրախտաբար, կռուի բռն-
նընելով խումբը ամբողջ բնաջնջուած է: Քիւրտները եւ Թուրքները մեծ վը-
նաս կրած են, Արաբոն եւ իր ընկերները մինչեւ վերջին փամփուշտը կըռ-
ուած ու նահատակուած են:

- Տխուր լուր է, Սարհատ: Արաբոյի պէս Հերոս մը այլեւս պիտի
չունենանք:

- Տխուր լուրերը իբարու կը յաջորդեն: Նոյնքան ծանր զժրախտու-
թիւն մըն է Մարգար վարժապետի ձերբակալութիւնը: Ղզըլագանէն եկող
ճամբորդ մը յայտնեց մեր խումբին Հրայրի տեղեկութիւնները: Մարգար
վարժապետը Կովկասէն կրցած է գինեւոյ խումբ մը հասցնել Վարդենիս եւ
միանալ այդ գիւղի գինեւոյ ուժերուն: Վարդենիսի կործաները մեծ դիմա-
դրութիւն ցոյց տուած են Մուսա բէկի յարձակումներուն դէմ եւ կրցած
են Վարդենիսը աղտակ աւերումէ, բայց քանի որ օր ետք, երբ Մարգար
վարժապետ Մուշախէն ղիւղը սպաստանած կը հանգստանար, կը շրջա-
պատուի Թուրք ոստիկաններէն: Կռուի ընթացքին կը միջառորուի եւ կը
ձերբակալուի: Մարգար վարժապետը անմիջապէս փոխադրած են Պիժլիս,
արագօրէն տարած եւ կախաղանի դատապարտած են:

- Այս տեղեկութիւններէն յայտնի կ'ըլլայ, թէ Կովկասէն գինեւոյ ու-
ժեր ճամբայ ելած են օգնութեան հասնելու, բայց ճանապարհները երկար
են ու անոնք տեղ չեն հասնիր, - ըսաւ իշխան Գրգո մտահոգ, - մեր լիտ-
ներն ալ Հեռացած են Հայոց աշխարհէն ու մօտեցած երկնքին: Ո՞վ պիտի
հասնի մեր կռուին: Մեր յոյսը ղեննք մեր ուժերուն վրայ ու ապաստանինք
մեր լեռներուն:

Այս խօսակցութիւններու մէջ էին, երբ լուր բերին Սէմալէն, թէ կա-
ռավարութիւնէն Հրաման եկած է, որ Սասնոյ իշխանները Մուշ երթան խոր-
հրդակցելու Թահսին փաշային հետ եւ վերջ տան այս խռովութիւննե-
րուն: Սուլթանը փափաքած է, որ իր հպատակները հանգիստ ու խաղաղ
ապրին:

Իշխան Գրգոն եւ Կէլիէկուզանի իշխան Պետոն կարծիքի փոխանակու-
թենէ յետոյ Համազուեցան, որ այս Հրաւէրը դաւադիր նպատակով կ'ըլ-
լայ: Այդ խի պատճառաւ, քանի մը երկրորդական իշխաններ զբեկեցին
Սէմալ, որոնք Սէմալի իշխան Գուրգէնի հետ ճամբայ ելան դէպի Մուշ:

Կառավարութիւնը տեսնելով, որ Տալարիի եւ Շատախի անուանի
եւ ազգեցիկ իշխանները ներկայ չեն, զանոնք աս կը դարձնէ եւ միայն իշ-
խան Գուրգէնը կը պահէ հոն եւ քանտ կը ղնէ որպէս պատանդ, յայտնելով
թէ մինչեւ որ խառնակիչ Տամատեանը չյանձնէք կառավարութեան, Սէմա-
լի իշխանը քանտ պիտի մնայ:

Թահսին փաշայի դաւադրութիւնը կը ձախողէր այսպիսով ու կառա-
վարութիւնը կը մտածէր գինու զօրութեամբ ընկճել ըմբոստութիւնը:

Սասնոյ իշխանները դուրս էին, որ ծուղակը չինկան եւ աւելի կորովով
եւ վճռականութեամբ լծուեցան ինքնապաշտպանութեան աշխատանքնե-
րուն:

Զինուորական դրութիւն էր: Գիշեր թէ ցերեկ հսկողութիւն կար ա-
մէն կողմ եւ շարժական խումբեր ամէն օր ընդհարումներ կ'ունենային ջըր-
տական առաջապահ խումբին հետ: Դէպքը գէպքին կը յաջորդէր ու ա-
մէն որ սպասելի էր վճռական ճակատամարտը:

Դէպքերէն ամէնէն տխուրը տեղի ունեցաւ ճակատամարտէն առաջ:
Կրկին Սէմալէն էր, որ ամօթալի լուրը կը հասնէր Շէնիկ:

- Իշխան Գրգո՛, մեր գիւղի պատիւը դեռնի տակ անցաւ, - յուզու-
մով ու հեւ ի հեւ կը պատմէր Սէմալցի գիւղացի մը, - Տամատեանը բըռ-
նեցին :

- Ինչպէ՛ս, ա՛յ տղայ, ո՛ւր բռնեցին, ո՛վ բռնեց :

- Իշխան Գրգո՛, Տամատեանը գիւղացիի հագուստ հագած Սէմալէն
ելաւ Առաքելոց վանք երթալու համար, ճանապարհին անոր կը հանդիպին
երկու Գիւրտեր եւ կ'ուզեն կողոպտել : Վրայ կը հասնի թուրք ստտիկան
մը եւ Տամատեանը բռնելով կը բերէ մեր գիւղը : Ոստիկանները ստուար
խումբով մը Տամատեանը տարին գէպի Մուշ : Սէմալի զինեալ երիտասարդ-
ները սողի ելան Տամատեանը ապստեղու, բայց Իշխան Գուրգէնի բազմա-
թիւ ազգակիները եւ համախոհները արգելք հանդիսացան, ըսելով թէ
մենք կառավարութեան դործերուն պէտք չէ խառնուինք :

Այս լուրը ծանր տպաւորութիւն թողուց բոլորի վրայ : Իշխանները
վրդովուած էին Տամատեանի ձերբակալութեան լուրէն : Ոստիկաններու
յանդգնութիւնը արհամարհանք մըն էր Սէմալի ժարտակամ ուժերուն հան-
դէպ, ու լուրջ հարուած մը բարձրաւանդակի միակամութեան :

Երբ լուրը հասաւ Իշխան Գետոյին, անոր առաջին քայլը եղաւ բա-
նադրանք մը Սէմալ գիւղի հանդէպ : Գետոյի բարբառով Սէմալը յայտա-
բարուեցաւ պիղծ գիւղ մը, որուն հետ որեւէ յարաբերութիւն պիտի չու-
նենային միւս գիւղերը : Այս խստաբարոյ վճիռը արզար զայրոյթի մը ար-
դիւնքն էր եւ ընդունելի բոլոր Սասունցիներէն : Բայց ճեղք մը կը ստեղ-
ծէր հուաքական ուժին մէջ, ու Սէմալը, որ բազմաթիւ կորիճներ ունէր,
ազգային ազատագրական բանակէն կը մեկուսացուէր :

Օրերը վատ էին, ամէնօրեայ կռիւները կը շարունակուէին ու մար-
դիկ ժամանակ շունչէին բարակը մանելու :

Դէպքերը որ տեղի կ'ունենային, կարծես թէ Սասնոյ ժողովուրդի
ականջին իր մինակութիւնը կ'արձագանդէին :

Մինակ էր Սասուն, մահ պատերազմի օրհասով :

Եւ սակայն, «Սասուն ելաւ ապստամբեց, աշխարհում հանեց ձայն» :
Կարծես դարաւոր հին պատերազմի մը շարունակութիւնն էր, որ տեղի կ'ու-
նենար այս բարձունքներուն վրայ, յանուն ամբողջ Հայութեան :

Տամատեան քարոսեցին դէպի Գոլխ :

Հրայր Մշոյ Դաշտէն բարձրացաւ Սասուն :

Կ. Ս.

(Շար.)

ՎԻՇՏԸ

Ի՞նչ է Վեշտը: -
 Ասացին՝
 - Երեղի եղբայրն է ակնոր,
 Որին մարդիկ ասեցին,
 Ու ասեցեցին ամէն օր:
 Բայց չմտաւ, զիմացաւ,
 Սնուց ինքն իբր ուրցունջով,
 Դարձաւ կոկիծ, դարձաւ ցաւ,
 Դարձաւ մասյլ մթին ծով...
 Ու աշխարհում չիմա նա
 Դեռ կ'ապրի ու չէ մնայ:

«ԻՆՁ»-Ը

Կ'է, միշտ մահից, մահի ակից
 Սարսափիլը, աստ՝ Ի՞նչ...
 Փոքամ, սիրի՛ր կեանք ու մահի
 Ճանապարհում ամէն ինչ:

Չէ՞ որ ինչից ինչ է ննուամ,
 Ու կանգնում է մի նոր ինչ...
 Իսկ զու՛ եկուոր, իսկ զու՛ անցուոր,
 Յուշերտ ինչի ղէ՞մ՝ սչի՛նչ...

ՄԱՐԴԸ

Մարդը մարդուն ասաց.
 - Մարդ կնք,
 Ինչո՞ւ պէտք է իբրք ասենք,
 Կեղծներ, ասենք:
 Արի՛, անկեղծ, եղբոր նման
 Սիրենք իբրք,
 Ապրենք, անենք,
 Ղերուց տրուած արժանիքով
 Լցենք աշխարհ ծով բարեգով: -

Պատասխանեց մարդը մարդուն.
 - Դու՛ ասացիք,
 Որ մենք զմարդ կնք...
 Եւ զուր ինչո՛ւ իբրք խարենք:

Օ՛, ՄԱՐԴՈՒԿՆԵՐ՝
ԴՈՒՔ ԽԵՂԷ...

Ի՞նչ են ուզում ինձից
 Հայեացքներն այս ցուրտ.
 Ուզում են իբնեցով են դրազում՞՞:

Ուզում են որ իբնեց
 Կեղծ ժպտով ու սուտ
 Բարբանջանքովն սնայն սգեւորուե՞մ:

Ուզում են որ լինեմ
 Մանկան պէս միամի՞տ,
 Չեղա մեկնեմ ամէն, ամէն ինչի՞... -

Օ՛, մարդուկներ՝ զուր ինքզ,
 Անճարակ ու անմիտ,
 Որ չէք կապուել կեանքում զուր ոչինչի:

ԱՐՄԻ ԳՍՏՈՆԷ

ՇԱՀՊԱՆ

ՅԵՏՈՅ Կ'ԸՍԵՄ...

Այդ շաբաթ, սինեմա չավրա, էր նէսթ Հէմինկուէյի «Ներտասարդի մը արկածախնդրութիւնները» ժապաւէնը կը ցուցադրուէր: Հինգշաբթի, յետմիջօրէին Բաֆֆի տոմս մը ապահովեց եւ առանձին լոճի իր աթոռը դրաւ: Գաղարին ալ յօն իջաւ: սիկարէթ մը վառելու: Հազիւ լուցկին մարած՝ անուր լսեց: Գարձաւ: Ընկերներէն մէկն էր: Շարաթը տեղամ մը զիբար չտեսնող ընկերներէն մէկը:

- Բարեւ, Նորայր, ըսաւ Բաֆֆի. ինչպէ՞ս ես:
- Լա՛ւ: Ո՛ր ես, չես երեւիր:
- Իրաւունք ունիս. պէտք է դործատեղի այցելութիւն տամ քեզի:
- Ա՛տ ալ պէտք է յիշեցնել:
- Մի՛ մեղադրէր. վաղը այնքան կու դամ որ կը ձանձրանաս. ամէն դալուս սուրճ պատրաստէ:
- Սուրճը պատրաստ է. Հիմա Աւստրալի մը կ'առնենք:
- Հիմա՞...
- Ըսել կ'ուզեմ սինեմայէն ետք... Բաֆֆէրիան...
- Նորէ՞ն ըսելիք...
- Հըհը՞...
- ՚...

Չանկը դադարին վերջ տուաւ: Պատասխան զրոյ երբ անունները կը գրուէին, Բաֆֆի կը մտածէր Նորայրի ըսելիքին մասին: Գիտէր գոնէ, որ աղջկան մը շուրջ էր ըսելիքը: Մտտ երեք ամիս առաջ, նորէն ըսելիք ունեցած էր եւ այս անգամ, սրճարանի մը մէջ, ժամերով պատմած էր իրեն, թէ ինչպէս

աղջկան մը ծանօթացած էր ու սիրած դասն, թէ աղջիկն ալ իրեն համարած էր եւ առաջին ժամադրութիւնը տուած: Թէ առաջին հանդիպումին միասին Մօսքա-Աա դացած էին եւ հաճելի ժամեր անցուցած:

Հիմա Բաֆֆի կը մտածէր Նորայրի ըսելիքին մասին եւ որքան մտքին մէջ ենթադրութիւններու ձեւ կ'ուզէր տալ, այնքան միտքը կը խուսափէր անկէ եւ կը տարուէր արդէն ցուցադրուող պատկերով:

Ժապաւէնը երբ վերջացաւ, բաղձութեան հետ վար իջաւ եւ ալ յօնը Նորայրին սպասեց: Նորայր շուշացաւ: Միասին Բաֆֆէրիան մտան:

Անկին մը, թիկնաթոռներուն մէջ բազմած, Բաֆֆի կը սպասէր որ Նորայր խօսէր: Ու Նորայր չէր խօսեր: Ու եթէ սպասեակին միջամտութիւնը չըլլար, տիրող լուծիւնը անհանոյ ըլլալու շափ տաղտուկ պիտի ստեղծէր:

- Կը յիշես անուշտ այդ աղջիկը...
- Ըսաւ ի վերջոյ Նորայր:
- Մանուշակը:
- Գեղեցիկ օրեր էին, անցան...
- Հիմա՞...
- Հիմա բարեկամ չենք ա՛լ... շաբաթ մը կ'ընէ պինք չեմ տեսներ...
- Ինչո՞ւ:
- Անցեալ Կիրակի միասին էինք, զժտուեցանք...
- Պատճա՞ռ:
- Գիտե՞ս Բաֆֆի, ես Մանուշակը կը սիրեմ... կը սիրէի... միասին պըտոյտներ կ'ընէինք, կը խօսէինք, կ'եր-

ընկանայինք... Ետքից անգամ մը Մոսկովայի կ'երթայինք, երբեմն Սբերիո, Սեպիլ, Մոկամպո, նման ժամադրավայրեր... մեր բարեկամութիւնը սերտ էր... Համբարը անցնելու վրայ էր...

... Ապագայի մասին կը խորհէինք... կը հաստատուէր որ իրարու հետ պիտի ամուսնանանք... Ծրագրերը չհաստատուեցին... իտէսլ աղջիկ մը... յետոյ...

... Յետոյ ի՞նչ...

... Յետոյ զժողովներ... դեռ անցեալ Կիրակի:

... Պատճառ:

... Եղբայր, կ'ուզէ որ անմիջապէս վերջացնենք զործը... ամէնէ մը նշանուինք... կարելի՞ ըսն է... դեռ անգործութիւններ կան...

... Բ...

... Քու ըսածը պատրուակ է միայն ըսու ինծի. զու միտքդ զիս առնել չէ, պարզապէս խաղալ... Կրնայի՞ դիմանալ... ըսէ՛, կրնայի՞ հանդուրժել այս տեսակ արամբանութեան, այս տեսակ արամադրութեան... երբ ամբողջ սրբատու կը սիրէի զինք ու միտքս զինք առնել էր... իտէսլ աղջիկ մը... բայց եւ այնպէս ոչ անմիջապէս... տարի մը ետք... թերեւս...

Բա՞նքի մտիկ կ'ընէր:

... Այլ իզոյնք մեր բարեկամութիւնը, ըսու ինծի. բայց բարեկամ բաժնուինք... քեզի համար տարբերութիւն չ'ընէր... բայց եւ աղջիկ եմ... ապագայի հարց է... եթէ չար ըլլա... շարունակեց ու լացաւ:

Բա՞նքի նորայրի աչքերուն մէջ արցունք փնտռեց: Թացութիւնը կար միայն:

... Դուն լաւ աղայ ես, նորայր, ըսու ինծի. չ'զիմացայ. նայուածքս լոյսերուն վրայ էր, վար առի, աւազանին մէջ ու բազմապէս պարը դիտեցի, չլայու համար: Դուն լաւ աղայ ես կրկնեց ինծի...

Բա՞նքի նորայրին նայեցաւ: Աչքերուն թացութիւնը արցունքի վերածուած էր: Հոս աւազան չկար, բարձրը չէին լողար:

... Զիս տուն տար, ըսու ու ոտքի ելանք: Որքան զինով էի, նոյնքան ալ տըխուր, պարտուած...

Բա՞նքի երբորդ անգամ նորայրին նայեցաւ:

... Նիշու հիմակուան պէտք...

... Կարծեմ անգամ մը տեսար Մանուշակը, ըսու նորայր լուսթեղէ մը ետք: -Տեսա՛յ, աղուոր աղջիկ է... բայց...

... Քեզմէ խնդրանք մը ունիմ, Բա՞նքի, բայց...

... Բայց իր մասին ի՞նչ դիտես, նորայր. երբեք հետաքրքրուած ես, որ քեզ ճանչնալէ առաջ ուրիշ բարեկամներ չունէր, ուրիշներու հետ բարեկամութիւններ հաստատած չէր, ուրիշներէն չէր...

... Ատ մէկը կարեւոր չէ: Թէեւ հետաքրքրուած եմ... դիտեմ... ունեցած է... բայց... Մանուշակը աղուոր է, չէ՞... իտէսլ աղջիկ մը... ինչպէ՞ս հետը շամուսնանամ... բայց ոչ հիմա... ատ մէկը կարեւոր չէ... քեզմէ խնդրանք մը ունիմ...

Բա՞նքի չորբորդ նայուածքը դամեց նորայրի աչքերուն:

... Նայուածքին անունը արգահատանք էր:

... Կ'ուզե՞ս մեր միջեւ հաշտարար ըլլալ: Օր մը քովը դես, խանութը գիտես, ժամադրութիւն առ եւ խօսէ իրեն, լուսարանէ, համողէ ու մեր բարեկամութիւնը վերահաստատէ... Կ'ընե՞ս...

Բա՞նքի դիմախաղ մը ըրաւ: Փոխանակ ըսելու

... Կ'ընեմ...

... Նորայր աղջկան հեռանային թիւը տուաւ Բա՞նքիին: Եւ աւելցուց.

... Վստահ եմ որ պիտի յաջողի...

... շատ շնորհակալ պիտի ըլլամ քեզի...

... Նայինք, ըսու Բա՞նքի ու ոտքի ելան:

... Իրենց հետ մութն ալ փողոց իջաւ: Քիչ մը եւս քալեցին ու իրարմէ բաժնուելէ ետք, Բա՞նքի մտածեց այդ իրիկուն անպամ մը աղջկան խանութին առջեւէն անցնել: Պետական Դրարարանին չհասած, դարձուածքին քայլերը դանդաղե-

ցուց եւ, նայուածքը աջ, ուղղուեցաւ դէ-
պի Թիլէլ պողոտան: Երբ գրախանու-
թին տակն էլ հասաւ, կանգ առնելով ցու-
ցափեղկին դիւրեբը դիտեց: Իրականու-
թեան մէջ, գրամեքենային առջեւ նստող
աղջիկը փնտռեց: Ձկար:

Գլուխը շարժեց: Ըսել կ'ուզէր, որ
ո՛ւր դայած կրնար ըլլալ, երբ Նորայր
իրեն ըսած էր, որ ժամը ութին կ'ար-
ձակուի: Ստուգելու համար ժամացոյ-
ցին նայեցաւ:

Յաջորդ օր, երեկոյեան, Բաֆֆի
Մանուշակին հետաձայն բացաւ:

- Այո՞...
- Այո՞... վայրկեան մը Օր. Մա-
նուշակը. իզմ մտաւէն:

Գրափառուը արարախօս էր:
- Այո՞... լուեցաւ թեկին միւս ծայ-
րէն:

- Այո՞... Մանուշակ, դո՞ւն ես:
- Այո՞... ո՞վ է խօսողը:
- Նորայրը...
- ...
- Նայէ Մանուշակ, մոռցիր վերջին
պատահարը... հաշտուինք...
- ...

- Այս իրիկուն կրնա՞ս դալ...
- Ո՛ւր պիտի երթանք:
- Յետոյ կ'որոշենք...
- Լա՛ւ. ժամը ութին եկուր տար...
- Ժամը ճիշդ ութին գրախանութ մը-
տաւ:

Քանութիւն խորը գրափառուը յաճա-
խորդով գրադած էր:

Աղջիկը գրամեքենային առջեւ պտտ-
րաստութիւն կը տեսնէր:

Բաֆֆի մօտեցաւ աղջկան ու

- ... (Ի՞նչ մը պիտի ընէր բայց չկր-
ցաւ ըսել):
- Հրամեցէք, ըսաւ աղջիկը:
- ...
- Ի՞նչ մը կ'ուզէք:
- Օր. Մանուշակը դո՞ւք էք:
- Այո՞... գրամացաւ աղջիկը:
- Ըսելիք ունի՞մ...
- Ո՞վ էք...
- Ե՛ս... Ե՛ս... ըսելիք ունի՞մ... կա-
րե՞սր է...
- Լա՛ւ, վայրկեան մը դուրսը սպա-
սեցէք, հիմա կը միանամ, ըսաւ աղջիկը
ու Նորայրը յիշեց:
Բաֆֆի դուրս ելլելէ ետք, մտածեց
որ անճարակ չէր գտնուած:
Քանի որ
- ... Հիմա կը միանամ ըսաւ աղջի-
կը:
Ու սպասեցաւ:
Քանի մը վայրկեան անց, աղջիկը
դուրս ելաւ ու տղուն միացաւ: Սկսան
դէպի վար քալել:
- Ո՞վ էք... Ի՞նչ պիտի ըսէք...
- Նայէ Մանուշակ, քաղաքավարա-
կան կերպերը մէկ կողմ ձգենք: Նորայրը
չը կեց գիտ...
- Ինչքա՞ն պիտի չգա՞յ... ըսաւ Մա-
նուշակ ու կանգ առաւ:
- Ձէ՛, պիտի չգայ... գիտ ի՞ր տեղը
չը կեց...
- Ինչո՞ւ...
- Ինչո՞ւ... Ինչո՞ւ... Ի՞նչ գիտնամ...
կարծե՞մ...
- Ապո՛ւշ... պոռթկաց Մանուշակ:
- "... (Ինձի՞ ըսել կ'ուզէր Բաֆֆի
երբ)
- Քեզի չե՞մ, ճշդեց աղջիկը:
- Ի՞նչ Բաֆֆին ե՞մ, ըսաւ տղան:
- Ուրախ ե՞մ. Ի՞նչ պիտի ըսես...
- Մանուշակ, շատ չոր կը վարուիս
հետս... տեղ մը շնտիր՞նք...
- Ձիւ Մովսէսն տար...
Հարիւր մեթրի շափ քալեցին, մին-
չեւ որ Մովսէսն ելլելու համար քաֆսի
մը վարձեցին: Թաֆսին քաղաքին շրջանը
կ'ընէր, դառնիբերը կը մազլցէր, լայն-
բը կը նոյնանային, օդը կը զովանար ու
ետեւի բազմոցին վրայ Մանուշակ եւ
Բաֆֆի դեռ չէին խօսեր: Ու լուսթիւնը
աւելի կը գեղեցկացնէր դիշերային այս
կարճ պտոյտին խորհրդաւորութիւնը:
Ստուերոս շարժումներ միայն, երբեմն
տղուն կողմէ ու երբեմն փոխադարձա-
բար: Լուսթիւնը կը գունաւորէին աւելի
չերմ: քան քաղցր վանկերը շրթներուն:
Աղջկան նստուածքը դասական էր:
Ճշունը քամաքիմ:

Երկուքինը միասին ներդաշնակ :
 Ձեռքերը չէին հանդուցուած :
 Մասները չէին համարուեր :
 Երբ պահը իր կամուրջը կը նետէր
 արովէ-արովի, նայուածքէ-նայուածք,
 ժպտէ-ժպտու...
 Ինքնաշարժը կանգ առաւ :
 Ձուրներու կողմէ միշտ առանձին ան-
 կիւնները նախընտրուելնուն, հաղիւ կըր-
 ցան ուրիշ առանձին անկիւն մը գտնել :
 Դէմ-դիմաց նստած էին հիմա ու թիչ
 առաջուան լուծիւնը, որ կը տիրէր
 ճամբու ընթացքին, բառերու պէտք ու-
 նէր, որպէսզի զեղեցկանար, որպէսզի
 պայթէր : Ու բառերը դժուար չէին, երբ
 արդէն լոյսէն կու գային, ձայնէն կը
 ժայթքէին : Ու ստուերոտ շարժումները,
 այս անգամ, նորէն դուռուր էին :
 - Նորայրին մասին պիտի ըսէիր, ը-
 սու Մանուշակ :
 - Մոռցայ... : Տղայ մըն է, որ կը
 մոռցուի...
 - ...Որ կը վստահայ... կը խարուի...
 Իր սէրն ալ տարբեր է... :
 - Մերելու կերպը տարօրինակ :
 - Նորայրին մասին չ'արժեք խօսիլ...
 - Կը հասկնամ... նշանուիլ... ա-
 րագ... :
 - Փորձառուները տարբեր կ'ըլլան...
 կը հասկնան... բայց աւելի գէշ... :
 - Գէշը միայն հոն չէ... առիթ չեն
 տար... տեղի չեն տար... : Զի՞չո՞ հմ :
 - Հը՞հը՞... հոսանքն ի վար կը թը-
 չեն... կը տանին... :
 - Այո այսպէս է, ուրիշ ձեւ չի կրը-
 նար ըլլալ : Քեզի համար, օրինակ, բախ-
 տի հարց է... վիճակահանութեան անի-
 ւը երբ քու թիւիդ վրայ կենայ, այն ա-
 տեն կը բախտաւորուի... այսպէս,
 մի՞ սպասեր... :
 - Ձեմ սպասեր... առ ալ իր համը
 ունի... անունը ունի... :
 - Երիտասարդութիւն :
 Եւ Բաֆֆի աղջկան աչքերը կարդաց :
 Աղջկան աչքերը բառը կրկնեցին :
 Բաֆֆի սպասեակին սէրվիս գոմբլէ
 ապսպրեց :
 Գարեջուր խմեցին :

Ժամ մը ետք, երբ աւելի զինովցած
 էին երաժշտութենէն, պարելու երան :
 Եղանակներու կշռոյթը կը զեկամա-
 րէր :
 Իրենցը մարմնական հաճոյք մըն էր :
 Մարդիկ անոր պար անունը կու տա-
 յին :
 Երբ յոգնեցան, սեղան գալով իրա-
 րու կենաց խմեցին ու իրարու աւելի
 սեղմուեցան :
 Իրենցը առանձին անկիւններէն մէկն
 էր :
 Կիտամութիւն մէջ :
 Կրցան համարուեցի :
 Բաֆֆի աղջկան աչքերը կարդաց :
 Աչքերով Մանուշակ հաւանութիւն
 տուաւ որ համարյոյն հոք՝ ուրիշ բաներ
 ալ ըլլային... :
 Այդ առթիւ էր որ աղջիկը լիւնց :
 - Կիրակի օր քարքի մը ունինք...
 պիտի գա՞ս, Բաֆֆի :
 - Կու գամ... :
 - Բարեկամի մը տունը... :
 - Շատ լաւ :
 - Ժամը հինգին Հաւաճեա եղիր...
 կու գամ, կ'երթանք... :
 Խոստումին համար արժեք ուխտի
 խմել :
 Կէս դիւերը անցած էր :
 Ինքնաշարժ նստան :
 Կար տը Պաղատա :
 - Մեր տունը հոս է, կրցաւ բառերը
 իրարու քով բերել աղջիկը եւ ժառով
 տունը ցոյց տուաւ :
 Ատիճաններէն ելլելու պահուն
 - Բարքին չ'ոտնաս, պոռաց :
 Բաֆֆի դուրսը շարժեց :
 Երբ քաճսին արդէն կը հեռանար :
 Կիրակի օր, Բաֆֆի նորէն քաճսիի
 մը մէջ էր ու ժամադրութեան կ'երթար :
 Սիւլեյմանիէի գառիվերը կ'ըլլու պա-
 հուն, մայթէն մէկը անունը տուաւ : Գը-
 լուիւր դուրս հանեց : Նորայրն էր :
 - Ի՞նչ ըրիր... պոռաց Նորայր :
 Բաւական հեռացած էին : Հաղիւ
 կրցաւ պատասխանել :
 - Յետոյ կ'ըսեմ... :

ՇԱՀՊԱՆ

ՍՈՒՏԸ

«Սուտ է, կ'ըսեն աչքերդ ինձի, մի՛ հաւտար
Մեր ժպիտին, որուն արեւն է պատրանք»
- Սո՛ւտը միայն գեղեցիկ է, երբ կրնանք
Ձայն արուեստով ընել երազ լուստարր:

Սուտ չէ՞ մարմինդ, երբ զգլխած հագելին՝
Թեւերու մէջ քեզ կը տանիմ շատ հեռուն,
Ձերդ վարդենի մը՝ պարտէզէն աստղերուն,
երբ կը ծագիս ուրախութեան արեւուն:

Սո՛ւտը միայն կախարդանքն է աշխարհին՝
Ուր մենք երազն րստեղծելով կը մեռնինք.
Սուտ են կապոյտն ու շափիւզան ծովային՝
Որոնց միայն ցուրտ հայելին է երկինք:

Երբ քողերդ ալ կը քերթատուին ձիւնաքոյր
Վարդերու պէս շափրակներով քափանցիկ,
Իմ հոգիիս մեծեանին մէջ խնկարոյր
Ամսատշեկ արձան մըն ես գեղեցիկ:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

Ղ. ԺԻՂԱՅԻ

ՏԱՄՆԵՐՈՐԳԻ ԱՆՈՒՆԸ

Յանախակի երեւոյթ մըն էր դարձած այլեւս, հինգերորդ դասարանի տըղոց եւ աղջիկներուն ծիծաղը շարժող, եւ ուսուցիչի գէմքին վայրոյթ հրաւիրող:

Ամէն առաւօտ, տառլին պահուն, երբ ուսուցիչը ներկաներու եւ բացականերու ցանկը ճշդելու կը սկսէր, միշտ տասներորդ անունին գիմացը կանգ կ'առնէր եւ անորոշ ակնարկներ կը նետէր չորս դին: Յակոբ, ամօթխած եւ խրպոտ ձայնով կը պատասխանէր՝ «ներկայ պարտն» եւ շքերտուն վրայ սեղմուած ծիծաղ մը կը զրոշմուէր:

Գասարանին մէջ տիրող այս ընդհարացած ծիծաղը, ինքնին տարօրինակութեան մը պատկերը կը յայտնաբերէր: Ո՛ր ոք կը ծիծաղէր հեղձեւու միտումով, այլ, Յակոբին ինքնութիւնը իր ամբողջացած իմաստով, կը մազնիւէր շքապատը եւ կը ներշնչէր համակրանք:

Օր մըն ալ անխուտափելիին պատահեցաւ: Ուսուցիչը ծիծաղի այդ նշանաւոր պահուն վճռական շնչով դասարանին ուղղեց իր հարցումը՝ «ինչո՞ւ Յակոբին անունը լսելնուզ պէս կը ծիծաղիք»: Գասարանին լուսիւնը ստիպեց ուսուցիչը, որ տղոյմէ մէկուն օձիքէն բռնէ լուսաբանուելու համար: Ստեփանն էր որ ոտքի հրաւիրուեցաւ: Ի՞նչ պիտի ըսէր խեղ-

ճը. դժուարին գրութեան մէջ էր: Բայց, որտեղ աշտոյժ տրամադրութեամբ մը պատասխանել ուսուցիչին. «Պարտն, դասարանի տղաքս առաջին օրէն, Յախուզ կնքած ենք ձեր կարգացած ցանկի տասներորդ անունը»:

– Ինչո՞ւ, տրազ հարցուց ուսուցիչը:
– Որովհետեւ ան մեր տարեցն է: Մէկը դասարանի կտեւէն ցած ձայնով բռաւ՝ «Մեր պապան է, պարտն»: Եւ ընդհանուր ծիծաղի մէջ զեռ լսուեցան՝ «մեր հերոսն է, գիտունն է, սիրելին...»:

Այս պատահարին երկրորդ օրը ուտուտեան, ուսուցիչը եւս սկսաւ մասնակից ըլլալ դասարանի ընդհանուր զուարթ մթնոլորտին, տասներորդ անունը «Եախուզ» կանչելով:

Յակոբին համար եզածը բնական եւ անխուտափելի դէպք մըն էր: Խորքին մէջ կարծէք թէ կը սպասէր ան նման պատահարի մը, դառնալու համար «վաւերացուած» Եախուզ մը, հերոս մը, դասարանի պապան, խելացին եւ բոլորի կողքին՝ հինգերորդ դասարանի սիրելին, աղոց եւ աղջիկներու լա՛ւ Յախուզը:

Միջնահասակ, սեւաչնայ, ամուր մըկաններով աղայ մըն էր ան: Գլխուն մազերը միայն՝ օրը-օրին կը ձորանային: Իր միակ մտահոգութիւնն էր զարձած:

Սակայն Յակոբ, կը շարունակէր տարա-
տի ետեւի գրպանին մէջէն, իր նշանաւոր
սանտրին գլուխը միշտ ցցուն պահել:

Օր մըն ալ բնաւ չբացակայող Յա-
կոբը բացակայեցաւ: Ուսուցիչը առանց
նշմարելու իր բացակայութիւնը, կար-
գաց բարձրաձայն «Նախուպէն անունը
եւ սպասեց պատասխանի:

«Բացակայ է այսօր, պարո՞ն»: Ետքը
չուկ մը՝ «բայց իր նշանաւոր սանտրը
ննրկայ»: Ընդհանուր ծիծաղ մը անցաւ:
գասարանին մէջէն, Տղաքը Նախուպէն
ետեւի գրպանէն թուցուցեր էին սանտրը:

- Արլլա՞յ, հիւանդ է:

- Լուր չունինք, պարո՞ն:

Այդ օրը այնքա՞ն կազաց, որ դասա-
րանի տղաքն ու աղջիկները լրջացած
Հայեացքներ կը փոխանակէին յաճախ,
եւ յորանջողներու թիւն ալ նուազ չէր:

Չափազանցօրէն զգալի էր իրենց սի-
րելի Նախուպի կատակներուն, խելացի
խօսքերուն, նոր յղացումներուն բացա-
կայութիւնը:

Երեկոյեան, դպրոցէ արձակուելուն
երկա՞ր գանգը հնչեց. դասարանի տղաքն
ու աղջիկները անտրամադիր կը պատ-
րաստուէին դասարանը ձգել, երբ ներկայ
չբացակայ կարգացող իրենց ուսուցիչը,
դեղնած երեսով, դիմացնին կեցաւ: Բո-
լորը իսկոյն չըջապատեցին զինք:

Ուղղով լուսնինէ մը հոտք, ուսուցի-
չը, խօսեցաւ. «Կ'ըսեն Նախուպէն մեռեր
է՞, տղաք. ինքնապարտի զոհ դացեր»:
Ս. - Ո՞վ ըսաւ, պարոն, - լուսնիւնը
խոցեց Ստեփան:

- Գպրոցի դռնապանէն իմացայ:

- Ըսել կ'ուզէք Ներսէս աղբարէն:

- Այո՞:

- Ծերունիի խօսքերուն մի հաւատաք,
պարոն. Նախուպը չի՞ կրնար մեռած ըլ-
լալ: Եւ տղաքը կայծակի արակնութեամբ,
խմբովին ձգեցին դպրոցը, ուղղուելով
դէպի Յակոբենց տունը:

Ձէ՛, կատակ չէր լուրը: Յակոբենց
տունը իրարանցումի մէջ էր: Ամէն կող-
մէ արկածի մասին կը խօսէին: Լացի
ձայներ կու գային ներսէն:

Տղաքը փողոցին մէկ անկիւնը դամ-
ուած մնացին: Ստեփանը սկսաւ լալ:
Բոլորը սկսան դլխիկոր լալ: Ձէ՞ որ ի-
րենց սիրելի Նախուպը մեռած էր. ինչ-
պէ՞ս պիտի նստէին իրենց դասարանը
այլեւս:

Գիշերը ո՞ւր բաժնուեցան իրարմէ:
Առաւօտեան, լուրէն տեղեակ էին
բոլորը:

Առաջին պահուն, տխրազէմ ուսու-
ցիչը սկսաւ կարգալ անունները:

Տասներորդ անունին վրայէն լուե-
կայն անցաւ:

Ստեփան, ընդմիջելով ուսուցիչը ը-
սաւ. «Պարոն, Յակոբին անունը կը խընդ-
րենք պահէք ցանկին վրայ, ան միշտ
ներկայ է բոլորիս հետ», եւ յուզուած
նստեցաւ տեղը:

Ուսուցիչը գլխու նշանով իր հաւա-
նութիւնը տուաւ:

Ետքաթ մը, առանց դասերու ուշա-
գրութիւն սալու, տղաքը անտրամադիր
եւ յուզուած մնացին:

Իսկ «Նախուպէն նշանաւոր սանտրը,
որ կատակով թուցուցեր էին ատենին,
Ստեփանը ժառանգեց:

Ղ. Ժ.

Լոնտոն



ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐՓՈՒՆ

ՄԵԾ ԱՌԵՂԾՈՒԱԾԸ Ի ՆԱՐԵԿԱՑԻՆ

Չափազանց սեղմ ու սահմանափակ է մարդկային այն մարմինը, որուն մէջ կը գտնուի անեղբորէն մեծ մարդկային հոգին:

Եւ որովհետեւ բացառաբար նիւթեղէն է մարդկային այդ մարմինը, ուստի՝ իր կարիքներով ու ցանկերով, հեշտանքներով եւ աստիճանական մահացումով, ան մշտապէս կը կաշկանդէ ու կը հաւմէ մարդկային հոգին — կը խանդարէ, անոր ձգտումը հասնելու համարումի, եւ հազար ձեւով կը խափանէ, որպէսզի մարդկային հոգին՝ թոխչքով մը անարգել ամբողջանայ, կատարեալ դատնայ:

Եւ սակայն ու շնայած մարդկային մարմնի ու հոգիի բնետային այս հակադրութեան, այնուամենայնիւ, անբակասեւի զէկուսիւնն մը ոչ միայն իրարու է կապած այլեւ՝ «միախառնած» է իրերամերժ այս գերկուշները:

Ի՞նչ առեղծուած է ստիկա:

Ինչո՞ւ անօրինակ այս մէկուսիւնը՝ զոյգ իրերամերժ տարրերէ բաղկացեալ: Արդեօք անո՞ր համար, որ զիրար չէզոքացնե՞ն՝ փոխադարձաբար:

Սակայն, եթէ այդպէս ըլլար, ապա շատ ու շատ վաղուց արդէն, մարդու

մարմինը՝ անոր հոգին, եւ մարդու հոգին՝ անոր մարմինը մոխրացուցած պիտի ըլլային:

Եթէ այդպէս ըլլար, այսօր գոյութեան հետքն իսկ պիտի չգտնուէր ոչ մարդուն եւ ոչ ալ իրականութեան մը մարդկային:

Միթէ, ա՞յն է առեղծուածին բացարութիւնը, որ երկուութիւնը մարմնի ու հոգիի դրուած է նոյն ու մէկ այս մարդուն մէջ՝ անո՞ր համար, որ երկու տարրերը զիրար հակակշռե՞ն:

Բայց նման վարկածի մը կատարեալ կիրառումով եւ բացարձակ հաւասարակշռութեան մը հաստատումով՝ միայն ճահճացում, անարժանացում ու վերջնական զարնցում պիտի պատճառուէր, այսինքն՝ զարձեւ՛լ մահ:

Մինչդեռ առարկայական փաստը այն է, որ մարդը կը ծաղկի իր մարմնով — բայց անհամեմատօրէն աւելի մեծ խորքով ու լա՛յն տարողութեամբ՝ ան իր հոգիով կը ծաղկի:

Ուրեմն, չկայ այնպիսի փոխադարձ հակակշռուած, որ կատարեալ ու բացարձակ հաւասարակշռութիւն հաստատելով մարդու ո՛րքան մարմինը, նո՛յնքան ուլ հոգին անարժանցնէր, մահացնէր:

Ի՞նչ կզրակացնել:
Արդեօք, անլուծելի՞ է առեղծուածը:
Եթէ Հաւանական շնկատենք ասիկա, բո-
լո՛ր պարագաներու տակ, Հարկադրուած
ենք զայն առնուազն Հնարաւոր սեպել:
Եւ սակայն, նո՛յնքան Հարկադրական
է՛ նո՛յնքան Հաւանական ու Հնարաւոր
Համարել նաեւ այն, որ եթէ ոչ այսօր,
այս փաղը, եթէ ոչ փաղը, այս ասկէ
Հազար տարի ետք՝ առեղծուածը պիտի
զազրի առեղծուած բլլալէ: Պիտի լուծ-
ուի՞:

Ո՞վ պիտի ըլլայ զայն լուծողը:
Մարդը, անսարակուսելիօրէն: Ու-
րիչ ո՞վ կայ:

Եթէ կայ Աստուած, այս միայն ու
բացառաբար՝ մարդու աստուածիմացու-
թեամբ է, որ Ան կայ:

Ասկէ անդին, կը մնայ այն, որ թե-
րեւս ամենաբխորոշն է տրուած բո-
լո՛ր Հարցումներուն:

Մարդու էութիւնը զոյաւորող եւ
միասնաբար փթթող որչա տարբերէն՝ ա-
նոր մարմինէն ու հոգիէն՝ ո՞ր մէկն է,
որ պիտի Հասնի առեղծուածի լուծու-
մին:

Անստարկելիօրէն — մարդու հոգի՞ն:
Ո՞վ դիտէ, գուցէ մաս՞ով մը — անխմա-
նայի ինչ — որ կերպով ու ձեւով — նաեւ
մարմինը մարդուն:

Մակայն, դերագոնցօրէն աւելի խոր
ու ծաւալուն չափով՝ մարդու հոգին է,
որ պիտի Հասնի առեղծուածի լուծու-
մին:

Եւ որպէսզի ասիկա իրացուի, մար-
դու հոգիի ծառայութեան մէջ կը դանդա-
ւին անոր ոչ միայն մարմինը, այլեւ՝ ա-
նոր սիրտը, ոգին ու միտքը:

Այսպէս — նախ՝ սիրտը մարդուն:
Բարձր պարսմներու, անզազար բազ-
մապատկուող զգացական փորձարկու-
թեանց եւ օղակ առ օղակ միշտ ընդար-
ձակուող զգացումներու ուրոյն զաշ-
խարհ մըն է սիրտը մարդուն:

Ու թէեւ արժատացած՝ սեփականի՞ն
մէջ, այնուամենայնիւ ան մշտապէս ա-
ւելի՛ կը ձգարի, եւ մշտապէս աւելի՛ Հա-
զարդակից է՝ ծնողքին ու զաւակին, զը-

րացիին ու արենակիցին, առաքելակիր
եզրայր մարդուն եւ, վերջապէս, նաեւ
ա՛յն վախճանական մեծութեան, որ Հա-
մաշարի է ու Համազօր՝ աստուածու-
թեան:

Եւ անդադրում կերպով ու մշտապէս՝
կը նուազի՛ զսեփականն, մինչ անդին՝
կը բազմապատկուի, կը ծաւալի, անեզ-
րօրէն կ'ընդարձակուի՝ այլասիրարիւնը
մարդու սիրտին:

Երկրորդ. — ոգի՞ն մարդուն:
Գիտական ամէն բանաձեւումէ եւ գի-
տութեան ստուգիչ զմանդակին մէջ եր-
բեւէ բռնուելէ խուսափող ուժ մըն է
մարդուն ոգին:

Շատ յաճախ, անոր Համար կենաց-
մահու պայման են մարդու անհատական
թէ Հաւաքական ազատութիւնը, ճանա-
չումն ու կիրառումը յատկապէս կարե-
ւոր Համարուած տուեալ մէկ ճամարու-
թեան, եւ ընդհանրապէս՝ գոյութիւնը
պայմաններու, որոնք Հնարաւոր կը զար-
ձընեն մարդու իմաստասիրական, մշա-
կութային, դիտական, անտեսական եւ
կրօնահոգեւոր արարչագործութիւնը:

Եւ որքան ստեպ՝ ստեղծէ զրկուած
մարդուն ոգին կը նախընտրէ չափի՛լ
մարմնով, որպէսզի մարմնի նման կաշ-
կանդումէն՝ մարդու քզիմ չլնեռնի:

Եւ վերջապէս — մի՞տքը մարդուն:
Անսահմանելի ու անսահման է կա-
րողականութիւնը մարդու մտքին: Անո՛ր
չնորհիւ է, որ ամուլ ու անբերրի անա-
պատը, կենարար Հաց Հայթայթող ա-
րարչագործարանի կը փոխակերպուի:
Ա՛ն է, որ ոչ միայն կը դիտէ՛ աստղերը,
այլեւ՝ կը չափէ՛ զանոնք: Եւ անո՛ր կա-
տարած ստուգումներով ու տուած ուղ-
ղութեամբ՝ հողածին մարդը կը ծրագրէ
Հրաժեշտ անել այժմու իր մոլորակէն,
եւ արդէն իսկ կը պատրաստուի անհու-
նին մէջ սաւառնիլ եւ հոն այլ մոլորակ-
ներ որոնել ու գտնել:

Եւ ո՛չ ոք գիտէ, որովհետեւ ո՛չ ոքի
տրուած է դիտնալ, թէ ի վերջոյ ո՛ւր
պիտի Հասնի՛ սահման չճանչցող եւ ա-
մէն արդելք խորտակող մարդուն սիր-
տը:

Այս բուրբէն ետք եւ անմիջապէս, հարկաւոր է վերահաստատել, որ մարդկային սիրտ, ոգի ու միտք, մարդկային Հոգիին է, որ կը սպասարկեն: Հոգիի՛ աջակից գրադուկներն են անոնք: Որով, այդ գրադուկները կը շարժին Հոգիի՛ դրդումով, անո՛ր ձգտումներուն ի խընդիբ, եւ վախճանական ա՛յն նպատակով, որ աւելի իրական ու իմանալի, աւելի սմայիչ ու իրանալի դառնայ մարդու հոգիի՛ առաքիլութիւնը:

Իսկ մարդու Հոգիի առաքելութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ ըլլալ՝ նոյնինքն մե՛ծ առեղծուածի - մե՛ծ բանալին: Եւ դուցէ, Հոգին ի՛նքն իսկ է այդ առեղծուածը, որ՝ առաքելութեան աստիճանական ինքնայայտութեամբ - կը քակուի՞ կ'իրանայ, կը լուծուի՞:

Գուցէ Հոգին ի՛նքն է այն առեղծուածորէն անկատարը, որ սանդխամատառ սանդխամատա՛ր տո՛ւմ, ոգի՛ով ու մտք՛ով կը վերանայ, կը վեհանայ: - Հասնելու համար այն համալրումին եւ ամբողջացումին, որոնք անկատարը կատարելալ պիտի ընծայեն եւ չքեղ առեղծուածը, չքեղորէ՛ն լուծեն:

Ինչ ալ ըլլայ, անաւարկելին կը մընայ այն, որ միայն մարդո՛վ իմանալի եւ իրանալի աստուածութիւնը՝ մարդու Հոգիով է հնարաւոր:

Այո՛, սրտին աջակցութեամբ: - սակայն երբե՛ք՝ միայն սրտով:

Այո՛, ոգիի աջակցութեամբ: - սակայն երբե՛ք՝ միայն ոգիով:

Այո՛, մտքին աջակցութեամբ: - սակայն երբե՛ք՝ միայն մտքով:

Այլ՝ այս բուրբը համադրող ու ներդաշնակող եւ այդպիսով երազը իրականութեան կերպարամափոխող մարդու Հոգիով:

Եւ ճիշդ ասո՛ր համար՝ ա՛յլ են Յիսուսի մը ու Պուտոյի մը - ա՛յլ են Շէյքսպիրի մը, Լինքոլնի մը ու Մոնթէսզիոսի մը - ա՛յլ են Արիստոտէլի մը, Տեղաբիթի մը եւ Նիւթընի մը տեղն ու դերը համահամընկային ծաղկումին ու փթիւմունքին մէջ եւ -

- էութեամբ այլ, տարողութեամբ այլ, առաքելութեամբ այլ են տեղն ու դերը հայ նարեկացիի:

Անխուսափելիորէն՝ մարդ ու մարդկութիւն միշտ աւելի՛ պիտի Մարդման:

Եւ պիտի հասնին այն պահուն, երբ հասկնան ու ճանշնան, որ ցայտօր՝ հայ նարեկացիին է անգիրազմեցիլի մեկնելը այն մե՛ծ առեղծուածին, որուն միակ մե՛ծ բանալին՝ Հոգիին է մարդուն:

ԲԵՆԳՒԱՐ Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ



ՄՏԱԾՈՒՄԻ ԵՒ ՀԱՌԱԶԱՆՔԻ ՇԻՔԵՐ

Մեր վրիպումները եւ մեղքերը տեղ մը պիտի անդրադառնան սերունդին նակատագրին վրայ: Երբեքու մեղանշումները, որոնց մասին յաճախ կը գանգատինք, արդիւնք են շատ անգամ երեցնելու սխալներուն, գորս կ'անցիտանանք սակայն:

Սանձել իր մոլութիւնները՝ կամֆի տէր մարդու մը գործն է. գրականութեան մէջ կայ սանձում մը, որ արուեստի կատարելութիւնը ունի սելեակտ, եւ որ կը տանի գրողը նուազումներու: Գտնելիս իր բժաշկագրութիւնն է, ու նաեւ իր պատրաստութիւնը, որուն փրկարար դերին մասին պէտք է համոզուած ըլլայ ամէն գրող, զանցումներէ հեռու մնալու համար:

Տագնադը չի կրնար փրկել գրող մը որ կ'անտեսէ արուեստին իրաւունքները ու կ'ապաստանի իր բնածին կարողութիւններուն:

Ներկան միշտ նուազ հրապուրիչ կը թուի անցեալին հետ բազումամտ: Անցեալը, որուն կարուստը կ'աւազենք յաճախ, իր հերքին ներկայ մըն էր այն ատեն, երբ մենք դժգոհ էինք իրմէ, դարձեալ:

Ըսենք ուրեմն, որ անցեալի կարուստին մէջ մենք կը տեսնենք ասորնու վերապահուած օրերու նուագումը, որ կը դառնայ գլխաւոր պատճառը մեր դժգոհութեան:

Խմտտուն են անոնք, որ կ'աշխատին լեցնել իրենց առօրեան գոարքապրումներով, ու չեն սպաններ ժամանակը անհարկի տրտուկներով:

Ամէն ճիգ որ կը մտնեն մեզ աստիճան մը մեր իտէլաներուն, կը մնայ երաշխիք մեր կամֆին: Անիտէլ անձ մը կամֆէ գուրկ մէկն է, որ մեղկութեան ուղիներուն վրայ կ'ամլացնէ իր արիւնը:

Ստեղծագործութիւնը լարումէն կը ստանայ իր ուժը: Պէտք է նստիլ սեղանի մը առջեւ, կոչումքի հրաւիրելու համար մուսանքը:

Ինչպէս կը նստինք իրախնամքի սեղաններու շուրջը, միասին մտնալու համար առօրեայէն մեր ուսերուն իջած խոնգէնքն ու հնկումները:

Առանձնութեան մէջ գեղումներ կան, որ տուերի մէջ կը ձգեն ամբոխին հետ մեր ունեցած խանդավառութիւնները:

Տեղ մը գտնուածները մեզմէ կը խլեն մեր անհատականութեան դրոշմ տառը կարկանդակը ու կը դարձնեն մեզ ծանծաղ կիրքերու գերին:

Բարոյական ամէն վարդապետութիւն կեանքը իմաստաւորելու եւ զանգուածները խօյակամ գեղումներէն հեռու պահելու նպատակով քանձանքուած տեսակէտներու խտացում մըն է:

Իբրեւ այդպիսի՝ դարաշրջանները իրենց դրոշմը դրած են անոնց վրայ:

Հռովմայքը ծանրորէն նստած ֆ անոնց մէջ, ուստի եւ փոխադարձ ժխտումներու իրազուրկում մը, որ պէտք է հետեւանքը համարել ժամանակի իրաւունքներուն:

Մարդը սակայն առանց բարոյական բարձրագոյն տեսակէտի մը, պիտի մզուէր խրատներու ապրումներուն: Պիտի իջնէր իր բարոյական գահէն վար ու դառնար նմանին դժբախտութեան պատմաւ:

Մերժելով աստուածային որեւէ ծագում բոլոր վարդապետութեանց, պէտք է ընդունել, որ մարդը աստուածութեան բարձրացնող գեղեցկութիւններ կան անոնց բոլորին ալ մէջ:



Միակնդմանի ճիգերով հաւաքական սկնառու հրաշքներ կարելի չէ գործել:

Սփիւռքի մէջ մեր վերջին ֆառասուն տարիներու ազգային կեանքը քաւայեցու առաւելապէս մտաւորական դէմքերու եւ սրոշ կուսակցութեան մը եւ մարմիններու ցոյց տուած հետաքրքրութեան ծիրին մէջ:

Այլ պիտի ըլլար մեր ներկայ վիճակը, եթէ հայ կրեւտներ բերէին իրենց նիւթական նպաստը բաններուն անոնց, որոնց շնորհիւ կրցանք քաշկրտել մեր գոյութիւնը ամէն կողմ:

Հայ կրեւտը պարտի անդրադառնալ այս մշտնադարձութեան ու կանգնել գորակից՝ հայ մտքին թափած գոյատեւման բոլոր տեսակի աշխատանքներուն:



Ֆազաֆական կուսակցութեան մը անդամները ինչ ուխտով ալ կասուած ըլլան ընդհատուր դաւանանքի մը, որուն շուրջ գտած են զիրար, սխալ գործած պիտի ըլլային ձեռնբափ դառնալով իրենցմէ ունանց շեղումներուն կամ ճարտիկ խարդախութիւններուն համար:

Ընդհակառակն, անոնց պարտականութիւնն է խտացնել համայնեանքու ֆանակը ու պահել իրենց ձեռքը գրոշակը, որուն շուրջ հաւաքուիլ երգուրնցած են:

Հուսկ՝ ֆազաֆական կուսակցութիւն մը համարին եւ համարաբարոյական անձերու բազմութիւն մը չէ, ինչպէս ազգ մը չէ հաւասարագոր բարոյականով ու նուիրումով մէկտեղուած ֆազաֆացիներու բանակ մը: Իսկ մեմֆ չենք հրածարիլ մեր պատկանած ազգէն, որ կրնայ իր մէջ հաշուել եւ բարոյական եւ մտաւորական բարձր առաջինութիւններով օժտուած բազմաթիւ անհատներ, ինչպէս եւ ուրիշներ, որոնք զուրկ են առաջիններու բարեմասնութիւններէն:



Առանձնութեան մէջ արուեստագէտը կրնայ լծուիլ ստեղծագործ եր-

կունքներու, եթէ ասիկա ներքին է իրեն, ներքին չէ սոսկական քաղաքացիին, որ պարտի հետաքրքրուիլ իր ժողովուրդին ճակատագրով ու խառնել իր քրտինքն ու ձայնը զանգուածներու քրտինքին ու ձայնին, միջակ մարդոց զնկավարութենէն հեռու պահելու համար ճակատագիրը իր հայրենիքին:

Վ

Մեր անտարբերութիւններէն օգտուողները միջակութիւններ են միշտ, որոնց հասցէին ուղղած մեր հետագայ բալոր քննադատութիւնները շինարար սչինչ ունին:

Վ

Հոն ուր մեր ձեռնբափութիւնը կը մնայ փռտտ, միջակ մարդոց աւերները պիտի դառնան իբրդութիւն այդ փաստերուն մե'ր մեզքը ըլլալուն:

ՎԱՐԳԱՆ ԳԵՈՐԳԵԱՆ



ՇԷՅՖՍՓԻՐԻ ՏԻՊՈՐՆԵՐՈՒՆ ԱՆՄՈՀՈՒԹԵԱՆ

Գ Ա Ղ Տ Ն Ի Ք Ը

Պատասձ, սակայն ճշգրտութիւնը պահած, ղէտքերով, արտայայտութիւններով՝ վերարտադրել մարդը, զգացումներն ու արդումները՝ վերականգնողական զգացումները, մղել մտածելու, իրականութեանը մասին, իրական մարդուն եւ իր խնդիրներուն մասին. ահա նպատակը՝ եթէ նպատակ մը փնտրել ներկի ըլլար փաներական գրականութեան համար:

Իրական մարդու արարողութիւնը վերարտադրելու համար, միակ միջոցը իրական մարդէն մեկնելն է: Շէյքսպիր, իր գրեթէ բոլոր տուածներուն մէջ, իրականութենէ մըն է որ կը մեկնի, կիսնքի մէջ պատահած, տեսանելի, շուրջփոխի տուածէ մը: Իր գործերը սակայն լրագրական տեղեկութիւններ, չեն, ոչ ալ պատմական կենսագրութիւններ. իր հանճարը բերած է ղէտքերուն, աւելցուցած է մեծ նկարագիրներու ստեղծագործութիւն մը:

Վիպասան մը, թատերագիր մը կրնան իրական մարդէն մեկնելով, պատկերով կարգ մը դժերը անոր, աղաւաղելով ալ ալ դժեր, որոնք մաս կը կազմեն ամբողջական ճշմարտութեան, ներկայացնել մարդը իր ՅՈՒՆԳՐԻՅԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ. կամ կրնան նուազագոյնին իջեցնել յունգոյնը, աղաւաղել հասարակութիւնները մարդուն, ծածկել միջին կողմերը եւ ԻՏԻԱԿԱՆԱՄՆԵՆԸ, Շէյքսպիրը ընդհակառակն, միշտ կը ներկայացնէ մարդը իր ԲԱՐՆՈՒԹԵԱՆ մէջ, իր ԱՄԲՈՂՁ ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ մէջ, եթէ երբեմն կը շնորհակալ տիպարի մը զանազան դժերը, պահտս մանրամասնութեամբ չի գծեր անոր. քրտուցիչ դժերը,

հակասական երեսները: Եթէ կը ներկայացնէ մեղի մարդը մղուած մեծ կիրքէ մը, հրաբլբէ մը, կը ներկայացնէ նաեւ զայն հակառակ եւ հակասական մղումներու ճնշումին տակ. այդպէս է իրական մարդը՝ հակասական մղումներու թնճուկ մը:

Համէթի ամէնէն կատարեալն է հակասական մղումներու ենթակայ տիպարներուն: Թերեաւ նուազ շնորհակալ, սակայն նոյնպէս տատանուող վիճակի մէջ է, իրար հրմշտող, իրար չէղջացնող ցանկութիւններու ենթակայ՝ նաեւ Մաքսիթի: Այդպէս է մինչեւ անգամ իր ուշագրտութեան թատերակներէն ամէնէն քիչ բարդութիւն անեցող Վենետիկի Վաճառականին մէջ, եւ ասիկա իսկ ուժ եւ կենդանութիւն կոտ տալ, իրական կը դարձնէ Շայլոքի տիպարը, եւ կը մղէ գրագէտներն ու քննադատները, այսօր ալ, երբ դարեր անցած են, կրկին ու կրկին վերլուծելու անոր հոգեկան աշխարհը, ու այստեղ ապրող հակասական մղումները:

Գրուած 1594-ին, Վենետիկի Վաճառականը կը նախորդէ Շէյքսպիրի ամենախորհուրդեալ հետախուզումները՝ Համէթի, Օթէլլօ, Մաքսիթի, Արքայ Լիր, — եւ կը ծանուցանէ դանձուք: Շայլոք հրեայ վաշխատու վաճառական մըն է, որուն պաշտամունքը դրամին, շահուն հանդէպ, ընդգծուած է. ինչպէս նաեւ իր ատելութիւնը հանդէպ իր ցեղն ու կրօնը արհամարհողներուն, հանդէպ քրիստոնեաներուն: Գրածը մէկ կողմէ նպատակ է իրեն համար, միւս կողմէ նաեւ միջոց՝ արժէքաւորելու համար ինքզինքը, պարտադրելու ինքզինքն ու իր

ցեղը, այդ տակի զրիստոնեաներուն: Դրամը կարեւոր է, թանկագին, ու անոր կորուստը իրեն համար տառապանք է, սուգի համազօր. բայց ուրախութեան առիթ է այդ կորուստը, եթէ ատոր շնորհիւ կարելի պիտի ըլլայ զսա մը տալ զրիստոնեաներուն, վրէժ լուծել զինքն ու իր դրամը արհամարհողներէն:

Հակասական այս մղումներուն ծիծաղալար մէկ տեսարանը կայ Վենետիկի Վանատականի արար Գ.ի երկրորդ տեսարանին մէջ, երբ Տիւպալ կուգայ տեղեկացնելու Շայլոքի, թէ տուճէն փախած, եւ զանձարկղը հետը տարած աղջկան հետքերը գտած է ձենոյայի մէջ, ուր անգեկացած է անոր առատութեն զրամ ծախսելուն (Շայլոքի ցաւ, ու. տառապանք) ուր տեղեկացած է նաև, թէ վենետիկցի զրիստոնեայ տուարականներէն Անթոնիոյի նաւերէն մէկը ծո-

վամոյն եղած ու կորսուած է (Շայլոքի հրճուանք, որովհետև այդ պատճառով հաւանաբար Անթոնիո չկարենայ վճարել իրեն, Շայլոքին իր ունեցած պարտքը, եւ ինքը, Շայլոք, կարենայ վրէժ լուծել այդ անպիտան զրիստոնեաներէն, փրկեցնելով անոր մարմնէն, ըստ մուրհակի պայմաններուն, կէս թիւ ճիւղը): Այս տեսարանը կրնայ Մոլիէրին հայթայթած ըլլալ նիւթ, իր «Ագաւհը» թատերակին համար:

Շատ աւելի հետաքրքրական է ուկայն, եւ նորանոր հորիզոններ կը բանայ մեր առջև Շայլոքին հոգեկան մթին աշխարհէն, չորրորդ արարուածի առաջին տեսարանը, երբ Շայլոք, դրամատէրը, դրամապաշտը, կը մերժէ ընդունիլ իրեն առաջարկուած եւ իր առնիւթէն երեք անգամը եղող գումարը:

ՇԱՅԼՈՒՔ. — Գայտնել եմ արդէն Ձերդ քարճութեան թէ ի՞նչ միտք ունիմ, եւ երդում եմ արել մեր տարր Շարաքով՝ Առնել մարիակիս ստանալիքը, այն է՝ տուգանքը: Եթէ դուք մերժէ՛ք՝ թող փորձանք իջնէ՛ք: Ձեր օրեմօքների եւ ձեր քաղաքի ազատութեան վրայ: Կը հարցրնէ՛ք ինձ, թէ ինչու համար գերադասում եմ Մի քաջ լէշի միւ, քան երեք հազար տուգաղ ստանալ: Դրան չեմ ուզում պատասխան անել. Այլ դիցումք, սիրտս այդպէս է ուզում. պատասխան չէ՞ այդ: Ասեմք թէ մի մուկ տունս աւերում է, եւ սիրտս ուզում է տանի հազար տուգաղ ծախսել, որ ճրան թոյն տան, սպանեն: Ա՞յս էլ բաւական պատասխան չէ՛ ձեզ: Մարդիկ կան, որոնք չեն սիրում տեսնել յօրանջող մի խոզ, Ուրիշներ, որոնք կատու տեսնելիս խեղազարում են, կամ թէ ռեզախոս պարկապուկի ձայնը լսելիս՝ Ձեռն կարողանում մէզները բռնել. Զգայնութիւնը, կրքի տիրուէին, վարում է կիրքը՝ Նայելով թէ ի՞նչ այտարժ է իրեն, եւ ինչ անայտարժ: Լաւ, թող հիմա գանք ձեր պատասխանին. Քանի որ ոչ մի դրական պատճառ չէ կարելի տալ, Թէ ինչու՞ մի մարդ գզուանք է գզում յօրանջող խոզից, Միւսը՝ անվնաս, օգտակար կատուից, Երրորդը առած պարկապուկից. այլ բռնազատուած՝ Պէտք է տեղի տայ անխուսափելի խայտառակութեան, եւ վնասուելով՝ ինքն էլ վնաս տայ, Նայն ձեռով եւ էլ չեմ կարող անել, չեմ ուզում անել, Թէ ինչ պատճառով մի դատ եմ վարում Անթոնիոյի դէմ,

Որ վնաս է ինձ. այլ այսօր միայն,
 Որ այդ մարդու դեմ մի հին ռիւսիւմ, մի տեսակ գարշամբ:
ՊԱՍԱՆԻՕ.— Պատասխան չէ այդ, դու անգգայ մարդ,
 Որ արդարացնէ անգուք վարմանդ:
ՇԱՅԼՈՔ.— Պարտաւորած չեմ իմ պատասխանով հաճոյամայ բեզ:
ՊԱՍԱՆԻՕ.— Մի՞թէ ամէն մարդ սպանում է այն, ինչ որ չի սիրում:
ՇԱՅԼՈՔ.— Էլ ի՞նչ տեսի է, եթէ մարդ չուզէ տատճն սպանել:

ՊԱՍԱՆԻՕ.— Քո հրեմ հազար տուկադի վոյտան՝ անա վեց հազար:
ՇԱՅԼՈՔ.— Եթէ վեց հազար տուկադներից ամէն մի տուկադ
 վեց բաժին դառնար, եւ ամէն բաժին՝ ինքը մի տուկադ,
 Ես չէի առնի. գարձեալ մուրհակս կը պահանջէի:

ԳՈՒՊՄ.— Ի՞նչ ոգորմութիւն կարող ես յուսալ՝ երբ ինքդ չունիս:
ՇԱՅԼՈՔ.— Ի՞նչ դասատանից պէտք է վայելնամ՝ երբ յանցանք չունիմ:

Գու՛ք էլ շատերդ, դրամով գնած գերիմեր ունիք,
 Որ ձեր էշերի, ձեր ջորիների եւ շրների պէս
 Մտաւայեցնում էք ստրուկի անարգ գործեր անելու,
 Քանի որ նրանց գնել էք փողով:
 Կարո՞ղ եմ ասել, բաց թողէք դրանց,
 Կամ ամուսնացրէք ժողովուրդիդ հետ,
 Ինչո՞ւ բռնան տակ էրսիմք եմ թափում.
 Երանք էլ ձեզ այն թող բնեմ փափուկ ամկողիմներում.
 Երանց էիմքերն էլ թող ախորժ գգան նայն խորտիկներից:
 Բայց դուք ինձ կ'ասէք, «Այս ստրուկները մեզ են պատկանում»:
 Ես էլ ձեզ նայալէ՛ս պատասխան կը տամ.
 Այս մի ֆունտ միսը, որ պահանջում եմ, շատ թանկ եմ գնել.
 Ինձ է պատկանում, եւ պէտք է տանեմ:
 Եթէ մերժէք ինձ՝ թու՛ն ձեր օրէնքիմ.
 Եւ ձեր վեճակի հրովարտակները ոչ մի բան չարժեն:
 Դատ եմ պահանջում: Պատասխան տու՛էք. անո՞ւմ էք թէ ոչ:

Ուրիշ՞ կու դայ Շայլոքի մօտ հոգե-
 բանական այս կարծրացումը եւ մերժու-
 մը դրամին՝ իր պաշտամունքի առարկա-
 յին: Ինչքա՞ն խորը պահուած ապրում-
 ներու արտացոլումն է իր անեկեքէն ե-
 րեք անգամ անելի մեծ դումարի մը մեր-
 ժումը, ի խնդիր իրեն տրուած մութհակի
 գործադրութեան: Շայլոքի հիմնական
 դժին հակասող այս երեսօյթը անելի մեծ
 իրականութիւն մը կը բերէ տիպարին,
 ներքին իրականութեան մը արտացոլու-
 մովը: Շայլոք, զոհելով իր դրամը, ձեռք
 կը բերէ պատրանքը ըլլալու ինքը, ու-
 բուն կեանքը միշտ ուրիշներու կողմէ ըս-
 պառնալիքի տակ է, անզամի մը համար
 զէթ ՈՒՐԻՇԻ ԿԵԱՆՔԻՆ ՏԵՐԸ. եւ այս

պահանջը, ներքին այս ձգտումը երեւան
 կու դայ թէ շատ անելի զօրեղ է իր մէջ,
 քան իր ազահութիւնը, կծծիութիւնը,
 ընչաքողցութիւնը, ու կը բերէ իրեն
 զարհուրելի մեծութիւն մը:
 Շէյլոքի իր տիպարները ունին ու-
 բիշ առանելութիւն մըն ալ, այլ ողբեր-
 դութեանց տիպարներուն վրայ, այդ ալ
 իրենց ծաւալն է: Գրականութեան մէջ կը
 գործածուին երկու տեսակի տիպարներ,
 միասաւ տիպար մը, ուր առնուած է հիմ-
 նական գիծ մը միայն եւ դայն բացառ-
 րելով, լրացնելով այդ գծի նկարագրու-
 թիւնը զանազան մանրամասնութեանց շը-
 նորհու, կրկնելով ու ընդգծելով դայն,
 առաջ բերուած է ըմբռնելի, տպաւորելի

տիպար մը, ազդու նոյնիսկ, ինչպէս օրինակ Տիգէնակ Կր-Միքոսըրը, որ անկասկած գրական արժէք ունի ու կը պատէ զայն, ոակայն նուազ ամբողջական է քան ծուալ ունեցող տիպարը: Մուալ բառը իր հետ կը քերէ Հաստութեան, Թանձրութեան, Խորութեան ըմբռնումը: Մարդոց ըրածն ու ըսածը չէ միայն որ կը սահմանէ, մինչեւ իսկ կիսովին միայն կրնայ սահմանել գիրենք՝ այլ նաեւ իրենց ըսելու, կամ ընելու ձեւը՝ այլ նաեւ իրենց շատճին աւ ըրածին ներքին գրգայատնառները, արտաքին գրքուածը, իրենց պատահածը. այլ նաեւ իրենց ըսուածին ու պատահածին իրենց վրայ թողած ազդեցութիւնները, այդ ազդեցութեանց տակ իրենց կրած փոփոխութիւնները, եւ ստացած նոր, երանգաւոր դիմադիրը:

Եթէ միայնաւ անձնատարութիւն մը ներկայացնելը աւելի գիրքին է, եւ աւելի մեն թուով ընթերցողներ կրնան պատնոնք ըմբռնել օւ միտքերնեւ պահել, բաղմախաւ, ծուալ ունեցող, անձնատարութիւնները աւելի յրիւ են, աւելի մօտ են իրականութեան, որով եւ աւելի տիրապետական ու անմահ:

Օթելլօ կը սպաննէ իր կինը՝ Տեղտեմոնտն, զայն իրեն անհաստատարժի վարածելով: Ասիկա ազբն է: Արթիկի գրգայատնառ ունի իր նշանակութիւնը՝ հիմնական. եւ կը բերէ իր նպատակը տիպարի կառուցման, տարբերումին այլ տիպարներէ. սիրոյ ու նախանձի տիրանալը բոլորն ալ նոյնը չեն, նոյն մարդոց գործածող չեն, նոյն սպարմաները չեն արտայայտերս:

Թէեւ Լուրդիկոյի «Ի՞նչ տնուս տանք ընդէ» հարցումին ի պատասխան Օթելլօ կ'ըսէ՝

«Ինչ որ կամենաք:
Պատուով մարդասպան եք-է կամենաք.
Քանզի ոչ մի բան չեմ արել քեզից, այլ պատուի համար»:

Սովայն ասիկա Հանրութեան տրքուած պատասխան է միայն՝ միակ ըմբռնելին այդ բողէին, ներկաներուն կողմէ: Իսկ մեզի համար, մենք ոք ծա-

նօթ ենք Օթելլօյի ներքին աշխարհին թաւերակի նախադէ աեսարաններէն, մենք գիտենք որ Օթելլօն նախանձոտ չէ:

«Մարդ չէ կարող ինձ խաղաղութեան դարձնել
«Անսլ թէ կիսն գեղեցկուհի է, սիրում է ճաշկերոյք
«Եւ ընկերութիւն. ազատ է խօսուած»
«Գիտէ լաւ երգել, ճառագել, պարել:
«Երբ կիներ լաւ է, դրամէ բոյսրը շատաբաններ են»
«Եւ ոչ էլ իմ քիչ արժանիքներն են,
«Որ անհամարժեք վախճ եմ ինձ ազդում,
«Կամ կասկած տալիս, թէ մա ինձոնից օտարացել է:
«Ոչ մտեր, տեսաւ, եւ ինքն ընտրեց ինձ:
«Ոչ Ծակօ. պէտք է կասկածից առաջ մի քան մկատում,
«Կասկածից յետոյ՝ պէտք է հաստատում,
«Եւ երբ հաստատուի, ոչինչ չի մնայ,
«Հեռու ինձանից ե՛ւ սէր, ե՛ւ մայրամուտ»:

(Արար. Գ. 2 տեսարան երրորդ)

Մենք պիտենք որ երբ Ծակօն կը յաջողութեամբ Օթելլօն, համոզել թէ Տեղտեմոնտն Քասիոյի սիրուհին է, Օթելլօյի բաւերքը նախանձի չին, պատասխայ հետ կարուսինն, այլ՝ իր սիրոյն:

«Հիմա տեսնում եմ, որ մշմարիտ է:
 «Ինձ մայիք եակօ, բայր յօյ սէրս փչ մ եմ հազմին:
 «Գնաց:
 «Քարքիր աւր վրէժ՝ քս փօս մկուզից
 «Սէր, յանձնիր քագդ, սրտաշէն գանջ լռնակալ յիմն»:
 (Աբու Գ., տեսարան երրորդ)

Մինչև անգամ սպանութեան տե- Իսկ երբ կը պարզուի իրեն համար,
 սարանին, երբ կնոջը ուղղուած իր խօս- թէ գինքը սիրող, անմեղ կինն է որ ըս-
 քին, թէ միտքը բեր մեղքերդ, Տեղտե- պաննած է, Եակոյի սաղբանքներուն զոհ
 մտնա կը պատասխանէ «Մեղքք քս սէրն երթալով, Օթեւոն կը պահանջէ որ պատ-
 է»։ Օթեւո կ'ըսէ. «Երա համար է, որ մըրի աշխարհին իր պատմութիւնը՝
 պէտք է մեռնես»:

«Ներկայացրէք ինձ այնպէս, ինչպէս կամ:
 «Ոչ պակասեցրէք, ոչ աւելացրէք չարամտաքեամբ:
 «Պէտք է ուրեմն դուք նկարագրէք մի մարդ, որ սիրեց
 «Ոչ խոհեմարար, այլ սաստիկ ուժգին:
 «Մի մարդ, որ դիւրաւ խանդատացազ չէր,
 «Բայց երբ որ լարուեց՝ ամէնպի մոլորուեց»:

Պարզ է ընթերցողին, կամ Հանդիսա- անբա, անով է որ կը տոանայ համահա-
 տեսին համար, թէ սպանութեան ներ- ւասար գոյութեան իրուածքը. ինքն իր
 քին զրդապատճառը ոչ պատուախնդրու- աւելին կ'արժէքաւորուի անոր սէրով, եւ
 թիւնն է, ոչ ալ նախանձը, այլ Սէր՛ը, կ'արժէքազրկուի՝ երբ կը կարծէ թէ Տեղ-
 ԿՈՐՈՒԹՅՆ ՍԻՐՈՑ՝ ՈՐ ԻՄԱՍՏԱԻՌ- տմտնա դազրած է սիրելէ պիտք ու կը
 ՐՈՂՆ ԷՐ ԻՐ ԿԵԱՆՔԻՆ»:

«...Մի մարդ, որ սիրեց ոչ խոհե- Այս պատճառաբանութիւնները ահա
 մարար, այլ սաստիկ ուժգին» աբթին, տարբեր իմաստ կը բերեն անոր,
 Այդ իսկ պատճառով, երբ անգամ մը կը բանան նոր խաւ մը մեր աչքին դի-
 լարուեցաւ իր մէջ կնոջ սէրը կորսնցու- մաց քակուող Օթեւոյի հոգեկան բարդ
 ցած ըլլալու մտածումը, հասաւ կեանքի աշխարհէն. ու ատով իսկ կը վերածեն
 իմաստը կորսնցուցած ըլլալու գրախու- զայն աւելի ամբողջական, աւելի բարա-
 թեան: Սեւանորթ Օթեւո Տեղտեմտնայի խուն, ապրող էակի մը:
 սիրով է որ կը մտնէ իր ժամանակակից Նւ աբթերն ալ զիտի առաջացնեն,
 սպիտակամորթներու ապրումներուն հա- կ'առաջացնեն իրենց հակազդեցութիւնը՝
 մահաւասար ապրումներու աշխարհէն նոր խաւ մը եւս բանալով:

«Բեզ համարուեցի եւ սպաննեցի.
 «Ինձ մնաց միայն ինք Ինձ սպաննել եւ քեզ համարուել»:

Կեդրակացնէ Օթեւո ինքզինք զարուստ- կան բաժնին՝ յիբոյ. վճարելով արար-
 հարելով ու իյնալով Տեղտեմտնայի մարմ- քին համար, իր կեանքով:
 նին վրայ, Շրջանակը կը փակուի, մար-
 դը կը վերադառնայ իր էութեան հիմնա-
 Բ. ՊԱՓԱՋԵԱՆ

(Շար. 2)

Իրանահայ աճեճն բեղմնաւոր գը-
րազներէն՝ Զօրիկ Միրզայեանն Յոյ սկը-
տած էր Ֆամայում գտնել միւս գաղութ-
ներուն մէջ, երբ անոգոք տանք հար-
ուածեց զինք, անցեալ տարի, Յուլիս
13-ին, երբ տակաւին յիսուճը չէր բե-
ւակոխած:

Շնոր էջ՝ պարբերագրքին յուրչ
խմբում գրողները, այս տարի, գրո-
ղին ընտիր գործերէն հատար մը յայս
ընծայեցին եւ Մարտ 17-ին շնուչ Ե-
րեկոյճի մը ընթացքին վեր առին բա-
նաստեղծին արժեանքները: Անոր մշա-
կած գրականութեան վերլուծումը կա-
տարող հետագայ գրութիւնը կարգաց-
ուած է այդ երեկոյքին ու հնդիմակին
կողմէ գրկուած շնագրին:

Մեր յաջարչ բիւով պիտի տամք
ճնոյշներ Միրզայեանի արժակ ու չա-
փածոյ գրութիւններէն:



ԶՕՐԱՅՐ ՄԻՐԶԱՅԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿԸ

Գրում եմ, գրում, տեսրակում այս մեծ՝
Սիրոյ եւ մահուան, հանոյճի մասին,
Հսկայ տառերով գրում եմ շատեր
Ու վառում հոգիս այս մեծ յնջոյճին:

Ասրում եմ, տանջում, ծիծաղում անվերջ,
Շնայլում ազաս՝ ինչ սրտում ունեմ,
Միմչեւ որ պայքի երակը կեանքիս
Եւ ժամը ենչի: Յետոյ կը մեռնեմ:

Եւ դու կը բացես այս տեսրակը մեծ,
Անտարբեր շարժմամբ կը բերքես մի պահ,
Եւ յետոյ կ'ասես կիսատ ծպիտով՝
«Աստուա՛ծ իմ, որքա՛ն երեկոյ էր մա»:

*Զօրիկի նկարագրի հարազատ ու ամբողջական պատկերն է այս՝ «Վեր-
ջերգ» խորագրով բանաստեղծութիւնը: Վերջերգ՝ ոչ միայն շնայլ
գրքոյի վերջին երգը լինելու պատճառով, այլ որովհետեւ որպէս վերջին
խօսք էր մէջ պարտակում է Զօրիկին կապուող ամէն ինչ:*

*Զօրիկը գրում էր, անվերջ գրում հայ գրականութեան մեծ տեսրո-
digitised by A.R.A.R.@*

կէ մէջ: Գրում էր բացառաբար սիրոյ եւ մահուան, յատկապէս մահուան մասին: Նոյնիսկ մահուան հանոյքի մասին:

Նա իր բովանդակ կեանքն ապրեց ծիծաղելով: Տանջուեց՝ իր զգայուն հոգու խորքում կրելով մարդկային ցաւերի ամբողջական ծանրութիւնը. բայց եւ ծիծաղեց: Ծիծաղեց ամէն առիթով: Ծիծաղեց ամէն ինչի համար: Ծիծաղեց ամէն ինչի վրայ. սկսելով իր անձից:

Նա ազատօրէն եւ առանց վարանելու շաղկապում էր սրտում եղածը: Ամէնքին ասում էր ամէն ինչ: Նոյնիսկ խօսքեր էր ասում որ ուրիշը կրկնելու պարագային խոսովութիւնների առիթ պիտի դառնար: Սակայն Զօրիկի կարկաշտն ու վարար ծիծաղը հարթում էր ամէն խոսովութիւն:

Նոյնքան հարուզատ էր յանաստեղծութեան մէջ գծուած իր մահուան պատկերը: Զօրիկը ապրեց ծիծաղելով՝ «մինչև որ պայթեց ևրակը կեանքի»: Եւ երբ ժամը հնչեց՝ ճիշդ նկարագրուած հանդարտութեամբ ու խաղաղութեամբ մեռաւ: Կիսատ մնացած ծիծաղի սառած հեաքը շրթին:

Անարդար է Զօրիկը միայն իր գրականութեան նկատմամբ:

Այսօր, երբ բացում ենք հայ գրականութեան մեծ տետրակը, նախ անտարբերութեամբ շէ որ թերթում ենք իր գործերը եւ կիսատ ժպիտով չէ որ խօսում ենք իր մասին, այլ արժէքներին, յատկապէս մեզանից ընդմիջող հեռացած արժէքներին յատուկ յարգանքով ենք կարդում իր գրածները եւ խորը ափսոսանքով եւ համոզուած ասում ենք «Արժէքաւոր գրող էր Զօրիկը»:

Հանգամանօրէն խօսել Զօրիկի գրական հանդանակի մասին, մի այսպիսի ձեռնարկում, ի միջի այլոց, անհնարին է: Զօրիկի բազմակողմանի գրականութեան իրական պատկերը պարզելու եւ արժանի արժէքաւորումը տալու համար անհրաժեշտ է մի քանի դասախօսութիւն: Այն ինչ փորձում ենք տալ այս գիրքը, մի աղօտ պատկերն է իր գործունէութեան: Անմիա, տեսարին կմտնող իր գրչի արգասիքի: Այն գրչի որ աշխատել է երեք տարբեր մարզերում եւ որոնցից ամէն մէկը բաւական է արժէքաւորելու համար հեղինակին: Զօրիկը թէ՛ լաւ ուսումնասիրող յօդուածագիր էր, թէ՛ արժանի թարգմանող եւ թէ՛ այդ երկուսից աւելի արժէքաւոր գրող՝ արձակագիր ու բանաստեղծ:

Իր բանասիրական գործունէութիւնը, ընդհանրապէս կեդրոնացած պարսկական գրականութեան շուրջ, արդիւնք է տարիների համբերատար աշխատանքի:

Յարալարժ ու անհամբեր Զօրիկը տարօրինակ խնամքով ու համբերութեամբ տարիների ընթացքում հաւաքել եւ դասաւորել է պարսկական գրականութեան մասին եղած բոլոր գտանելի աղբիւրների նիւթերը: Նա օգտուել է ոչ միայն պարսկական այլ նաեւ ֆրանսական, անգլիական եւ ատաւական աղբիւրներից:

Իր «Պարսկական գրականութեան պատմութեան» գիրքը, բաղկացած 1500 մեծադիր էջերից, այս տեսակետից լաւագոյն գիրքն է նոյնիսկ պարսկերէն գրքերի համեմատութեամբ:

Թէ՛ այս գրքում եւ թէ՛ ընդհանրապէս իր յօդուածների մէջ, Զօրիկը երեսն է դասին որովք բանահաւաք: Նա ընտրում ու դասաւորում է եղած ուսումնասիրութիւնները, եզրակացութիւնը թողնելով ընթերցողին: Սակայն պրպտումը կատարում է բարեխղճօրէն, ընտրութիւնը՝ դիտակցաբար եւ այնպիսի դասաւորումով որ ընթերցողը հեշտութեամբ ծանօթանում է ինչպիսի էութեան հետ ու յանգում է իր ցանկացած եզրակացութեան:

Այսպիսով Զօրիկը երկար տարիներ կատարում էր իր ուսումնասիրութիւնները, առանց լուրջ կերպով մտածելու գրանց հրատարակութեան մասին: Երբ յանկարծ մի օր զգաց որ՝ «եւ մութ է եւ ուշ»: Եւ իրեն ուշացած զտեսնելով արժանաւորների մեծ խնջոյքին բացազանչեց:

Սոյառե՛ք, եկայ, ուշացել եմ ես
Խմեցե՛ք ինձ հետ բաժակը վերջին:

Եւ որպէսդի գէթ վերջին բաժակը խմելու հնարաւորութիւնն ունենայ՝ անապարեց հրատարակել իր այնատութիւնները: Այդ օրուանից մէկը միւսի յետեւից կարդացինք իր ստորագրութիւնը կրող գրութիւններ, նոյնիսկ պատահեց, որ երեք պարբերականներ միտմամանակ հրատարակեցին իր երեք տարբեր յօդուածները: Իր տարածած մահից յետոյ գետ մի առ մամանակ Զօրիկի յօդուածներով զարգարուած պարբերականներ էինք քոտնում: Եւ այսօր տակաւին իր ուսումնասիրութիւնների մեծ մասը մնում է անսխալ վիճակում:

Զօրիկը բաւականին մեծ քանակութեամբ թարգմանութիւններ, ունի թէ՛ արձակ եւ թէ՛ լափածոյ, որոնց կարելոր մասը պարսկերէնից հայերէնի փոխադրութիւններ են:

Փոխադրութիւն ասացի, որովհետեւ Զօրիկը աւելի շատ հայացնում էր գրուածքը քան թարգմանում էր հարազատօրէն: Նա ընազրի բառերը ճշգրտօրէն հայերէնի վերածելուց աւելի մտահոգուած էր գրուածքի ընդհանուր մթնոլորտը վերտեղծելու հայերէնով:

Այդ իսկ պատճառով նրա թարգմանութիւնները, յատկապէս բանաստեղծութիւնների թարգմանութիւնը կարգալիս՝ չենք յիշում «թարգմանութիւնը գեղեցիկ դորդի թարս երեսն է» ծանօթ գարձուածքը: Այլ պարզապէս մեզ թւում է թէ՛ հայերէն բանաստեղծութիւն ենք կարդում, որը երբեմն նոյնիսկ իր գեղեցկութեամբ գերազանցում է ընազրին:

Վօղանցի բերե՛ք զանգերը բոլոր.
Դու՛ք բարասներ է՛ք:

Մի՛ վարող է ենթադրել որ այս տաղերը իրենց հարազատ երաժշտականութեամբ ու բառերի անբնագրօսիկ դասաւորումով կարող է թարգմանութիւն լինել:

Սակայն Զօրիկի իրական արժանիքն իր ստեղծագործութիւնների մէջ է: Բանաստեղծութիւն եւ արձակ:

Ինչպէս տեսանք ինքն իր գրականութիւնը ընտրուել է հետեւեալ տողերով.

Գրում եմ, գրում, տեսրակում այս մեծ
Սիրոյ եւ մահուան, հանայքի մասին,

Եւ իբրք Զօրիկի գրականութիւնը կեղրոնացած է այս երկու նիւթի լուրջ: Նա գրել է բացառաբար սիրոյ եւ մահուան մասին:

Համայնապարփակ է Զօրիկի «մեծ սիրտը» եւ նրա սէրը անասման: Նա սիրում է ամէն ինչ ու գիտէ խանդավառել ամէն ինչով:

Հայրանում եմ եւ ցնձաւթեամք
Եւ հարբում եմ ամէն ինչով
Ձեզ եմ բիրել սէրս անհուն
Լեցուն արտով :

Նոյն այդ անհուն սիրով լեցուն արտով սիրում է մարդուն եւ ան-
զուսպ ցանկութիւն է յայտնում նոյնիսկ երգերը՝ դձեւու փառարի շեմքին,
որպէսզի կարողանայ :

Հիմ ծամօթի պէս բարեւել մարդուն :

Այդ բազմախոյ ու բազմերանդ սէրը մերթ ընթերցողին երևում է
որպէս ՎՄարդարտակուն սեւ ջօղի Եսակ ամօթխած աղջիկ ու իր սիրտը նբա
համեմատութեամբ աչքի մոռացուած մայրի վրայ կանգնած շամուկ : մերթ
երևան է զալիս իր սեռային բնաստական ձգողականութեամբ :

Սէրը թիթեռի պէս դողողում է
Անկողնու վրայ,
Ուր պառկած ես զու :

Ջօրիկը սիրում ու արժէքաւորում է կեանքը՝ մարդկային շունչը ու-
րին ոչինչի հետ համեմատել չի կարողանում :

Երբեք չես կարող կուրծքը համեմատել
Փղոսկրին, ջրին, մետաքսին .
Այնտեղ մի շունչ կայ, մի շունչ կանացի,
Որը նշույլ է :

Սակայն իրատես է Ջօրիկը : Սիրելով ու արժէքաւորելով հանդերձ
կարողանում է ճիշդ պատկերով ասհմանորոշել մարդկային կեանքը բնու-
թեան հսկայ ու յարատեւ երեսայինների համեմատութեամբ :

Թուելով մեծ զետեղի անունները, որոնք սողում են դանդաղ ու ճա-
պաղ, իրենց հետ տանելով անկուշտ լիութիւն, եզրակացնում է՝

Իսկ մենք վտակ ենք յստակ կարկաչի
Եւ կարն գոյութեան :

Նոյնպէս յիշելով հսկայ լեռները որոնք վեր են սլացել եթերում եւ
դեռ խարխափում են իրենց ցցած ցանկութեան բազուկներով, եզրակացը-
նում է .

Իսկ մենք բլրակ ենք կանաչ անդորրի
Եւ գարն մեծաւթեան :

Յատկանշականը կեանքի դրական նիշն է՝ «յստակ կարկաչի» յորդո-
հոս զետեղի եւ սկանաչ անդորրի ընթ. լիտանդադաթիների համեմատու-
թեամբ :

Ջօրիկի դրականութեան երկրորդ հս. ամենաբնորոշիչ առանցքը մահն

է: Մահը աստիճանաբար զբաղեցնում է նրան մինչև որ նրա մտածողու-
թեան տիրական նիւթն է դառնում:

Սկզբի շրջանում տարտամ ու քողարկուած ձեւով է ակնարկում մահ-
ուան, որի դողդոջուն քայլերով մտանալը զգում է:

Դու ամէն գիշեր մտնումս ես լաւ
Մեմիկ խրճիթիս
Ու ոտիդ հետքը քաղնումս աւազիմ

Եւ խոստովանում է օր

Ամէն առաւօտ
Փնտռում եմ հետքը քրքիկ ոտքերիդ՝
Աւազի վրայ:

Ապա կամաց-կամաց աւելի յոտակ է զգում նրա գոյութիւնը, որը
չուքի պէս հետեւում է նրան.

Ինչպէս ծովը հետեւում է լաւերին
Լուռ, յեղեղով քայլերով,
Դու քայլում ես ինձ հետ:

Դու քայլում ես ինձ հետ,
Մութի շուքիս մէջ,
Այսպէս այսիս վրայ
Օր, օր, օրեր:

Եւ զգում է որ չի կարողանում իրենից հեռացնել մահուան պատկերը
եւ կարծէք թէ բողբոջում է.

Մի օտարափած զգրիկ գարկում է պատկապտ.
Ես նրան քաղնի չեմ կարող.
Չեմ կարող բաժանուել նրանից:
Ես անօք եմ մահուան,
Մեռածի պատան:

Սակայն ժամանակի ընթացքում մտերմանում է ու գիտակցում է, որ

Ես ինձ սպասում է հլու համբերութեամբ,
Սիրող եւ չմտացող մօր պէս,
Եւ գիտէ մի օր կը վերադառնամ:

Եւ Զօրիկը սկսում է սիրել մահը, նրա մէջ տեսնելով այն յատկու-
թիւնները որ պակասում են իրեն.

Եւ մահուան եօկայ համբերութիւնն եմ սիրում.
Անշարժութիւնը:
Լուսութիւնը:

Ճշ յոյսն ունի մահանալուց յետոյ վերապրելու որպէս արեգակի շող կամ շուք ու թերեւս որպէս լուսնի պատկեր: Բայց եւ համոզուած է որ պիտի վերապրի թէկուզ դա լինի որպէս դերեզմանաբարի վրայ գրուած մի անուն:

Բայց ես մնում եմ, կը մնամ ընդմիջոյն
Արձանագրուած, փորուած խորապէս
Այս կեցողութիւնս, գորշ քարի վրայ:

Սակայն յուսահատ չէր Ջորիկը եւ ոչ էլ նրա տրամադրութիւնը անկումային. այլ կենսունակ էր ու ծիծաղուն թէ՛ կեանքում եւ թէ՛ իր դրոշմաճիւղերի մէջ:

Նա կարողանում էր ամէն ինչի մէջ գտնել լուր, արժէքաւորն ու ցանկալին եւ վայելել ու սիրել իր գիւտը: Այդ յաջողուեց իրեն նոյնիսկ մահուան նկատմամբ:

Ջորիկը ապրեց ու վայելեց կեանքը, իր նկատմամբ երբեք չպակտող ձեռքի շոյանքի ներքոյ:

Իս էլ այս կեանքի շոյանքի ձեռքով
Մէքք եմ վեր ցցել մի կատաւի հման:

Իր մահուան հանդէպ ունեցած խաղաղութիւնը յուսահատ անձնատուութեան արդիւնք չէր, այլ պարզ համակերպութիւն էր. թերեւս համակերպութեան արդիւնք, եթէ կարելի է այս բառը մահուան համար գործածել: Անցեալներում ունեցել ենք բանաստեղծներ, որոնք զգացել են վաղահաս մահը եւ գրել են մահուան մասին: Սակայն սրանց մէջ իւրատեսակ է Ջորիկը:

Նա Դուրեանի պէս չբողոքեց իր տարտամ մահուան համար ու Ատաբեկի «Սիրերիմ» չորհրդով: Ոչ էլ Տէրեանի պէս դժկամութեամբ համակերպուեց եւ թախծոտ մնաք բարեւ սուտ: Նա նոյնիսկ Ջարենցի պէս իր մահը արժեցնելու համար պայման չդրեց «Թող ոչ մի զոհ չպահանջի ինձից բացի»: Այլ պարզապէս «օր, օր, օրեր» ապրեց մահուան հետ, իր շուքի մէջ, նրա քայլուածքը տեսաւ, մահուան ձեռքի շոյանքն զգաց իր նակատին, ճանաչեց ու սիրեց մահը եւ նոյնիսկ խնդրել Աստուծոց:

Դանդաղեցրու ինձ, Տէր,
Դանդաղեցրու քարախը սրախս

Պատուաստիր ինձ
Լեռներին, դաշտերին,
Արմատներին:

Իր վերջին շրջանի պատմութեան շրջանը նոյնպէս մահն է: «Մտացուածք» մի զեղծարարի պատմութիւնն է, որ անձնասպանութիւնից յետոյ իր հար բաժանուած է մարմնից, պատում է քաղաքում եւ ամբողջ ժամանակ ձգում է դէպի իր ստացած դիակը եւ հանդուստանում է, երբ պատկում է նրա կողքին:

«Մի միան մասին» պատմութիւնն է անհանդուրժելի շրջապատում գտնուող մարդու, որը վերջանում է հերոսի անձնասպանութեամբ:

Եւ ՎՄԻ շնորհաւոր ժարգու մասինը՝ մենակ ու անհէր ուսանողի պատմութիւնն է, որը մի մահամերձ կնոջ նկատմամբ տաճած տարածած ու անխնայ սիրոյ հետեւանքով անանգի զատապարուում է մահուան:

Այս ինչիքները որքան էլ ողբերգական, սակայն Զօրիկի գրչի ասկի զառնում են հանելի, գիւրընթեռնելի եւ համեմուած իր իւրայատուկ սրամըտութեամբ:

Զօրիկը կարողանում է ամենաողբերգական պատկերն անգամ հիւմուրով համեմել, թոյլ չտալով ընթերցողին սրբալ վիճակի ծանրութիւնը:

Օրինակ իր բարեկամի մահազգը հետեւեալ ձևով է նկարագրում.

«Այրի տիկին Լիլիկ... եանք դառը կսկիծով սղրում է իր սիրտունն ամուսնու անակնկալ մահը, որ տեղի ունեցաւ...»

Յետոյ անուշներ, թուականներ, թուանշաններ, սեւ գիծ, հաստ սեւ գիծ, վերջը՝ սեւ գիծ:

Ինչպէս տեսնում էք յաղթել չէ Զօրիկի նպատակը. այլ ընթերցողին փոխանցել պատմութեան հիմնական դադափարը: Եւ այդ կատարում է շեշտակի ձևով, թէկուզ եւ յաճախ ընթերցողը, նախքան պատմութեան վերջաւորութիւնը չի տեսնում նպատակը եւ չի կարողանում գուշակել թէ ուր է գնում: Իայց այն ճանապարհը, որով տուաջարուում է Զօրիկը՝ ամենակարճ ճանապարհն է:

Պատմութեան մէջ չկայ ոչ մի աւելորդ նկարագրութիւն կամ ձգձգութիւն: Պատմութեան ընդհանրապէս սկսում է անակնկալ կերպով:

«Մկների թաղմութիւն ցեղեր կան» ասաց նա եւ ձեռքի դիրքը դրեց ցած:

Կամ թէ՛

«Վերջի գլխարկն, քացեցի դուռը եւ դուրս եկայ:

Ընդհանրապէս ամէն պատմութեան մէջ մի նոր բան ունի, մի իւրատարուկ անակնկալ, օրինակ՝ ՎՄԻ մկան մասինն պատմութեան մէջ հերոսը ամբողջ ժամանակ անուղղակի պահպանում է իր վնասից. մկան տեսակների որ թակապոսների մասին խոսելով:

Կամ թէ՛ ՎՄ. ասացնում էր մէջ անմատչական ձեռքով ժարգու մասին պատմութեան է արտաքին գեղարվեստ:

Զօրիկը իր պատմութեան ընթերցողին մէջ կենդանի պատկերներ չի նկարում, այլ արագ դժեգով արտազգծում է, յաճախ իրապետութեան, անբնական զատապարու. աստիճան, սակայն արամարանութեան՝ առանց անհանդատութիւն պատճառելու: Եւ ընթերցողին մտածումի է տեսնում օնշաղիւր ընթերցողը պատմութեան վերջացնում է գոհունակ ժողովում, որ կարողացել է հասկանալ հեղինակին:

Իր ոճը արձակի մէջ, թէկուզ յղուածի կարտո, բայց դիմաժիւ է՝ շարժուն եւ կապող, համեմուած անսահման ձգրիւն կրկնաւորներով:

Ինչպէս կեանքում, այնպէս էլ իր պատմութեան ժողովի մէջ Զօրիկը ծիծաղում է ամէն առիթով: Նա ծիծաղում է նոյնիսկ իր հերոսների ամենաողբերգական վիճակի վրայ: Սակայն միշտ անչար է այդ ծիծաղը, փանկական ծիծաղի պէս եւ Զօրիկը խորքում սիրում է իր հերոսներին:

Արձակի համեմատութեամբ, աւելի բարդ է Զօրիկի բանաստեղծութեանը. յատկապէս իր վերջին շրջանի գործերը, որոնք լեցուն են իւրայատուկ պատկերներով: Ընդհանրապէս Զօրիկի համար, պատկերները, արատաքին թէ ներքին՝ իր մտքի արդասիք, աւելի արժէքաւոր են ու հասարակ ներշնչող բան, դիտական հիմունքներով ճասատուած օրէնքները:

Պատկերով աստղերի մասին: Իմանալով հանդերձ որ երկնքում կան վազուց մեռած աստղեր եւ մտածելով նոյնիսկ որ՝

Գուցէ բոլոր աստղերը շիջել են եւ ես չգիտեմ:

Գարձեալ պնդում է

Ով կարող է ինձ ստիպել,
Ով կարող է ինձ ստիպել
Որ չհաւատամ աստղերին:

Այս աստիճան արժէքուոր պատկերներով է լեցուն իր բանաստեղծութիւնները: Այդ իսկ պատճառով չափազանց հարազատ է ինքն իրեն:

Երբեմն տարօրինակ են իր պատկերները՝ արտաուց. որովհետեւ ընդհանրապէս տարօրինակ ու անծանօթ է մարդու ենթադիտակցութիւնը, որտեղից հարազատօրէն ծայր է առնում իր բանաստեղծութիւնը:

Սակայն, սա չէ միայն իր բանաստեղծութեան բարդութեան պատճառը: Կայ նաեւ կառուցուածքի բարդութիւնը:

Զօրիկը նախ իր զգացումը արտայայտում է մի պատկերով: Այդ պատկերին որպէս լրացուցիչ կցում է մէկ կամ մի քանի պատկերներ: Վերջինների առաջացած նոր զգացումից ստեղծում է այլ պատկերներ, մինչեւ որ եզրափակում է բանաստեղծութիւնը:

Պարզելու համար Զօրիկի գրելու այս ձեւը, տող առ տող քննենք իր մի բանաստեղծութիւնը:

Ճակատագիրը բաժակի պէս ինձ
Բարձրացրել է վերո

Աս մի պահեր է որն ստեղծուել է ճակատագրի եւ իր անձի յարաբերութեան համեմատութիւնից: Այս պատկերին կցում է երկու այլ պատկերներ, որոնք առաջին պատկերի լրացուցիչն են.

Գինիմ խայտում է իմ անօրի մէջ,
Հագար երանգով լոյսեր են կայտում
Բիւ ու ակնապիշ իմ աչքերի մէջ

Այս ինքնարժէքուորման զգացումի կորը ստեղծուել է վերջին երկու պատկերների միջոցով) աստիճանական զարգացումի Ընտանանքով ստեղծում են հետագայ պատկերները, որոնք ոչ նախորդող պատկերների եւ ոչ իրար հետ որպէս պատկեր յարաբերութեան եզր ունեն.

Կեանքի գինիմ եմ, պերճամքի մի ծով.
Գարնան մի աղեղ՝ առիցուն աշով.
Ռակէ վանդակն եմ հագարան թռչնի,
Աստուածն եմ աստղի, անտառի, մրջնի:

Այստեղ այդ զարգացումը իր գաղափարակէտին է համում՝ սկսելով կեանքի պինուց մինչեւ աստղի, անտառի ու մրջնի աստուածքը: Բովանդակութեան հետ զուգընթաց դադարի է հասնում նաեւ քերթուածի քրաճշտակամբութիւնը: Վերջին հինգ վանկանոց սաքը երկուսի

բաժանուելով կարծէք թմբուկի Հարուածի պէս կասեցնում է երաժշտութեան ընթացքը:

Ոսկէ վանդակին եմ հազարան թռչնի
Աստուածն եմ աստղի, անտառի, մրջնի:

Ու դադարից յետոյ որպէս երաժշտական բներգ նորից կրկնւում է առաջին պատկերը այս անգամ տարբեր կցորդներով զարդանալով ու եզրափակելով կտորը:

Ճակատագիրը բաժակի պէս ինձ
Բարձրացնում է վեր,
Ծարաւն է ինձնով յագեցնում իր սին,
Որ յետոյ հարքած
Զարկի ինձ լուսնին:

Ինչպէս տեսնում էք Ջորիկի բանաստեղծութիւնը մի ամբողջութիւն է կազմում, որը միայն բառերի իմաստի Հերթականութիւնը քննելով չի կարելի ըմբռնել: այլ նաեւ նրա ընթացքին պիտի հետեւել ու պատկերից զգացում եւ Հակառակ փոխանցումը պիտի զգալ ու յատկապէս նրա երաժշտականութեանը ուշադրութիւն դարձնել:

Այս տեսակէտից սքանչելի օրինակ է 1555-ը, որի իրական մոտիւրդ արտայայտուել է ոչ թէ բառերի իմաստի, այլ քերթուածի միապաղազ թռնով ու յանախակի կրկնութիւններով, որը բնորոշում է այն տաղտուկը, որ իրանահայը զգում է կեանքից եւ մահը որ որպէս վերջակէս կարում է այդ ընթացքը:

Այլ խօսքով, այս կտորը բանաստեղծական պատկերացումն է իրանահայի այն սուլորութեան, որ օրաթերթի մէջ առաջին Հերթին մահազդներն է կարդում, ամէն ինչից առաջ տեղեկանալու համար թէ ովքեր կամ աւելի շատ քանի՜ Հոգի են մահացել:

Հազար հինգ հարիւր յիսուն հինգ թուին
Մեռել են նրանք: Մի կին եւ մի մարդ եւ մի երեխայ՝
Յիսուն տարեկան մի մարդ եւ մի կին
Սեւ մի երեխայ յիսուն ամսական:
Հազար հինգ հարիւր յիսուն հինգ թուին
Մեռել են հազար յիսուն հինգ անգամ՝
Մի կին եւ մի մարդ եւ մի երեխայ:

Կարեւոր չէ թէ ովքեր են մեռնողները: Կարեւոր չէ թէ նոյնիսկ Հազար յիսուն հինգ անգամ նոյն մարդն է մահացել թէ Հազար յիսուն հինգ տարբեր մարդիկ: Կարեւորը այն է որ այդ թուին կեանքի միապաղազ ու տաղտկալի ընթացքը Հազար յիսուն հինգ անգամ կտրուել է, Հազար յիսուն հինգ վերջակէտերով:

Մի վերջակէտ էլ իր՝ Ջորիկի անակնկալ մահն էր դրուած մի ոսկե-տառ նախադասութեան վերջում:

ՀԱՐՓԻԿ ԹԱՄՐԱԶԵԱՆ



ԴԵՋՐԵՐ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊ



Հայոց բարձրագոյն իմացականութեան ամէնէն պայծառ մէկ խորհրդանիւշ՝ իր Դաւէն բաւական մը առաջ՝ կը մնայ այդպէս, ու անհունօրէն ու քաղցրօրէն աւելի լուսաւոր՝ իր եւ իր մտքի եղբայրներուն, իր եւ իր նահատակ ազգին անպատեհիկ Սպանդէն առջին Տըրատմ, մեն, անհուն խորհրդանիւշ մը՝ դաւանանուածի։ Գիտակցօրէն ու եղբրականօրէն խարուածի։ Ինք իր տարագրութեամբ ու մաւազ ուրիշները փրկելու բոլորովին յուսահատ կամքի մը։ Ողբերգութեան մը՝ որ ոչ ոք կրցաւ եւ

ոչ ոք պիտի կրնայ բացատրել, մտքի եւ սրտի սովորական միջոցներով, շատ վերջը տպրողի դիւրութեամբ ու յաւակնութիւններով։ Իրենց ցաւին բուն տարողութիւնը իրենք դիտցան իրենց մաւաւան բոպէին, եւ մեզի փոխանցուածը մնաց թերի։ Ու պիտի շարունակէ մեալ կարծես այդպէս։ Վասնզի զարհուրանքներ կան, որոնք անդին են այլեւս մարդկային շիզերու ընկալման կարողութիւնէն։ Մարդը եւ իր ուղեղը կը թուէ թէ ատոր համար չեն շինուած։ Ապրիլեան մեր դժոխքը անդաւորելու համար, այս ազգը կը սպասէ տակաւին տանթէական հանճարի մը հողեկան լայն, անհունամիջոց տարածութիւններուն։ Ներքին բացառիկ բնութիւն ու բացառիկ էսփասիւն։

Ոեւէ անձէ աւելի, այս ազգը սպասեց իր Եղեռնը լրիւ խորութեամբ պատմաւոր նոր նարեկացիի մը։ Չունեցաւ, յիսուն տարիէ ի վեր, աւելի այրող կարօտ, աւելի կիզիչ անհրաժեշտութիւն՝ քան Ապրիլեան հանճարի մը կարօտը, տենախապարհ անպատան ու Միլիոնին միլիոն կերպ մաւր պատմող եղբրական մատենին անհրաժեշտութիւնը։ Նման մատենի մը իւրաքանչիւր էջին առջեւ կարծես ամէն Հայ պիտի գտնէր իր մէկ բացարձակութիւնը, իր եւ իր ազգին անկախութիւնը։

Ըլլա՛ր մէկը եւ դիմար անկէլա ըսել աշխարհին՝ թէ ի՞նչ կը նշանակէր այդ օրերուն թուրք ղեկավարի դէմք, թուրք ղեկավարի մտածիմանի, թուրք

զեկավարի որոշում: Ըլլա՞ր եւ ըսէ՞ր՝ թէ ի՞նչպէս ատելութեան կրակներ ցանկեց թուրք աշխարհի վերին խաւը՝ ընդդէմ Հայուն, ընդդէմ ոչ-թուրքին: Զարհուրելի զարդուութեան մը կրակը՝ մոխիրի եւ ոչնչութեան վերածելու համար Օսմանեան կայսրութեան ծիրէն ներս ամէ՛ն իրաւունք եւ ամէ՛ն դատ, ապրեցրնելու համար համաթուրանական դատը, Ալթամներու եւ Գարաջորումներու աշխարհէն մինչեւ Պաշտանեան սահմանները Արեւմուտքին:

Թուրքը ոչ թէ ցորեն, այլ մահ կը մշակէր իր կատաղարած կայսրութեան անծայրածիր հողերուն վրայ: Կեանքի եւ անդունդարծութեան ոչ մէկ հոռովէջ անոր պատմութեան գութանը եղաւ մահուան եւ աներակի գութան մը, անհուն կայսրութեան մը վրայ, անար կեանքին տարածութիւնները: Հերկող:

Ըլլա՞ր մէկը...

Յ

Վաթուն տարուայ մը ամենաչեղ անունն է Զօհրապ հայ զրականութեան ու մտքի աշխարհին մէջ: Իրեն չափ փայլ ունեցող կա՛յ թերեւ, բարձրափայլը չկայ սակայն:

Զմտունք...

Ապրիլեան Եղեռնին թիւ մէկ նահատակն է ան: Երբ Ապրիլ 24 ըսուի՝ ի՞ր անունն է՞ ար կը ներկայանայ ուրիշ ունէ անունէ՞ առաջ: Հայ յիշողութեան թերք իրձով կը սկսի այս պարագային, օսմանունն իտիքագրարանին: Երբնքն՝ արեւ-գաղափ: Որովհետեւ սմանեան այդ տունը չուենցաւ երբեք, ոչ առաջ եւ ոչ ալ ետքը: Խոտքի ու խելքի այդ բացուելի լոյսէն:

Գլխաւորներին՝ անաղջինը Հայ նահատակներուն, վամպի՞

Թերեւս մէկ անգամէն շատ բան կը անո՞՞տան տարիք ու շատ խելք: Ետտ տաղանդ ու շատ ախողոս: Ետտ ուժ ու շատ փոխադասութիւն: Ուրեմն շատ կեանք եւ անտեսք փայլ: Գրչի՞ ու մտքի իր ճրտաչափաւոր ընկերները այրողէն չէին: Ու մանք ճուշակաւ: Բանաստեղծ էին ժխայն:

Եւ հոշակաւոր չէին այլ բանի մէջ: Հրոշակաւոր զրոգէտ էին ու միայն այսքան: Հանրային գործիչ ու միայն այսքան: Զօհրապն էր միայն որ մեծ մէկը չէր լուկ, այլ մեծութիւններու միութիւն մըն էր, մեծութիւններու համակարգութիւն մը, բարձր հաւասարակշռութեան պէս բան մը: Փոքր չեղաւ ան ոչ մէկ անկիւնէ: Ոչ ոք կրնայ նման բան մը գրել անոր անունին դիմաց, եթէ փոքրիկ մը կը հասկնայ թէ ինչ կը նշանակէ թուղթին յանձնելու արժանի մասնում ունենալ:

Զօհրապ մեծ էր մաքրով, նկարագրով, հոպիով: Ու արտասայտութեամբ: Խղձնամբէի Զայնը-ու՛ն բոլորովին բարութիւն եւ բոլորովին խիղճ հեղինակը՝ զարձած է ոչ միայն հայ բարձրագոյն մտքի խորհրդանիշ մը, այլ մեք Մէկ ու Կէս միլիոնին գտնական սէմպոլը:

Ժողովուրդն ու մասւորականը այդպէ՛ս գիտեն, այդպէ՛ս գիտցան յիսուն տարի, ու ճիշդ է անոնց գիտցածը:

Եթէ պատահէր որ թուրք զեկավարութիւնը, խղճարութեան անկարելի պահու մը, սրուէր խնայել հայ մտաւորականութեան, պիտի չխայէր Զօհրապին: Ստեղծուած մտայնութիւնն ու իրերու դատաւորումը թուրք քաղաքականութեան մէջ, անհաշտօրէն թշնամի էին Զօհրապին: Թուրք քաղաքական արամբանութիւնն ու հալիւները պիտի մեղցրնէին զինք անպայման: Ետտ մեծ բան մըն էր ան եւ այդ օրերուն՝ շափաղանց վտանգաւոր թուրք քաղաքական գործիչներու աչքին:

Այսպէ՛ս...

Սմէնէն անելի ա՛յա Հայնն պիտի վախնային: պետական շրջանակները: Գլխաւոր գիտնէք ուրիշ տեւէ: Հայնչ տեւէ Արտաքէ եւ տեւէ թուրքէ: Խոհ տեւիլի Կըրտեաք պատմեղ: ամէնէն տեւիլի: Մեպտաէրտ Եւ Կը: ամէնէն պիտուն թերանդ Օսմանեան կայսրութեան: Գիտուն: Խոտքէ էր փոստիչանկալա: եւ Երխտատարք թուրք թերաւ մայրաքաղաքին: պիտուն պիտի ըլլէ: պիտուն: մեծ հուաքոյթներուն: կը խորնայիլի: իրենա:

Երբե՛ք...

Գիտէին, թէ ինչ գարձուրելի վկայ եւ ինչ դժոխարարաւ՝ ու դատախազ կըրնայ ըլլալ ան՝ եթէ միլիոն մը հայ մեռնի, եւ ինչ մնայ ողջ: Եթէ գրեթէ բոլորը մեռնին, եւ...

Սկսան հետեւաբար Զօհրապէն, կամ գրեթէ անկէ՛. մանրամասնութիւն են մէկ երկու օրը:

Մեզի համար Լուս Յաւեր-ուն հեղինակը մեծ գրող էր, իրզախ հրատարակողի բազմաբնակ կենտրոնի պարծանք եղող պանծալի երեսփոխան մը. Իթթի-հատի պարագլուխներուն համար Զօհրապէն քննարկները իրենց ցեղասպանութեան հետեւն պոռայող սոսկալի մայրը կրնար ըլլալ, ծրարութեամբ եղեռնին յանդէպ օրն իօկ, մարդկային պատմութեան ահաւոր քաղցին քամառանութիւններէն զեռն շտեմնուած ուժով ամբաստանութիւն մը:

Ի

Կեդրոնական անձ ըլլալու համար աշխարհ եկածներէն եղաւ կարծես Հայոց նորամտային իշխանը: Մնաց եւ կը մնայ այսօր ալ՝ մեր գրականութեան ամէնէն՝ սուր ստորագրութիւններէն մէկը, իր շրջապատին կեանքն ու ըստ ցուակը անմիջիկ պայծառութիւններու մէջ փորագրած վարպետ մը, որուն նմաններէն շատ չունի մեր գրականութիւնը զբարտարարս:

Աշխարհաբար Եզնիկ մը՝ մտածումի իր ճշգրտութիւնով ու պայծառութեամբ, Օսմանեան իրարգրարանին հաշակաւոր մէկուսը, օրէնքի մը խրթին մէկ տրամադրութիւնը երբ կը մեկնաբանէ, երբ կը գծէ մեզի պատկերը ասե՛նօք մեղանշած սարքաֆի մը կամ ձեռքի Պարտաքը նորամտային եղբրական յանձնակատարին: Երբ կու տայ, մահաւանդ, կուտ ասու-թեամբ մը ու ընդարձակ բանի մը կարելի խտութեամբ՝ ստամբ սպասուհիի մը, կամ այլ կնոջ մը:

Եզնիկ մը, - միշտ ոչ լեզուի, ի հարկէ, այլ մտածումի - նորէն, երբ մեր հանրային առօրեային հարց մը պիտի ներկայացնէ եւ դատէ: Իսկ Եզնիկներն ու Զօհրապէները իրենց դատողական կա-

ռօյցի ամբողջութեամբ ու ճշգրտաբան ուժով՝ չեն հիննար գրեթէ, կամ կը հիննան աննուազն շատ ուշ:

Այսպէս...

Գրականին մօտիկ կարուածի մը, հրատարակագրութեան մէջ, ուր Զօհրապէ նուազ չիսլիցաւ իր օրերուն, քան իր զուտ գրական ստեղծագործութիւններուն մէջ՝ կը հանդիպինք գարմանալի թարմութեան մը: Օրուան կեանքին յատկացուած անոր գրութիւններէն մտա մը կը պահէ տակաւին իր այժմէական նկարագիրը: Կը վկայէ ստիկա մէկ կողմէ յառաջապահ մտքի մը մասին եւ միւս կողմէ՝ տեսնելու եւ դատելու սուր կերպի մը, որ Զօհրապէնը եղաւ ու մնաց Զօհրապէնը մինչեւ վերջ:

«Այն տրամաբանութեան թանձրացեալ զանգուածը...», ըսած է Զօհրապէ, իրզանդ Ֆէշեանի գէճքը գծած պահուն, իր այս գեղեցիկ բանաստեղծը կը պատշաճի առաւելագոյն չափով մը նսեւ ու մանուսնդ իրեն, երբ հանրային եւ զուտ ընկերային ընդթ կրող հարցեր են որ քննութեան առարկայ կը դարձնէ ան: Տրամաբանութեան այդ զանգուածը գեղագիտականօրէն լերկ չէ սակայն, նրման ուրիշ զանգուածներու. Զօհրապէ արուեստատէր հողին, աւելի մարդ եւ ուրեմն աւելի հողերան՝ կրցաւ առանց դատողութեան տրամաբանական որակին վնասելու, խառնել անոր գեղեցկութեան փայլին, ըսուածը առաւել եւս հաճելի ընծայելու համար: Հրատարակագրութեան ուղիղ եւ արդիական ճամբան միագիծ չէ, այլ երկգիծ է, քանի դարն ու ճաղաքակրթութիւնը կը յառաջգիծեն գիծերէն մէկը եթէ տրամաբանութիւնն է իր բարձրագոյն եւ ընտիր որակով, միւսը արուեստէն փոխ աննուած գեղեցկութեան որոշ փայլ մը կամ հաճելիութիւն մըն է: Թիւի եւ թեւի նուազագոյն ներդաշնակութիւն մը ըսենք:

Արդարեւ,

Զօհրապէ նշանակեց ու կը նշանակէ գեռ՝ իմացական ստող պայծառութիւն, գրեթէ ամէն զետեի վրայ: Նշանակեց վճիտ հաւասարակշռութիւն: Իր զբառ

և միշտ գործադրած արուեստի այդ ներքին հաւատարակչութիւնը դեռ չգերազանցուեցաւ ուրիշի մը կողմէ հայ գրականութեան մէջ, ըլլայ հոս, ըլլայ հայրենի սահմաններէն ներս: Ներքին ստեղծադրած ուժերու հաւատարակչութեամբ ու ներդաշնակ փայլով իրեն կը մօտենայ Համաստեղ, Սփիւռքէն, և Ակսէլ Բակունց՝ Հայաստանէն: Ատենց մէկ իւրաքանչիւրը ինքնիր մէջ առած, միագիծ տաղանդ մը չէ, այլ զուգահեռագիծ տաղանդ մը, այսինքն յօտումի ենթարկուած կարողութիւն մը, երբ բաղդատենք չյօտուած և խառնիխուռն ձեւով անձաւ կարողութիւններուն, որոնց մէկ ներկայացուցիչը սքանչելի Միամանթօն էր, առաջիններուն պետը աշխարհարարի մէջ Գրիգոր Զօհրապը համարելով:

Մեր դարութեան առաջին օրերէն իսկ, թերեւս ամէն գրականութեան պէս, հայ գրականութիւնն ալ իր տաղանդներուն տեսակը ունի, հիմնական երկու սղոյթութիւններու վրայ անոց: Մէկը, որ անփոք զգացում ունի և յանուն ներդաշնակութեան ու ներքին ուժի կը սիրէ իր ներքի բոյսերը յօտել շարունակ, և միւսը՝ որ կերպով մը պաշտամունքը ունի խառնին և առասին, որ գիծով մը կը ծայրայեղանայ և ուրիշ գծով մը հասնի ճամբայ ելած՝ կը կատի արդէն:

Մեր գրական տաղանդներուն առաջին և պայծառ տեսակին սկսողը, հերլէն մտածումին հայ ներկայացուցիչ Եգնիկը եղաւ, իր հռչակաւոր Եղծ Աղանդացով, ու հակումովը կարծես՝ դէպի Սահակ հայրապետը: Տրամաբանութեան Ե. զարու այս հայ մասնագէտը եթէ բերենք քաներորդ դարու հայկական Բիզանդիոնի մը մէջ և փոխան նոր Եղծ Աղանդացի մը գրել տանք իրեն նորագէտ ուրիշ սեւէ գրագէտէ աւելի Զօհրապ մը կը ստանանք, - Կեանքը Ինչպէս Որ էր, Լուս Յաւերու և Խղճմտանքի Զայներու հեղինակ: Զենք ստանար Զարգարեան մը, Մրճաբէշխանեան մը, Սուրբն Պարթևեան մը՝ ինչ ալ ընենք: Տէ՛րբճիւպչեան մը և ինտրա մը՝ եր-

բեք ու երբեք: Այս վերջիններուն նախափայ գրագէտը Կորիւն Սքանչելին է, աւելի Արեւելք, աւելի ասորի, և արդէն ամբողջովին Մեսրոպ Մաշտոցով վարակուած:

Տաղանդի միւս բոլոր տեսակները տեսակի հարց չեն այնքա ըստ էութեան, այլ երանպի հարցեր են լոկ:

Ն

Պոլսոյ Հայութեան Հարուստ Հոգին էր, լեցունիկէ մարմնով, շատ դրամ շահող և շահածը իսկոյն մոխող, խնայողութենէ աշխարհներով հեռու, կրկնորու, արուեստի և բարձր բաներու այս մոյլի իրաւարանը: Մէկը, որ համաձայն իր անձը ներկայացնող նկարագրութիւններուն, ամերայական բարձր հով մը ունեցած է իր վրայ, տե՛սք իսկին հանդէպ մասնայատուկ գուրդուարանք մը ունենալով հանդերձ. մտքի մաքուր աղա մը՝ աւտուրնէ մինչև իրիկուն ժողովուրդի խոնարհ դասակարգի մասին մը տածելով: Եսա մեծ ու շատ խելացի՝ անհուն անկեղծութեամբ մը զբաղելու համար կարծես միայն փոքրերուն ու աղքատներուն տրուած ճակատագրովը:

Գիտէր ինքզինք իրբու անվերջ ծախսող-մտնող մը, նիւթական թէ բարոյական գետիններու վրայ: Անգիտակից չէր բնաւ ըրածին և ոչ ալ անհակակիտ եղաւ որեւէ ատեն: Զօհրապ կեանքը կը սիրէր և, լրումի մը հասնելու համար, կը շատցնէր զայն բազմաթիւ տեղերէ խմելու ակերբ: Կը խմէր զայն կրկնորու սէրէն, արուեստէն, գրականութենէն, գիտութենէն, ճամբորդութիւններէն, լրագրութենէն, ժողովներէն: Կը սիրէր զայն աղքատին մէջ և աղքատի պէս շարժող հարուստին. յեղափոխականին մէջ և յեղափոխական մարտնչողի խառնուածքով մտաւորականին: Կը սիրէր զայն ապա մեղաւորին մէջ ու կ'ուղէր արդարացնել որեւէ մեղք և սեւէ մեղաւոր:

Այսպէս կամ այնպէս, կեանքը ամէնէն պիտաւոր սէրը և ամէնէն պիտաւոր հարստութիւնն էր Մաքրբէշխանի հայ գրագէտին համար, որ զարմանալի կէշ:

ուսյթով մը, տեղ տեղ շրջուած հակա-
սուլթաններ մը ապրեցաւ զայն :

Որչափ ճիշդ՝ երբ իր կենսազիրնե-
րէն մէկը կ'ընէ ուրիշները վարպետօրէն
բնութագրող եւ թուղթին յանձնող այս
մեծ գեմազիրի մասին, թէ .

— Իր երիտասարդութեանը չափահաս
եղաւ ան, չափահասութեանը՝ զարմա-
նալիօրէն երիտասարդ... :

Եւ այդ կատարի կենսատէրը, որ
թերեւս ճերմակ կամ թափած մազեր ու-
նենար եւ ըստ իր բնութեան ու ոճին չճե-
րանար՝ անողջօրէն խելօքիկ մեւով մը,
այլ առիթով իրեն համար ըստբովին
անպատշաճ եղանակով, որ եղանակն է
այս պարագային ճակատադրական բարձր
համակերպութեան մը, ընդունեց խզուել
կեանքին հետ, խզումներուն ամէնէն ե-
ղբրականովն ու վերջնականովը :

Ու քալեց, յոռտես ալիւս ինքնիր
հանդէպ ըսց սուրբ՝ ամբողջովին կեանք
այս մարդը, դէպի ամբողջովին մահ հե-
ռուները իր ցեղին տարագրութեան : Ի՞ր
մահը չէր ընդուներ, ա՛ւր մնաց իր ամ-
բողջ ցեղին մահը ընդունիլ : Իրենց մա-
հով ինք եւ ընկերները իրենց ազգին ա-
պագան դնելու ելան : Կեանքը չխաբեց
գիրենք այս վերջին կէտին մէջ :

Յ

Զօհրայ կերպով մը Պարսնեանին
պէս հայկական Պոլիսը իր անձին ու տա-
ղանդին մէջ խտացուցած ըլլալուն՝ հա-
սած էր արժէքներու համահայկական
մակարդակի մը ու վերածուած ուրեմն
ազգային անկօրնչելի փառքի, ինչպէս
Արեւելահայերուն Սուրդուկեանը, Աբով-
եանը, Բաֆֆին, Նալպանտեանը, Արծ-
րունին, ինչպէս միւս կողմէ Արեւմտա-
հայութեան Պարսնեանը, ատենին իրեն
տեսուէ եղած Մերենցը, Ալիշանը, Իուր-
եանը, եւ ապա, ժամանակով իրժէ կրքա-
օեր սերուզին մեծերը, — Սիմանթօն,
Վարուժանը, Զարգարեանը, Օշականը :

Լճան պիտի չըլլար հայկական Պո-
լիսը, առանց Թարգմանչաց Վարժարա-
նի նախկին աւակերտին գրականութեան :
Բաւական բաներ պիտի պահպէին անկէ,
եւ, ամէնէն առաջ՝ գաւառներէն ու խո-

նարհ խուերէ եկած ու հարուստներու
տիրութեանը առջեւ սիրոյ եւ կիրքի
քաղցրեղէններու պահարանի մը դերով
տունէն ներս մուծուած կիները, Զօհրա-
պով մեր մէջ նշանաւոր դարձած ու Զօհ-
րայը նշանաւոր դարձուցած սպասուհի-
ները :

Յետոյ,

Հայոց ընդհանուր գրականութեան
մէջէն, առանց Զօհրայի, պիտի պակ-
սէր առնական ամբուլթեան որակը : Զօհ-
րայ այդ բացառիկ առնականութեան մէկ
ներկայացուցիչն է, մեր մտքին բոլոր
դարերը նկատի առած : Անոր զօրեղ տա-
նականութեան արտաքին փաստեր իր-
րեւ, կրնանք յիշել անոր գրականութեան
սճի արտակարգ սեղմութիւնը, կուտ ու
կոփուած բնոյթը, արտայայտութեան
բացառիկ ժուժկալութիւնը միշտ : Հարկ
է ի մտի ունենալ տեւարար, որ իրաւա-
բանութեան դասախօս այս մեծ գրագէ-
տը փոխաւ շարունակ սեթեւեթ եւ աւե-
լորդաբանութիւն ըստածէն : Զէր սիրեր
անտեղի գործը, ինքզինք պարապ տեղ
տողերուն վրայ գումարող յաւելուած
տողը, յաւելուած բառը, ու որեւէ բան
որ յաւելուած է միայն եւ ուրիշ ոչինչ :

Իր գրպանին մէջ երկրաչափի մը
փայլուն վկայականը գրած այս բարձր
մտաւորականը, որ հող ու քարի ճարտա-
րապետութեան հետ ոչ մէկ շփում ունե-
ցաւ իր կեանքին ողջ տեւողութեան՝ տա-
նապանքը շտեսաւ ընաւ հորիզոնական
մեծութեամբ մը : Գիտէր ի հարկէ, որ
որեւէ մեծութիւն մեր կեանքի աշխար-
հային պայմաններուն մէջ, չի կրնար
հիմնական մեծութիւն ըլլալ երբեք, երբ
հորիզոնական են անոր իմացումն ու
դրուածքը : Տառապանքներուն ըստ մե-
ծութիւնը, որ գիրենք Հիմնովին կը գա-
տորոչէ միւս մեւի մեծութիւններէն եւ
կու տայ անոնց կարծես ստեղծագործա-
կան նկարագիր՝ անոնց ուղղահայեաց
ըլլան է : Այսինքն՝ երբ ցաւերը դէպի
վար եւ խորունկները կ'երթան, փոխա-
նակ աջ եւ ձախ տարածուելու : Երբ բա-
ռէ աւելի կայութիւն դառնան մեր գըր-
չին տակ, նախադասութենէ աւելի հագի :

Այլ խօսքով, երբ էջերը փոխանակ պո-
 ռալու մեր ազանջին, սկսին հետզհետէ
 իմաստով ծանրանալ եւ լռել, կեանքով
 ըլլալ յղի, եւ զիչ նայուածքով շատ տե-
 նել, զիչ բառով արտայայտել աւելին քան
 բոլոր բառերը պիտի արտայայտէին։
 Երբ, այդպէս, պահը ամբողջ արարիչ
 դորշութիւն մը ստանայ տակաւ, դորշու-
 թիւնը խոհին ու խորութեան, զո՛րքը
 կարծես իրաւին եւ ուխտին, մնայունին
 ու աստուածներով յղի բաներուն։

Լուս Յաւեր քուէարկող մարդը, այ-
 սուհանդերձ, ամէնէն իրաւասու բերանն
 էր խօսելու դործին մէջ։ Իր նախասիրած
 մարդով ու մանազիտութեամբ լռելու
 չէր կոչուած այդ մարդը, այլ ամէնէն
 աւելի շրտիւր կոչուածներէն էր ան, եւ
 կոչուածներուն մէջ հանճարեղներէն։ Կը
 փնտռէին իր խօսքը, կը քաշէին այդ
 խօսքին համար մղոններով ճամբայ։ Իր
 ցեղին թշնամիները, ծեր ու երիտասարդ՝
 կ'ատէին զինք, բայց կամաւորաբար կու
 դային մագնիսանալու անոր խօսքի ուժին
 տակ։ Բնութիւնը լուսութեամբ չէր սփռած
 զինք, սփռած էր խօսքի վարպետու-
 թեամբ։ Ըրած էր զինք խօսքի իշխան,
 խօսքի զօրաւորագոյն աւատազետ մը։
 Բայց զիտէր, որ ցաւեր կան խօսքի ու-
 ժէն վեր, լուսութեամբ միայն եւ ուրիշ ոչ
 մէկ բանով բացատրելի։ Խօսքի մարդը,
 այդպէս, շխտող ցաւերը կը փնտռէր ա-
 ւելի քան խօսող ցաւերը, եւ կ'ըլլար ա-
 նոնց իրաւարանը, անոնց ներկայացու-
 ցիչը հայ գրականութեան մէջ։

Իրաւարանները Հասարակութեան
 կարծիքին առջեւ կը ձերկայանան իբրեւ
 շատախօս, երկար եւ մանրապատում ա-
 սութեամբ մարդիկ, որոնք եթէ գրակա-
 նութեամբ գրադին պէտք է վէպ գրեն
 աւելի, յարուրդ տալու համար իրենց
 խօսքի ախորժակներուն։ Զօհրապ փոր-
 ձեց, բայց տեսաւ որ ինք վէպին ու ման-
 րապատումին մարդը չէ, այլ մարդն է
 սեղմին եւ մեծ գիծերուն։ Ատոր համար
 էր, որ վիպական մեծ տարրութիւն եւ
 յատակ ունեցող գրական դործեր, վե-
 բածեց նորավէպի կարճ տարածութեան։
 Ու ճիշդ է նորէն երբ կ'ըտուի, թէ կան
 վէպեր, որոնք պատմուածք մը ըլլալու
 ատաղձ չունին, ու կան նորավէպեր եւ
 պատմուածքներ, որոնց հիմնական շի-
 նանիւթը կը բաւէ վէպի մը լման լաս-
 տակերտումին։ Մեր նորավէպին իշխա-
 նը ստորագրեց նորավէպեր, բարձրար-
 ուեստ վարպետութեամբ մը։ Կը տես-
 նենք ու կը կարդանք իր գրածէն ետք
 նաեւ չգրածը, որ նոյնքան ու աւելիով
 իրն է։ Մեր Ապրիլեան մտաւորական նա-
 հատակներուն առաջին նահատակը պեր-
 ճախօս է իր խօսքին թէ լուսութեան մէջ,
 կեանքին թէ մահուան մէջ։

Զօհրապն է ան—
 Որբերդանիչը մեծին եւ մեծափայլ
 նահատակութեան։

ԾԻ. ՊՅՍԱՅԵԱՆ



ՆՈՒՆԻ ԵՂԵՒ ՄԱՐԳ՝

(Զ. Մ. ՈՐԲՈՒՆԻ)

ՓՈՐՒՌ - 1964

Աղէտներու օսումակեցնող յիշատակներէն, որոնք ինչպէս ինչպէս, ընկալալորէ կարտէն ու նաւանջի բուռն առկապէն ետք, վերջին յիսուն տարին, հայ զբաղման արեւմտեան թեւը ունեցաւ ներքին բարդութիւններու պնդումով յայտնադարձուած բարդութիւններու յարմարութիւնները: Եւստի այս մարզին մէջ զանգուածեղ է Օլաիանի (ԵՄՍՊՅՊՅՊՅՊՅ) ներդրումը: Եւրոպացի գրական կարգ մը հսկաներու յեղափոխիչ շունչը, հոգեբանական թնտեսներու միայն նկատուած նոր շարքը, Ֆրէյդի սեռութիւնները եւ մեծ մայրաքաղաքներուն մէջ ազդուած փորձառութիւնները մեծապէս նպաստեցին հոգեվերլուծական գրականութեան մը մշակմանն ու հարուած մեր գրողներուն այս նոր հասկէին: Ինչ որ սկիզբ Սփիւտի մէջ շարունակութիւն է ու արեւմտեղ, Բացարձակ նորք այս երանգն է:

Գիւրջին կարգադրուող, գիւրջին մարտուող, հասնել կամ զուարճալի գրուածներ բովանդակող շիրքեր չեն այս սեռին պատկանող գործերը: Գրական որոշ զարգացում ունեցող եւ ներքին հարցերու մէջ կատարուած հետազոտութիւնն աւելորդ ընթացիկներուն կը պատկանի սենյակ վայելքը: Ընդհանրապէս գիւրջին չեն զուարճարդէն սենյակ: Մարդկային բոլոր տկարութիւնները, սենյակը, հրաշքերը, պատգամներ հակամեծերը, մարմինն ու հոգին մէջ տեղի ունեցած յարաբերութիւնները ընդգրկելու եւ սենյակ լեզու ստուգարարման ջանքերն պէտք է ունենայ հոգեբանական գործերու մեծարկող գրողները: Այդ էջերուն մէջ, մայր մը պիտի կարենայ իր ջրամբնով շահած դրամին բաժին հանել ու սղուն Ֆիդէլիան կարողութիւնը ստուգելու: Համար՝ սենյակի գործերու մէջ զպայտածի գրելի գայն: Տղան պէտք չէ ստատուի իր գրելի հանձարի:

Մարդկային վիճակի պարզութեան իրականութիւնը խոստովանելու: Գրողը պէտք չէ զանուի պղծուած աղջկայ մը արիւնոտ մարմինը նկարագրել եւ ընթերցողին պատմել մտնի մը սիրահարելու: Մարդկային հոգին սննդի իրականութիւնը, որ փարթած աղջկայ մը շնորհները վայելելու: Երանութիւնն նուազ կարեւոր չէ, գրական էջ մը կենդանացնելու գործողութեան մէջ:

Գրողներ արեւմտեան տէր գրող մըն է Ուրտանի եւ շնորհիւ այդ յատկութեան՝ ան կը պատուէ բարութեան, ազնուութեան, քաղցրութեան եւ այլ առաքինութիւններով բնի կողմ մարդոց պատմութեանը, կ'որոնէ իւրաքանչիւր մարդի պնդանքը, կը տարբարուի շարժառիթները եւ համարել արարքներու թուումով կը ցուցադրէ սենյակ ներքին իրականութիւնը:

Վէպի զիտուար հերոսին ազդուներուն ու յարաբերութիւններուն մէջէն, Ուրտանի՝ գրողներ տի ինչ ինչ մտածանքով, ընթերցողին ներկայացուցած է ուղարկու շրջա տիպարներ: Տառապան, մեծներէն, յուսամբ ու պատրանքներով լեցած հայ կեն մը: Արուներուն մէջ իր գրքոտու, իբր, անբարատեան իրութիւնը ծաւալող ու գերեզմանին սեղին իր հմայքը պահող Փրանսուցի սիրտի աղջիկ մը: Բարութեան ու համարութեան մարմնացում Սրբունի եւ սեփական սերի սնունդարութիւն մը՝ Հրանդը, խանդավառ, կենսունակ, տեսարար հալածուած, բայց վնասել ըսաւ լզկացող: Հայ:

Ամենէն հետաքրքրականը սակայն Քոման է, վէպի զիտուար հերոսը, անոր ներքին աշխարհը լեցնող կենդանութեան շարունակը:

Նախատակ մարդու մը զուտն է Քոման, որ մօրը, եղբորը ու ջրըն հետ միասնա կ'իյնայ:

Ժամանակ մը ետք, ըսյալը Աժերիկոս կը մեկնի, իսկ եղբայրը՝ Հայաստան. «Քանի Սիրամայրիմ պէս Ամերիկամերը չգնաց, սեր ամենում երբեք լիք տեղը գնաց»։ Ինք կը մնայ մօրը Հետ և կ'ապրի անոր կարած շարժանքներուն երարները յաճախորդներուն տանելու և զանձուկները կատարելու զհերին զործով մը. «Ընդհն յայնքան մը-լաստացուցիչ է, որքան յվաստիանում հացը ուտելը»։ Մոյլ մը չէ թոճաւ, կենանքի համար պարզապէս ուրիշ պատրաստութիւն տեսած է, իր կորովը սպասած է իմացական դեպքներու վերայ, զորոշ է, բայց խլուած է իր մտքով զիտութեան հօգուտործման զեւրիք» և կ'ապրի մօրը վաստակով։ Մայրը կը հաւատայ անոր բացատրիկ կարողութիւններուն, կը մտածէ ազգային մասին։ Եզուն համար աղջիկ մը կը զնէ միտքը։ Աղջկան կը ներկայանայ հարուստ յաճախորդ մը։ Այն ատեն Յուստանին բերել կու տայ Պուսոյ իրենց բարեկամներէն կին մը և անոր երիտասարդ աղջիկը, ծնունդէն առաջ երկու ծնողներուն կողմէ թոճաւին նախասահմանում Սրբուհին։ Երեսով կը մեռնի թոճաւին մայրը։ Կը մեռնի նոյնպէս Սրբուհին մայրը։ Աղջիկը ազուն մօր զործը կը ստանձնէ, ազուն կարուած շարժանքներն զաճախորդներուն տանելու և զանձուկները կատարելու իր նախկին պաշտօնը կը շարունակէ։

Ամէնուն դիտցածը, Սրբուհին օրազրէն զազածը և իր հոգիին մէջ տեղի ունեցածը, թոճաւ մէկ առ մէկ կը պատմէ մեռած մօրը, ապրելով յաճախ անոր զբարքը։ Ու ահա՛ որքան թոճաւ մօրը կը պատմէ իրեն համար յարգալից ընտրեալ հարսնացուն չկարենալ սիրելու բազմասանձայց տաղանդները։ Ուրուականներով, պատկերներով, ձայներով ու կոսկածներով պաշարուած մարդ մըն է ինք ու այդ հանգամանքը կ'արդիւնէ իրեն Սրբուհին մասին մասնելու արարքը։ Ամէնէն առաջ կայ Մառի Ժողովը, անգամ մը իր հոգին ցնցած ու հիմա արկածի մը հետեւանքով մօրը քով իր Քարըն ունեցող Քրիստոսի աղջիկը, որուն ձայնը լսել կարծած է) ձայնը կը հարածէ զինք անէն տեղ, կը շարժարէ ամէն ժամ ու թոյլ չի տաք, որ մտածէ Սրբուհին մասին։ «Ինձի համար ընտրած ազգիկ պարտուած է սա մեռելիմ կշտարմամբն ու զիս ըրած զարմամալի սիրանաք մը։ Տե՛ս, ի՛նչ ոգիւ լի բան, որպէս մեռելի մը սիրանաք»։

Մառի Ժողովէն ետք, աքարի տանն թուրքի մը կողմէ բռնաբարուած հայ աղջկայ մը արեւնոս յիշատակը կը կաշկանդէ հոգին։ «Այդ օրէն, այդ պարմանուհիմ հանդէպ սնեցած եղբայրական զգացումս երբեք չյարքեցաւ։ Ու հիմա երբ Սրբուհին վրայ կը խորհիմ, այդ մոյմ զգացումն է, որ կ'արթննայ ու կ'ուռի մէջս»։

Երբ Մառի Ժողովին ու հայ աղջկան յիշատակները կը սկսին իրենց ուժգնութիւնը կորուսնցնել ու զազրիւ արգելիլ պատճառներ ըլլալէ, այն ատեն, թովմաս իր ընկերքը՝ Հրանդին ու Սրբուհին միջեւ զազանի կապի մը կասկածով կը սկսի տարակուսել։ «Ես էի այդպէս տեսնող։ Ես կ'ուզէի, որ այդպէս ըլլայ, արդեօրի տեսնուիս պարտուակ ունեմայի»։ Կը հաւատայ իր հիւանդաբն երեւակաւութեան և կ'որոշէ մեկնել։ Անմիջապէս կը հանդիպի Սրբուհին ու կ'իմացնէ անոր իր կոսկածն ու մտադրութիւնը։ «Ի՛նչ, մէկ հատը չի՞ բաւեր, քանի՞ մարդու պէտք ունիս»։ Կ'ըսէ անոր ու մեկնելու կը պատրաստուի։ Սրբուհին կը կնքնէ զինք և ուղիքին կայծեր արձակող շատուուն ապուսկ մը կու տայ երեսին։ «Երբ ուշքի կեցայ, Արբուհիմ քնեիրում մէջ էի ու երեսներու վրայ զգացի ա՛ծոր արցունքներում տաք ու այրող կաթիլները»։ Կ'անդադարուանայ յայնքամ իրականութեան։ Կը զգայ, թէ մաքրուած է իր ներքին թոյններէն։ Կը մարդանայ...

Սրբուհի ընկելու Մարտի զբուած վէպ մը չէ, այլ կարծես միայն սպրուած իրականութիւն մըն է, այնքան հարազատ են կացութիւնները, իհա է կեանքը ու իրաւ խոստովանութիւն, ըրտածում, ջերմութիւն։ Տիպարներուն երբքին կոտորել ամբողջացող կենսական մանքամանութիւններ։ Մեղք որ դարձը լաւ չէ սրբազրուած ու լեզուական և փրականական թնձուկներու առատութիւնը կը խանդարէ ներքին կենսանքուն հեռի հետեւող ընթերցողին լարուածութիւնը։

Փարիզի գրողները, հաւաքական կամքով ու ներկայութեամբ, թարմ նիւթեր բերին հայ զբրականութեան, Պատերազմը և ոմանց վաղահաս շիջումը տարողնեցին թէն ուժերը, բայց պեղման աշխատանքը շարունակուեցաւ։ Կորուսութիւններու հետամուտ գրողներէն մէկը «Նշեա՛ Ուրուհին... ընկելու մարդ»։

Գ. Ս.

«ՀԱՅՅՈՒ ԲԵԿՈՐՆԵՐ»

(ՎԱՀՐԱՄ ԱՍՎԵԱՆ)

ԼԻՁՊՈՆ - 1904

Նոտիք թուղթի վրայ, ընտրի սպառնութեամբ այս գործին մէջ Պրն. Վ. Մավեան մէկտեղած է քան պատմութիւններ, վստահաբար առնուած իրական կեանքէ ու ներկայացուած գրեթէ այնպէս ինչպէս պատահած են անոնք, գրեթէ տեղեկագրական ձևով:

Անա թէ ինչու, Հակասակ բոլոր կտորներէն անցնող տաք ապրումին, որ Հեղինակին է, վարանցանք զպատմուածք որակելէ հրամայուած կտորները: Կը բացակայի անոնցմէ Հեղինակէն եկող յաւելումը, երեսակայութեան մղիչ ուժով ներաշխարհէն դուրս բերուած երանգը, այլապէս զուեակտուած, սարբեր տիպարներու ստեղծագործումը ու անոնց դէպքերու վրայ տնեցած ազդեցութիւնը, զէպքերէ կրած ազդեցութիւնը՝ վստահութեամբ, որոնք հասոյցին հոս տան աւելի շարժուն ձեւ, յաւելում կենդանութիւն:

Վ. Մավեան կը դիմէ օակայն: Նշմարելի ետք կը նայի, կը դնէ, կը քննարկէ գիծացիւնը՝ միշտ փնտռելով անոր մէջ ՀԱՅՐ, կամ բացակայութիւնը Հայուն: Ճակատագրապաշտ այս ժողովուրդի ճակատագրական ցրտամովը ի սփիւռս աշխարհի յատաճանցած են անհասկանալի սուգ տալանք, անհասարար առած Հայերու ծօա: Ապրիւն, շինարար, Հարստանալու ու երջանկանալու անմնակն պահանջ մը մէկ կողմէն, իր յարակիցներով՝ օտար շրջանակներ, օտար կիկ, դրամապաշտութիւն, ցեղին Հանդէպ անտարբերութիւն: օտար այլ պայմաններուն մէջ ապերձանութեան խոր զգայնութիւնը միւս կողմէն, իր յարակիցներով՝ Հայ բառի, Հայ իտքի, Հայ ժարդու, զղջումներ, ափսոսանքներ, ցաւեր, անվերջանալի ցաւեր ինքզինք լքուած, ինքզինք չիրականացուցած Հայ ժարդու: Եւս այն Նիւթերը, որոնք Հետաքրքրած են Հեղինակը, որոնք տեւաբար իր աչքերուն դիմաց են եղած, որոնց արտայայտութիւնները փնտռած է Հայու ամէն մէկ բնկորին մէջ, որուն Հանդիպած է իր ճամբորդութեանց ընթացքին:

Պրն. Պատման (Լոնտոնի Անկլո-Արմենիէն չլալը) որուն Պատմաններն զննանք անգլուհի կեիկը կտրած է անուշա, ՊԱՈՒՆՆ՝ Ետիկին Պողոսը, Իսկիւարի դերեզմանուպահ, օտար կընկայ տէր, օտարացած զաւակներու տէր Պրն. Սրամեանը որ զնուսեցէք տղերքը կ'երգէ ու հարկական դրոշակ կը փոխ իր սեղանին, կ'ող ու զաւակներու ծագրանքին տակ, կը կազմեն իրար լրացնող Հակադրութիւններ, Համարութիւններ, որոնցմէ կը բարձրանայ Հեղինակին վիշաք, աստուպանքը, վախը՝ վաղուան Համար, այլ քնկորներու աստուպանք վախը:

Այս տաք ապրումով զրուած էջերուն մէջ յաւելումը շերտութիւն մը սննի, և պատմուածքի կը մօտենան (չառ անելի լայն ու խոր զարգացման կարելիութիւնը տնին իրենց մէջ) ճիւղային Մայրիկը, ճվարձու ուրախութիւնը, ճկահասանի վերջին զատար Հայը, ճՄտտրէսը և ճՅիսուն տարի ետքը: Հեղինակը զուսուցած է Հպտեղիկ, սակայն իրենց մէջ լեւտը պարունակող տողերով տալով այլ Հայիական սգրերգութիւնները, ինչ որ արդիական զբաղանդութեան մը յատկանիւն է տեղուշա: կը պակի սուկայն անմնականացումը՝ տիպարներու իմաստով: որը պարտագրաբար կը բերէր անհրաժեշտ տրլաղանութիւնը: մինչ իմա, ներկայ Հեղինակն է, յանտի կը կրենք ՆՈՅՆի տպագրութիւնը:

Եւ այլ յոյն տեղուշա Հեղինակն է, բնական է որ Հեղինակը միեւնոյն անձը ըլլայ, ասակայն իր ներկայացուցած անմնաւարութիւնները պէտք է մերթապատէ իր անմնական ճնուսէն, պէտք է անոնց տայ բուսարար պատմութիւն զարգանալու իրմէ տարբեր, ԻՐՈՆՅՈՒ Եղող յատուկ աշխարհին մէջ:

Այս բոլորով Հանդերձ, դէրձը կը մեայ վրկայութիւն մը՝ փլուած Հայութեան բնկորներուն մէջ ապրող ու մեանող ցեղային նկարագրին, սպրտմեներուն, կարտներուն, երազներուն:

Բ. Բ.

«ԱԶԴԱԿ»Ի 38 ՏԱՐԻՆԵՐԸ

«Ազգակ» օրաթերթի տէր և տնօրէնը՝ Հայկ Պալեան, քերթը իր բուն իրաւատիրոջ՝ Հ. Յ. Դաշնակցութեան վերադարձնելու առեմ, համրութեան տուաւ նաեւ բացառիկ հարտք մը՝ «Ազգակի» 38 տարիները խորագրով: Հասօրը կը բազմաձայն հարիւր մեծադիր էջերէ եւ կը ձգտի լուսաւորել օրաթերթին համագրութեանը:

Հայկ Պալեանի տառագրութեամբ երեւցած 18 էջնոց ծաւալում ու մեծապէս շահեկան գրութեան կազմին՝ զըբակն էր մտաւարակն երեք սերունդի մերկայացումը: Եւստի գրութիւններով իրենց խօսքը քսած են, Աւարիայ եւ Լիբանանի մէջ իր վեճակն դերը կատարած մեր աւազին օրաթերթին մասին:

Հատորին մէջ, տեղ տրուած է նաեւ «Ազգակ»ի 10-ամեակին, 25-ամեակին եւ այլ առիթներով պաշտօնական մտքմտներէ, հեղինակաւոր դէմքերէ, տարբարակն էր հայ մեծագրիչի ժամուրդն կողմէ բանաստեղծութեան արտաբանութեան վկայութիւններ: «Ազգակի» 38 տարիները՝ հատորին մէջ նայնքան շահեկան են եւ տրամադին հմայք մը կ'աւելցնեն ընդհանուրին վրայ, զանազան տարեշրջաններէ վերցուած եւ տարբեր խնդիրներու նուիրուած խմբագրական նմայշներ:

Այս քուստն մասանցէն ետք, ինչ որ պիտի ըսնէ «Ազգակ»ի եւ զայն գլուխ հանած կամքին մասին, հաւանաբար կրկնութիւնը պիտի ըլլայ այն մտածումներուն, որոնք այնքան քերտութեամբ ու անվերապահ զեզումով մը ըսուած են գաղութահայ մտաւարա-

կանութեան կողմէ: Իմանալով այդ գրութիւններուն մէջ արտայայտուած մտքերը, անգամ մը նա կը պարզուի, որ հաւատով, կիրքով, գոհաբերութեան ոգիով ու եռանդով սկսուած, արեւն զինաց բութ շնն ու կուզայ շնն մարդիկ, ընդհակառակն, բախ են եւ հրախտապարտ: «Ազգակ», եւ «Ազգանայ» տարուած համարինն ձեռնարկներն կ'են կ'ենք տուած, զայն ապրեցուցած, աննցուցած մարդը՝ Հայկ Պալեան, անգնահատելի ծառայութիւն մը մատուցած են մեր տարագիր բազմութիւններուն, ոչինչէն ստեղծելով այս անհնախա գործը, այս դպրոցը, ազգային բարտիւնն տունը: Կը բաւէ կարգալ իր ծաւալում ու հարուստ գրութիւնը, համագրելու համար, որ դիւրաբեամբ գլուխ հանուած չէ գործը: Ամուր մկարագրի մը եւ անընկնելի կամքի մը գորտեամբ գոյատեւած էր 38 տարիներու ընթացքին 38 հարիւր դժուարութիւններ յաղթահարելով պըսակուած գործ մըն է տմ, որով նաեւ աւելի պատկառազդու, աւելի սիրելի: Նայելով այս բացատրիչին, համ աքըրուած վկայութիւններուն ընդմէջէն անբողբութիւնը ընդգրկելով՝ պիտի ըսնէք:

- Անտասիկ մարդ մը, որ գուր չէ սպքած...

Այս էջերը ի վիճակի չեն աւելի ընդարձակուելու եւ գործին ու գործիչին մասին լրիւ խօսքեր բերու: Եզած վկայութիւններէն էջ մը նա կազմելով վերջացնէ՞ն ուրեմ մեր խօսքը այս երախտաշատ գործիչին մասին, որ «Ազգակ»ի 38 տարիներու Հայկ Պալեանը եղաւ:

26 սարկենք պարտականութեան դիրքերու վրայ - Անդրակնը - որպէս հայ զազափարակեան ժամուշի յառաջագահ ժամակներէն ձկնը, որպէս ուխտեալ զինուորը Հ. Յ. Դաշնակցութեան 26 սարկ' - կարն եամբայ չէ սարազիք հայ ժամուշի կամար. զքիթէ նոյն ճանաչարհը, որով անցաւ Սուրբոյ եւ Լիբանանի հայութեան կեանքը: Եւ Անդրակնը ապրիցաւ այդ կեանքով, ջանաց արտայայտել տնոր թուրք ծաւելորը, ժամակէց լինել տնոր սարսուսթեան եւ վիշտերուն, տնոր ժակընթացութիւններուն եւ տեղատուութիւններուն եւ նպաստել տնոր յարման զերկիցին: Եթէ Լիբանանի Հայութիւնը այսօր այն է ինչ որ է, առոր ձէջ իր համեալ քաճիկը ունի, տեղատեղան, նաեւ Անդրակնը: Ս. ՎՐԱՅՈՍԱՆ

Հայ ժողովուրդը, զոր Անդրակնը սրբորար կը պաշտպանէր, իրաւունք ունի կենսիկ եւ նուիրական ազատութեան: Եւ Անդրակնը ապրիցաւ այս ազատութեան համար: Այլ ձէջ րան կը լեղեցնէր Անդրակնի հրատարակելը իր իտեղան, իր աշխի հայրենասիրութեան: Ան իր ճայնը կը բարձրացնէր պաշտպանելու համար արի եւ հպարտ ժողովուրդ ժը, որուն զէժ հակառակորէրը պայքար էր բացած եւ որ իր զարկիցաւ այդ հակառակորէն զէժ, չհամակերպելով այն հզնիմ զոյսութեան, որ իրեն գտնիկորէն վերապահուած էր: ՔԵՐԻՄ ՄԻՒՆԻԿԵՄ ՔԵՐԻՄ

Մեր զտեղուանները, ամբողջ 26 սարի տնտեսին հիգորով իրենց հայը հարեցին, բայց չարհացան ժարմաւոր հայով: Հայեր էին ու հոգեւոր հայ փնտուցին: Անդրակնը առաւ այդ հայը - կարգաւ սորվեցուց շահերուն: Հայերէն սորվեցուց, հայու սոգի հերլընիկով եւ հայ ժշակութի սէրը ծաւելուով: Գ. ՄԻՒՆԻԿԵՄ

Հայերը նոր եկած էին այս հայրենիքը եւ կը գտնուէին քրենց բարձրուն եւ նկարագրին տնտեսութ ժողովուրդի ժը ձէջ: Անդրակնը էր, որ ըստ տեղեկ ներդրումութեան եւ հիմը պարտաւ հայ եւ արար սերտակցութեան, Անդրակնը ցոյց առաւ իր ազգակիցներուն լաւագոյն համբան եւ պատակարար ժը զարմուց զանոնց այս հայրենիքին: Եւ ստիկաւ որան ժեժ ծառայութիւն ժըն է:

ԱԼԿԱԿՆ ԵՆՄԸՅՐԻԷ

Անդրակնի իմբողջը տնտեսան ու հայապաշտ հրատարակագիր ժը չէ երգած, սակայն՝ ժեր ժամուշի պատմութեան ձէջ զիչէր ունեցած են իր արթնութիւնը, իրատեսութիւնը, ուղղութիւն ճշդելու նեատեսութիւնը: Այս արժանիքներով ալ Անդրակնը ընկերային եւ ազգային բարտարը զեր կատարած է Լիբանանի, Միջին Արեւելի ու կարեւի է ըսել Հայութեան ընդհանրական կեանքին ձէջ: Մ. ԲԻՅՈՒԿՈՒՆԱՆ

Հայի Պաշտան, շնորհիւ իր վարչական կարողութեանց, ժանուանը շնորհիւ իր զազափարակեան տնտեսակիցի հաւաստին, աշխատելու եւ յարտուելու տնտեսան կամքին եւ զհարկերութեան ոգիին՝ յալուղեցաւ Անդրակնը զարմուշ Պէյրութի տնտեսիկ արաթերի: Զ. ՍԱՄՈՒԿԷ

Այսօրուան Անդրակնը, հայ իրակցութեան ձէջ տնտեսագործ կողմոյ երեւոյթներէն ձկնը հանգիստեցաւ իր անխափան հրատարակութեամբ, արքայատուութեամբ, նեատեսութեամբ, եւ, կրկինէք՝ իր անսայրա՛վ գործունէութեամբ: Ա. ՆՅՈՒՐԵԱՆ

Գ. ՄԻՒՆԻԿԵՄ

Ա. ՆՅՈՒՐԵԱՆ

Հոգևորներ

ՄՏԻՒ ԵՊԱՍԸՆԿԱԼՆԵՐ...

«Զարթոնքի յաջորդական երկու թիւերուն (8 եւ 9 Յուլիս) մէջ, հինէն եկող մտքի երկարակեաց թշուառութիւն մը, Սփիւռքի համար պատրաստուած նրեանհան զսաղարթերուն առթիով՝ վերստին ցուցողբած է արհամարհուած իր «հեղինակութեան» վատասողը երեսը, գրոհելով այս անգամ Ա. Մատուկեանի դէմ: Մէկուն ըսածը եւ միւսին պաշտպանածը քրննութեան առարկայ չեն հոս: Մեզ ընդվզեցնողը կատարուած հերթական խարզախուժիւնն է, հետեւեալն է.

«Ապաքէմ, ո՛չ մէկ բան այնքան վտանգաւոր է գրողի մը հոգեւոր կեանքին մէջ, որքան խարուսիկ պատրանք ստեղծելը: Լրագրող Մատուկեան թող քանի մը քայլ հեռու կենայ իր տնունը շուտասելուկ դարձուցած փարսիսցիներու սնտոյի շոգումսէն եւ իր շուրջը ստեղծուած աւելորդ լուսապսակի շրջագծէն, որուն շլացուցիչ կայծերը թայլ չեն տար իրեն իրերը տեսնելու իրենց բնական վիճակին մէջ: Թող գրողին վայել խիզախութեամբ, նայի իր անցած գրական երկար ճամբարիսի վրայ եւ խղճի մտօք ըսէ թէ համբաւաւոր «Թուղթ»էն յետոյ՝ ի՞նչ նոր պոէմ կամ թէկուզ կարճաշունչ էջերուած գրած է՝ արդարացնելու համար արուեստագետի վսեմ կոչումը»:

Այս սողերով կնքուած է «Զարթոնքի մէջ տպուած յօդուածը: Բայց մենք կ'ուզէինք ըսել, որ այս խօսքերը յօդուածողբը ինք չէ ըսած, զանոնք ըսած է վաւերական քննադատ մը: Ա. Մատուկեանի համար ըսուած չեն, ջրուած են ուրիշ գրողի մը համար: Անոնք կը պատկանին Հայաստանի ամէնէն ուշադրաւ քննադատներէն Ս. Սողոմոնեանին եւ ուզողուած են նայիքի Զարեանի հասցէին: 1956-ին, «Սովետական գրականութիւն» ամսաթերթին (Ոգոստոս) մէջ լոյս տեսաւ Սողոմոնեանի յօդուածը, որուն հետեւեալ մասը յափշտակելով՝ տարբեր մարդոց դէմ կը փորձէ վճիռներ արձակել «Զարթոնքի» քննադատը»:

«Գրողի հոգեւոր կեանքում ոչ մի բան այնքան նակատագրակամօրէն վտանգաւոր չէ, որքան իր մասին ստեղծուած խարուսիկ պատրանքը: Թանաքստեղծ նայիրի Զարեանը թող մի քանի քայլ հեռու կանգնի իր շուրջն ստեղծուած աւելորդ լուսապսակի շրջագծից, որի շլացուցիչ շագփը խանգարում է իրերը տեսնելու իրենց բնական տեսքով, թող սրտիս հայեացքով մայի իր սեփական գործերի վրայ եւ խղճի մտօք ցոյց տայ, թէ 1946 թուին աւարտած «Հացափան» վէպից յետոյ իր ո՞ր գրածն է նայիկնում ստեղծած լուսագոյն գրուածքներից բարձր կամ թէկուզ նրանցից որեւէ մէկին համարժէտ»:

Տեսաք Հարկաւ անկերեւ կողպուտը: Եղածը այս է ու աչքեցուցիչ է եղածը: Ու մտածել տակաւին, որ հակառակ այս շունչեղութեան՝ մարդը մեծարարբառ յաւակնոտութեամբ գիրքեր կը գրախօսէ, կը վիճի, դէմքերու տեղերը կը ճշդէ, կը սոնջայ մէնչեւ անգամ ա՛յն առեւ, երբ իր կիրքերը բառի վերածելու ու բանածնելու նուագադոյն կարողութիւնն իսկ չունի:

Բայց տածանելի է մեզի համար գրողի մտքի այս նպաստընկալներով:

... ՎԱՂՈՒՅ ԷՐ ԱՆՋԱՏՈՒԵԼ

Հայաստանի էրիտասարդ ջննագատներէն՝ Հրանտ Թամրազեան, Սիւմանթոյի նուիրած էր մենագրութեան մէջ, տեղաւորած է նաեւ հետեւեալ «վկայութիւն»ը.

Կովկասը Սիւմանթոյի վրայ մեծ ազդեցութիւն էր գործել, նա երազում էր մնալ այնտեղ եւ նուիրուել ազատ ստեղծագործութեանը: «Քաճարանաւորը հաւատում էր քուրճակայ ժողովրդի ազատագրմանը, — յիշում է Շիրվանզադէն: — Սահմանադրական Թուրքիայի գազանութիւնների ժամանակ ես նրան չհանդիպեցի: Միայն 1913 թուականին տեսայ նրան Թիֆլիսում, երբ Պոլսից ուղեկցել էր Սիւման Զաւարեանի դիակը: Նա նորէն մընայելու էր, եւ անլի յուսալուած էր, քան փարիզում:

— Եթէ հնար ունենայի, — ասաց նա մի օր ինձ, — ուրախութեամբ հոս կը կենայի»:

Սիւմանթոյի հոգեկան գաղափարական աշխարհում խոր փափոխութիւններ էին կատարուել: «Հոգեպէս նա դաշնակցութիւնից վազուց էր անջատուել, — յիշում է Շիրվանզադէն: — Այդ նա չէր թաքցնում ինձնից: Այժմ փափաքում էր ամէն մի կապ խզել այդ կուսակցութեան հետ, որ այնքան շահագործել էր նրա բոցավառ տաղանդը: Այժմ նա երազում էր նուիրուել ազատ ստեղծագործութեանը»:

Բոցավառ տաղանդի բանաստեղծը, ազատագրուելով դաշնակցութեան կապանքներից ու մոլոր գործիակերպից, ձգտում էր նուիրուել գրական ստեղծագործութեան նոր, մեծ աշխատանքի: Շիրվանզադէն ծրարել էր 1914 թուականից Մուսիւայում երատարակել գրուած գրական բնայթի մեծածաւալ հանդէս, որու եւ հայ անուանի գրողների մասնակցութեամբ: Խմբագիրները պէտք է լինէին Վահան Տէրեանը եւ Սիւմանթոն, բայց վերահաս համաշխարհային պատերազմը խափանց հանդէսի երատարակութիւնը»:

Հաւատարմով Թամրազեանի առաջ քշած «խառտերուն», պահ մը ընդունինք, որ կար Դաշնակցական Սիւմանթո մը եւ կար ուրիշ Սիւմանթո մը, որ Հոգեպէս զաշնակցութիւնից վազուց էր անջատուել: Կը պարզուի ուրեմն, որ Դաշնակցութենէն անջատուած Սիւմանթոն չէ կրցած նուիրուել «ազատ ստեղծագործութեանը», եւ ինչ որ կայ Սիւմանթոյի անուանով՝ յայտնագործուած է այն ատեն, երբ որտեղուտ քնարահարը ամբողջութեամբ կը դառնուէր «Դաշնակցութեան կապանքների» մէջ:

Եթէ կասկածի տակ պիտի չդնենք քննադատին լրջութիւնը, անշահախընդիր ապրումը, նշմարութիւնը Հաղորդելու կիրքը, ապա ուրեմն պիտի հասկնանք, որ Թամրազեանին ըսելու օգտը սարքեր չէ մեր ըսածէն: Կ'ուզէր անջատուել, չանջատուեցաւ: Կ'ուզէր նուիրուել ազատ ստեղծագործութեան, ժամանակ չունեցաւ, չեղաւ, բայց եղածը, որուն մասին կը գրուի այս գիրքը, պատճառ կը դառնայ հիասքանչ պոթիկումներու, լաւ հասկցէք, երկնուած է ամբողջութեամբ Դաշնակցութեան ստեղծած մթնոլորտին մէջ, ողիով, արու շեշտով: Երբ ոտից գլուխ Դաշնակցական էր ինքը՝ Սիւմանթոն:

Եթէ Թամրազեանի կասկածները անցազրային մասնողութիւններով չեն յօրինուած եւ ըսուածին ներք Հակատակը Հաղորդելու միտք մը չի

հետապնդեր քննադատը՝ ապա ինչպէ՛ս կ'ուզէ, որ լուրջի առնենք իր անհարկի յայտութիւնները:

Սիւսանթոյի անունին նոր կապուած արխիւային այս առասպելին հաւատք ընծայող գծուար թէ գտնուի: Մնաց որ, իրրեւ բանաստեղծ ցածրած աղբիւր մը չէր Սիւսանթո, եւ աւանդութիւնը կ'ըսէ, թէ առանց ցածրած քլայալու այդ առաջին պատճառին՝ ո՛չ ոք հոգեպէս անջատուած է Դաշնակցութենէն: Իրենց լռելիքը ըսած ու ընելիքը ըրած վերջացուցած մարդերն են ընդհանրապէս, որ կը մտածեն անջատման մասին, վերածելով իրենց անջատումը ճօխ կեցութեան մը դրամադրութիւն:

Կը թուի, թէ Դաշնակցութենէն անջատուելու պարագան բարեդէպ երևույթ մը կը համարէ քննադատը եւ ստեղծագործական պայծառ հետանքերնեք կը տեսնէ անջատման փաստին մէջ: Բայց Սիւսանթոյի մտքին եզրած յայտնութիւնները վստահելի մեկնակէտներ չեն, իսկ եթէ անպայման կ'ուզէ այդ ողջնչող թէզը արծարծել՝ կրնայ դիմել յայտնի անջատուողներուն ու փարատել վարկածին մատախուզը: Առաջին հերթին կրնայ դիմել անջատուողներու փաստարանուած նախաձոր՝ Ա. Իսահակեանին եւ հասնիլ մինչեւ վերջին «մաքրալրուածը»՝ Կ. Ջարեան եւ ըսել մեզի, թէ առանց անջատումէն ի՞նչ շահեցաւ հայ գրականութիւնը: Շահեցա՞ւ, թէ գնասց: Ասոնց խղումին համաշխարհային պատերազմ չյաջողեց, թուրք զահիճներ չունեցան ասոնք, զրկանքներ չապրեցան, լաւ ապրեցան, շատ ապրեցան, ամենք կ'ապրին տակաւին, երկա՛ր ապրին, բայց ուղիղ ու ապրեցնող ի՞նչ տող ունին, ի՞նչ էջ ունին, ի՞նչ դիրք: Ի՞նչ: Թող բարի ըլլայ ըսել մեզի Թամրազիան: Մինչ այդ կրկնենք մեր գիտցածը, այն՝ որ Դաշնակցութենէն՝ այսինքն ցեղային խորագոյն ու դարաւար ապրումէն, ազգային անխառն ձգտումներէն, երգիներէն կ'անջատուին, անջատուեցան ասոնք՝ որոնք ըսելիք չունէին այլեւս, ընելիք չունէին այլեւս, իրենց ըսեմքն ու ընելիքը վերջացուցած ու հոգեպէս ցածրած մարդեր էին, ազմուկով եւ ուրիշ անուններով իրենց ցաւատանջ հոգին օրօրող դժբախտներ:

«Բանաստեղծը հաւատում էր քուրբանայ ժողովրդի ազատագրմանը, կ'ըսուի մեզի: Ի՛ հարկէ՛ կը հաւատար: Բայց ի՞նչ միջոցներով պիտի իրագործուէր իր հաւատքը: Աղօթելով, բանաստեղծութիւններ գրելով, թէ մէկ մէկ բանաստեղծութիւն արժող չունայլից զիւցապուններով, որոնց երգը երգեց ինք, հարուածը օրհներգեց, աստուածացուց ոգին: Եթէ Դաշնակցութիւնը դուրս հանենք Սիւսանթոյի ապրած ժամանակահատուածէն, հաւատք ներշնչող ի՞նչ ջոճալք ուժ կը մնար անդին, որուն վրայ յոյս դնէր բանաստեղծը ու սպասէր թրքահայ ժողովուրդի ազատագրման: Ուրիշ կուսակցութիւններ կային հարկաւ, հերոսներ կային, շարժումներ կային, բայց ասոնք, իրենց քանակական ու որակական արժէքով, ի վիճակի չէին Սիւսանթոյի մը ծնունդ տալ, ոգեշնչել, թեւաւորել Սիւսանթո մը: Ատիկա կրնար ընել միայն մէկը, կրցաւ ընել միայն մէկը՝ Դաշնակցութիւնը, որովհետեւ ընթացիկ առումով կուսակցութիւն մը չէր Դաշնակցութիւնը, քանակ չէր միայն, հերոս չէր միայն, ոգի չէր, յարութեան յոյս չէր միայն, ամբողջ ազգն էր, Սիւսանթոյի գիտակցութեան շրջանին ամբողջ Հայութիւնն էր Դաշնակցութիւնը:

Հերոսներ ստեղծեց Դաշնակցութիւնը ու հերոսները պաշտել սորվեցուց: Տաղանդներու ծնունդ տուող միջոցառում սահղծեց եւ տաղանդները քննահատել սորվեցուց: Բայց մարդիկ ելեր են հիմա ու կ'ըսեն մէկուրեւ աչիւնը չահագործեց ու միւսին աազանդը: Ինչե՛ր կ'ըսեն հիմա:

Ի ԽՆԴԻՐ ԳԱԶԱՆՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

Հայաստանի առաջին առակագիրը՝ Արշալիր Դարբնի, կը թուի, թէ արժակուրդ ստուած է իրեն ճանուն, հռչակ ու փառք բերող դազաններուն՝ դայլերուն, աղուէսներուն ու արջերուն ու սկսած է փափուկ նիւթեր ու մուսաներ զարդասել: Մէկ տարի կ'ընէ, որ չենք հանդիպիր իր առականերուն, բայց մէկէ աւելի անգամ տեսանք իր ստորագրութիւնը ճնարական յորինումներու տակ: Դարձեալ ուշի ուշով կարդացինք իր կտորները, բայց ընթերցանութեան աւարտին մեր մէջ չսեւեց այն խանդավառութիւնը, որ իր առականերով սովոր էր առաջացնել Ա. Դարբնի: Ահաւասիկ մէկը:

ԱՆՅԱՅՏ ԶԻՆՈՒՈՐԻ ՇԻՐԻՄԸ

Սիրելի Քաթուլի յուստակին

Այսքան լեռներ կան մեր երկրում, Անշուք մի քար՝ մերսպաստա, Այսքան քարեր, այսքան մարմար: Իսկ քա մնայտ սուրբ շիրիմիմ Որ զոհուեցիր Զկայ քէկուզ անշուք մի քար: Հայրենիքիդ փառքի համար:

❦

Ա՛խ, քար չունես...

Իսկ քա երկրում՝ այսքան մարմար:

Քաթուլը՝ բանաստեղծ Հուրեանն է, որ զոհ գնաց 1942 թուականին՝ Սեւաստապոլի ճակատամարտին մէջ եւ իր շիրիմը անյայտ մնաց: Հակառակութիւնը յուզիչ է ու ամբողջութիւնը անմիջական, մարդկային է նոյնպէս վերաբերումը, բայց միայն գրականութեան մասին մտածելով՝ մեղի կը թուի, թէ աւելորդ է այս ջերթուածը, երբ ունինք, զբեթէ նոյն պարմաններէն ներշնչուած եւ նոյն պատկերներով ձեւաւորուած Երազի բանաստեղծութիւնը՝ Զարեկի մասին:

Բայց ո՞րտեղ է գերեզմանդ, որ գամ գոմէ քարն համբարեմ, թէ քար չունես, ելնեմ Մասիս, ամե՛նասուրբ քարը բերեմ:

Ա՛խ, քարաշատ Հայաստանը, քար չգցեց վրադ, Զարեկ...-

Գրեթէ նոյն ապրումը, արտայայտութեան նոյն միջոցները, նոյն պատկերները: Առակը, ի հարկէ, ի վիճակի չէ ամէն նիւթ մշակելու եւ առակագիրը պարտաւոր չէ նոյն շրջագծին մէջ սահմանափակուելու: Տարբեր խոհեր, ապրումներ, կացութիւններ կրնան խոսովել զինք, խանդավառել, զբոյսու ստիպումին առջեւ դնել: Պայմանաւ սակայն, որ մէկ ժողովն մէջ շահուած անուն մը միւսին մէջ չմտնուի: Դարբնի բանաստեղծութիւնները այդ կասկածը կու տան: Մենք, որինակ, Հուրեանի նուիրուած աստուաւոր պիտի չզրէինք, Սեւաստապոլի մէջ զոհուած բանաստեղծին յիշատակով խոսված մեր հողին պիտի բաւարարէինք, արտասանելով Երազի ջերթուածը: Երբ ունինք մէկը, անհրաժեշտ չէ միւսը: Գրականութիւնը երկու նոյնանման բանաստեղծութիւն չի հանդուրժեր:

Կենդանիք մը բնաւորութիւնը ուսումնասիրելու աշխատանքով մարդկային բարքեր սեւեռող ոճը՝ աւելի հարազատ է Արշալիր Դարբնի խառնուածքին: Անուանի առակագիրը պէտք է շուտով տուն կանչէ իր անդաւաճած դազանները եւ նոյն արագութեամբ ճամբու գնէ ապարդիւն մասնները:

ՄԱՀ՝ ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍԱՄԵԱՆԻ

Մկրտիչ Պարսամեան ծնած է 1886-ին, Ակնայ Ապուշի գիւղը: Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրի նախակրթարանին մէջ եւ երկու տարի յաճարած է Խարբերդի (Միդրէ) Կեդրոնական վարժարանը՝ ուսուցիչ ունենալով Ռուբէն Զարգարեանը: Ապա անցած է Կարին ու մտած Մանասարեան վարժարան, որուն շրջանը աւարտած է 1906-ին:

Մինչեւ 1922 ուսուցչական եւ տեսչական պաշտօններ վարած է Խարբերդի, Կարնոյ (Մանասարեան), Տրապիզոնի, Զորլուի, Գոնիայի եւ Պոլսոյ (Սամաթիա) մէջ, աւանդելով հայերէն, գրականութիւն, պատմութիւն, գերմաներէն եւ ուսողական գիտութիւններ:

Քեմալականներու յաղթանակէն ետք, Պարսամեան կը հեռանայ Պոլսէն եւ կը հաստատուի Փարիզ: Փարիզի մէջ կը բանայ գրատուն մը եւ ուսուցչական պաշտօն կը վարէ Գլոցոցաէր Տիկնանց վարժարանին մէջ:

Մկրտիչ Պարսամեան անդամ եղած է Փարիզի եկեղեցւոյ կրթական մարմնին, Հայ Նահատակ Գրադէտներու Բարեկամներու Ընկերութեան, Հայ Գրողներու Միութեան եւ Համազգայինին:

1957 Ապրիլ 27-ին տօնուած է իր զրական ու կրթական գործունէութեան յիսնամեայ յոբելանսը:

Առաջին աշխարհամարտէն առաջ, Մ. Պարսամեան աշխատակցած է Պոլսոյ «Արեւիկ», «Աւրիանդակ», «Ազատամարտ» եւ Կարնոյ «Յառաջ» թերթերուն, ինչպէս նաեւ՝ կղբոր՝ Մերուժան Պարսամեանի «Նանք» հանդէսին: Նմա-



նապէս իր եղբոր հետ հրատարակած է «Մեր տարեցոյցը» երկու տարի:

Փարիզ հաստատուելէ ետք, մինչեւ վերջերս, ան իր աշխատակցութիւնը բերած է «Յառաջ»ին, «Հայրենիք»ին, «Բազիմ» ամսաթերթին եւ զաշնակցական այլ թերթերու եւ հանդէսներու, առաւելաբար զրական եւ քննադատական յօդուածներով: Երկրորդ աշխարհամարտէն առաջ, իր եղբոր՝ Մերուժանի հետ հրատարակած է «Կեանք եւ Արուեստ» պարբերաթերթը եւ համանուն տարեգիրքը: Իբրեւ առանձին հատոր ունի «Արիւնի Տօնը», «Մեծնոզ գիւղին պատմութիւնը», «Աւետիս Ահարոնեանի կեանքն ու գործը» եւ ուրիշ բազմաթիւ ուսումնասիրութիւններ: Հրատարակած է նաեւ «Արարատ» զառադիրքերու շարքը:

Մեռաւ Փարիզի մէջ, Յունիս 18-ին:

ՄԱՀ՝ ՄԻՔԱՅԷԼ ԿԻՒՐՃԵԱՆԻ

Յ Յուլիս 1965, Շաքաթ օր, Ազեանգրիոյ մէջ, համրակառքի արկածի մը զոհ զացած է ծանօթ գրագետ և քառերագիր Միքայէլ Կիւրճեան:

digitised by A.R.A.R.@



ԻՏԱԼԱՏԻ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՄԸ ԳԻՐՔԸ

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Իտալացի յայտնի պատմաբան ֆրոֆ. Լաուրո Մայնարոն վերջերս յոչ ընծայած է, իտալերեն լիզուով, հայ ժողովուրդին և Հայոց պատմաբան Յուսուպի գիրք մը. (տպուած Միլանայի մէջ) հետևեալ վերնագրով.

«Արցախի երեք աշխարհներու և երկու աշխարհամասերու էտալոյին մրայ»:

Գիրքը կ'ընդգրկէ զամազան գլուխներ.— Հայոց ցեղը, լիզան, մշակոյթը, եկեղեցին, աբստեական ազդեցութիւնը և պատմական վերածում մը հայ ժողովուրդի ին և նորագոյն պատմաբան:

ԳԱՆԻԷԼ ՎԱՐՈՒՓԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՅՐԱՆՄԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱՄ

Ջուլիանի (ժողովուրդի հայ) երկրասարգ բանաստեղծ Վահ Կոսէլ, որ ծանօթ է նաև Հայերէն Քրիստոսեան իր թարգմանութիւններով, նահատակ մեծանուն բանաստեղծ Գանիէլ Վարուժանի «Ճեղին Սիրաք», «Հեթանոս Երգեր» և «Հայերն Երգը» գործերէն պատրաստած է ծագագաղ մը, որ Հրատարակուած է «Լա Քորտ» Հրատարակչականին կողմէ:

Վահ Կոսէլ սակէ առաջ Քրիստոսեան թարգմանած և Հրատարակած էր Գ. Վարուժանի «Հայերն Երգը» (Հրատ. Սըղեբա): Նմանապէս թարգմանած և Հրատարակած էր Վարուժանի «Վահայերն» թերթումը:

ՆՈՐ ԱՍՏՂ ՄԸ՝ ԼԻՁ ՍԱՐԵԱՆ

Ծրամակամ երգի երկնակամարին վրայ փայլի սկսած է ձոր հայ սուգ մը՝ Լիզ Սարեան (Սիմարեան): Ա՛՛՛ վից շարք շարունակաբար մամակցելով «Թիլի-Տիմանջի» մրցումին, համգիտակամերու և ժիւրիի միտայն ու

բոշուով առայն հանդիսացած է բայր մրցակիցներուն մէջ:

Վեցերորդ շաբաթը՝ Լիզ Սարեան կամովին հրաժարած է շարունակել մրցումը և իր առջին տեղը յամանած է Երկրորդ երգչուհիին, չնայապ որ օրիորդի մը. որ որեւէ հնարաւորութիւն պիտի չունենար կրկին փորձելու իր բայսուք, եւ թէ Լիզ իր տեղը չտար:

«Փառիփի» ընկերութիւնը արդէն հրատարակ համած է ազատագրութեան արուեստագիտական առայն սուր, որ կը բաղկանայ յոչ յաջող երգերէ.— «Լա Քորտ» և «Մի Մեքընան» (Երաժշտութիւն՝ Փոլ Սեգեան, խօսք՝ Փան֊Փազ Վարուժան), «Փը մը Սուվիէ» (Փոլ Սեգեան) և «Պայալայա» ժործ կառնարները:

Սուրբ Վերջերք՝ Լիզ Սարեան ամառան շրջապատյոյ կը սկսի (Յուլի և Օգոստոսի համար), Քոք տ՛Ազիւրի վրայ, Փազ Պրէլի և Ռիշար Անթոնի հետ:

Հայ երկրասարգ երգչուհիին որ գլխաւորաբար կ'երգէ հայ երկնակամարու երգեր, մեծ յաջողութեամբ կ'երգէ նաև՝ հայերէն երգեր: Մամակցումն փայլուն ապագայ կը նախատեսն Լիզ Սարեանի համար:

ՍՈՒՐԷՆ ԵՍԱՅԵԱՆ

ՏԱՂԱՆԻԱՒՈՐ ՀԱՅ ԱՐՈՒՅՏԱԳԷՏԸ

Սպանական մեծազոյն գեղարուեստական շաբաթաթերթերէն՝ «Բազմալիզու» հայ պարուզը, «Սուրէն» լաւագոյն թարգման (թարգմանիչ) պատրաստող պարուզը խորազրկեով գրականային լողուածներ Հրատարակած են հայազգի «Սուրէն Պէլիանէ» ծառայանի մասին: Հրատարակած են նաև անոր լուսանկարները:

Սուրէն ծառայան ծնած է Հայէպ, 25 ասորի առաջ: Արհեստով փորագրէ է: Դեռ պատանի մասնաւոր հակուած ցոյց առած է պարիչ Ռեւուրուան՝ Հայէպի մէջ սենեցած յարողութիւն, շոք ասորի առաջ, Դամակոսի մէջ ներկայացած

է սպանական պարսիւները հռչակուող ասոց ֆիլիսո Լոփէզի, սպանական պարսիւ Նեանե- լու համար: Պարուհիին համաժողովեամբ՝ Սու- րէն Սպանիա մեկնած և Ընծ սկսած է ժամա- ւոր դասեր առնել սպանացի հանրաժողով պա- րտնորդի:

Մախըրը հողայու համար սկսած է բաժ- րիւ պատրաստել և յաջողած է: Ենթերև իր համակերպի խառնուածքին և եթէ լիզու խտե- լուն՝ ախոր, Մարիտի մէջ նշանուող դէմք ժը դարձած է Սուրէն:

Քիւրգիմ, բարձրահասակ, ճկուն կազմուած- քով՝ Սուրէն երկու տարիէ ի վեր մաս կը կազ- մէ ֆիլիսո Լոփէզի պարսիւներին, որ ներկա- յիս երկու ամսուան համար շրջապատու ժը կը կատարէ Միացեալ Նահանգներու մէջ, սպանա- կան սքանչելի պարերը ներկայացնելու համար նիւ Ենթերև համալսարանին ցուցահանդէսին մէջ: Սպանիա վերադարձին՝ պիտի ժամանկցի Սպանիայ պարերու Փետրվային:

ԲԱՅՏԻ ՊԵՏՐՈՍԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԱԾ

Յրանակամ կառավարչիւնը, գնահատելով յայտնի դաշնակաւար Բաֆֆի Պետրոսեանի 35 տարուամ կրածուսական գործունէութիւնը և քը- բանակամ կրածուսական ուղիորդի մէջ ա- բանման համար անոր տարած աշխատանքը, յա- նադիմութեան և հաշտութեան վերջի կար- գի շահանքը շնորհած է անոր:

Այս շահանքին արձանագոս են՝ Ալպեր Եը- վայցեր, ժագլին Օրիւլ, Մարսել Փանիւլ և Փուլ -Էմիլ Վիքթոր:

ԼԻԲԱՆԱՀԱՅ ՆՎԱՐԻՉՆԵՐ
ՓԱՐԻՉԻ ՄԷՋ

Փարիզի Պալլէի ժերար Մուրիէ մէջ, Յու- նիս 1-ին ցուցակարուած են գրեները լիբանանցի նկարիչներու, որոնք մէջ կը գտնուին նաև չորս լիբանանցի նկարիչներ, չորսը Տիարայեցիներն, Փուլ Կերակոսեան, Պարիզեան և Փերանեան: չորսը բազմաթիւ ցուցահանդէսներ առած է Պէյրուսի մէջ և արժանացած արգար գնահա- տանքի անգլիական Լալ, Փրանսուայի կամ արար ժամուրդին կողմէ:

Ճեմարան յանդիմէն ետք, իր երկրորդական ուսումը կատարած է Պէյրուսի Լիւսին մէջ և սպա արձանագրուած Գեղարուեստից վարժարա- նը: Իր առաջին ցուցահանդէսը կազմակերպած է 1962-ին և արժանացած գնահատանքի և ջաշա- լներու: 1963-ին, շահած է Քրիստիոֆի տեսա- վանակի արձանագրու Ը. Մրցանակը:

Իր ներշնչման զլիաւոր աղբիւրն է բնական- ղական պատկերագրութիւնը. հմայուած է արթա- տալու նկերպչորով:

ԱԼԻՍ ՍԱՓՐԻՉ

ԵԶԱԿԻ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆ

Փարիզի շէֆֆիւս քերքը՝ հայ արուեստա- գիտուհիին մասին կը գրէ:


«Մէկ ամէն գերեզմանն է արդէն, կ'ըսէ ան- չնի ուզեր որ սիրին վրայ ալ կոխեն: Աճուշտ որ կը շարժանցէ, Բանի որ 45 տարեկան է սիրոյն և ամէն անգամ որ կ'երեւի հետատե- լին, կ'ողբումուի իր սեր ամէնէն անծ գերասա- նուհիներէն մէկը: Ե՞տա սէ գի թմարչէն և Ե՞տա Պէյրուսի հաշ, ճոյն յազարութիւնը ունե- ցաւ Յրանուա Մարիտի «Տեղեկ» մէջ, արուն գլխուար դերակատարուին իզու 26 Մայիսին:

Տիկին Ալիս Սաֆրիչի սուգարէզը (ժողովուով Պոլսեան) եզակի է, ինչպէս իր անճը: Պսոն տարի շարունակ թատերական սուգարէզի մէջ օ- տար երկիրներ շրջապատուներու կամ «աման- հարա» ներկայացուամերուն մասնակցել է հաշ, որուն երբէ հոգի ներկայ կ'ըլլային, 1960-ին հե- յատեսիլը զայն յանկարծ նրեամ կանց և ան- կէ ի վեր իմէ է որ կ'ըմտրէ իր կարմերը:

Կրակուս, անկալի ան կ'ըսէ. «Տարին մէկ կամ երկու անգամ պատեհութիւնը կ'ունենամ մտխըմարած դերա ստանձնելու, բայց ինչ մը մտնուող արուստիմ, որ չի համարատարուեր քննարկիչի այդ դերին մասին ունեցած զաղա- փարիմ, արգիւ է կը հանդիսանայ: Ամէն անգամ պէտք է պայտարիւ և յարքերմ:

Վերջերս, Մարիտ իրեն ըսաւ ճոյն հան ներ- կայացումը. «Տիկին, շատ կը յարգեմ ձեզ, բայց երբէ իմ հերասուհիս չէմ»:

Ճամ մը ետ սակայն Ալիս Սաֆրիչ յարա- մակած էր և Մարիտ իրանդալուսած՝ հետա- տեսիլէն դիտելով անոր իտալը:



ՇՆՈՐՀԱԿԱՎՈՒԹԵԱՄԲ ՍՏՆՅԱԾ ԵՆՔ

«Անապատի խորերէն», Արմէն Տատուր, Գահիրէ 1963 :

«Բանաստեղծութիւններ եւ պատմութիւններ», Զ. Միրզայեան, Թեհրան 1965 :

«Մատեան ցուի եւ հատուցման», Գ. Աղդարեան, Պէյրութ 1965 :

«Հայու բեկորներ», Վահրամ Մավեան, Լիզպոն 1965 :

La Montagne inspirée, Charles Corm, Beyrouth.

ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻԲԱՆԱՆ 20 Լ. ՈՍԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 7 ՏՈՂԱՐ
ՀԱՏԱՎԱՅԱՌ 2 Լ. ՈՍԿԻ



Վարչութեան կայտէ՛ւ-

DIKRAN KOUYOUMDJIAN
B. P. 587, Beyrouth - Liban

digitised by A.R.A.R.@